ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

BIBLE SOCIETY OF ARMENIA

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. ԵԶՆԻԿ ԱՐՔ. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

QUIZ ON BIBLICAL KNOWLAGE

(WITHIN UBS № 101490 PROJECT)

BIBLE TREASURY

I LEVEL

By

Marianna Apresyan

BIBLE SOCIETY OF ARMENIA

YEREVAN 2019

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

(ՄԱԸ № 101490 ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ)

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՇՏԵՄԱՐԱՆ

I ՓՈՒԼ

Պատրաստեց՝

Մարիաննա Ապրեսյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2019

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՇՏԵՄԱՐԱՆ, I փուլ, Երևան 2019, 200 էջ, 2000 օր.:

Պատրաստեց՝

Մարիաննա Ապրեսյանը, պ.գ.թ.; աստվածաբանության դոկտոր

Խմբագիրներ՝

Եզնիկ արքեպս. Պետրոսյան
Արշավիր Գաբուջյան

Ձևավորումը և էջադրումը

Յուլյանա Աբրահամյանի

Հրատարակվում է

Հայաստանի Աստվածաշնչային Ընկերության
հոգաբարձուների խորհրդի երաշխավորությամբ

Հեղինակային իրավունքները պաշտպանված են օրենքով: Առանց հրատարակչի հետ նախնական գրավոր համաձայնության չի թույլատրվում պատճենահանել գրքի ցանկացած մասը, պահել այն ԷՀՄ-ում, փոխանցել ցանկացած տեսքով կամ ցանկացած միջոցներով՝ էլեկտրոնային, մեխանիկական, ֆոտոպատճենի կամ այլ ձևով:

BIBLE TREASURY, I level, Yerevan 2019, 200 page, 2000 cop.

By Marianna Apresyan, Ph. D.

(Within UBS № 101490 project)

© Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն
© Bible Society of Armenia

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Աստվածաշնչի գիտելիքի վիկտորինային (մրցույթ) կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներից թիմեր՝ Հայ Եկեղեցու Պատմություն առարկայի ուսուցչի ղեկավարությամբ (Ուսուցիչները չեն մասնակցում մրցույթին):

Յուրաքանչյուր դպրոց կարող է ներկայացնել 1 թիմ՝ չորս աշակերտից կազմված: Ամեն թիմ իր միջից պետք է ընտրի թիմի ավագին, ով հիմնական մրցույթից հետո, երկու և ավելի թիմեր հավասար միավորներ ձեռք բերելու դեպքում, կմասնակցի Ավագների մրցույթին:

Առաջին փուլի մասնակից թիմերին, ըստ հերթականության, տրվում է 10-ական հարց, պատասխանի 3 տարբերակով, որոնցից 2-ը սխալ են, 1-ը՝ ճիշտ (Հարցի ճիշտ պատասխանը կարելի է գտնել դիմացի էջի վրա դրված տեքստը կարդալով): Ապա առավելագույն հավասար միավորներ հավաքած թիմերի ավագներին տրվում է ևս 5 հարց՝ առանց պատասխանի 3 տարբերակների:

Առավելագույն մեկ կամ ավելի ճիշտ պատասխաններ հնչեցրած թիմը (կամ՝ թիմերը) համարվում են հաղթող և անցնում երկրորդ փուլ:

RUC

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

OLD TESTAMENT

1. Քանի՞ գիրք ունի Հին Կտակարանը ըստ Հայ Եկեղեցու կանոնի:

ա. 39

բ. 27

գ. 48

2. Քանի՞ գիրք ունի Հին Կտակարանը ըստ Բոլորքական Եկեղեցիների կանոնի:

ա. 39

բ. 27

գ. 48

Երբայերեն Հին Կտակարանն ունի երկու կանոն՝ Ալեքսանդրյան, որն ընդունում է 48 գիրք և Պաղեստինյան, որն ընդունում է 39 գիրք: Հին Կտակարանի հայկական կանոնն ունի 48 գիրք, քանի որ հետևել է Յոթանասնից հունարեն թարգմանության Ալեքսանդրյան կանոնին:

Բողոքական եկեղեցիները Հին Կտակարանի թարգմանության ժամանակ օգտվել են եբրայական Պաղեստինյան կանոնից՝ ընդունելով Հին Կտակարանի միայն 39 գրքերը:

Հին Կտակարանի գրքերն են.

Ծննդոց
Ելք
Ղևտական
Թվեր
Երկրորդումն Օրինաց
Հեսու
Դատավորներ
Հռութ
Ա Թագավորների
Բ Թագավորների
Գ Թագավորների
Դ Թագավորների
Ա Մնացորդաց
Բ Մնացորդաց
Ա Եզրաս
Բ Եզրաս
Նեեմի
Եսթեր
Հուդիթ
Տովբիթ
Ա Մակաբայեցիներ
Բ Մակաբայեցիներ
Գ Մակաբայեցիներ
Սաղմոսներ
Առակներ
Ժողովող
Երգ երգոց
Իմաստություն Սողոմոնի
Սիրաք
Հոբ
Եսայի
Օսեե
Ամոս
Միքիա
Հովել
Աբդիու
Հովնան
Նավում
Ամբակում
Սոփոնիա
Անգե
Զաքարիա
Մաղաքիա
Երեմիա
Բարուք
Ողբ
Դանիել
Եզեկիել

3. Ե՞րբ է Աստվածաշունչը թարգմանվել գրաբար հայերենի

ա. 1-ին դարի վերջին

բ. 301-330թթ.

գ. 5-րդ դարի կեսին

4. Ե՞րբ է տպագրվել առաջին հայերեն Աստվածաշունչը

ա. 1512 թ.

բ. 1666թ.

գ. 1805թ.

5. Որտե՞ղ է տպագրվել առաջին հայերեն Աստվածաշունչը

ա. Ամստերդամում

բ. Վենետիկում

գ. Սանկտ Պետերբուրգում

Ս. Գրիգոր Լուսավորչից (301թ.) մինչև հայոց գրերի գյուտը (405- 406 թթ.) հայկական եկեղեցիներում արարողությունների ժամանակ հավատացյալների համար Հայաստանի հարավ-արևելյան նահանգներում, որոնք սահմանակից էին Պարսկաստանին, Աստվածաշունչը բանավոր թարգմանվում էր ասորերենից, իսկ Բյուզանդիային սահմանակից՝ արևմտյան նահանգներում՝ հունարենից: Բանավոր թարգմանության անհարմարությունը Սահակ կաթողիկոսին ու Մեսրոպ Մաշտոցին թելադրեցին Աստվածաշունչը գրավոր կերպով ունենալու անհրաժեշտությունը:

405-406թթ. Գրերի գյուտից հետո Եդեսիայում ձեռնարկվեց Աստվածաշնչի հայերեն առաջին թարգմանությունը՝ ասորերեն լեզվից: Թարգմանության աշխատանքներում Մաշտոցին օգնել են նրա աշակերտներից Հովհան Եկեղյացեցին և Հովսեփ Պաղնացին, իսկ Հայաստանում թարգմանական գործը շարունակել է Սահակ կաթողիկոսն այլ աշակերտների հետ: 431թ. Եփեսոսի Տիեզերական ժողովից հետո հայ թարգմանիչ վարդապետները Հայաստան վերադառնալով՝ իրենց հետ բերում են հունարեն Ս. Գրքի ընտիր մի օրինակ, որով և սրբագրվում է «Փութանակի» թարգմանությունը:

Առաջին տպագիր Աստվածաշունչը հրատարակել է Ոսկան վարդապետ Երևանցի 1666թ. Ամստերդամում: Տպագրությունը սկսվել է 1666թ. մարտի 11-ին և ավարտվել 1668 թ. հոկտեմբերի 13-ին: Այն բաղկացած է 1462 երկսյուն էջերից և 159 պատկերներից: Սրա հիմքը 1295թ. Հեթում Բ թագավորի պատվերով ընդօրինակված ձեռագիրն է: Այս բնագիրը Ոսկան Երևանցին համեմատել է Աստվածաշնչի լատիներեն Վուլգաթա թարգմանության հետ:

Ոսկան Երևանցին հրատարակված Աստվածաշնչի մի շքեղ օրինակ է պատվիրել հոլանդացի նշանավոր արվեստագետ-կազմարար Ալբերտ Մագնուսին՝ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս 14-րդին նվիրելու համար: Այն այժմ պահվում է Փարիզի Ազգային գրադարանում:

6. Աստված քանի՞ օրում արարեց աշխարհը

ա. 6

բ. 7

գ. 4

7. Ո՞րերորդ օրը Աստված ստեղծեց մարդուն

ա. 1

բ. 7

գ. 6

8. Աստված Ադամին պատվիրեց չուտել ո՞ր ծառից

ա. Կենաց ծառից

բ. Բարու և չարի գիտության ծառից

գ. Եդեմական պարտեզի ծառից

9. Ի՞նչ է նշանակում Եվա

ա. Լույս

բ. Կյանք

գ. Կին

Հին Կտակարանը սկսվում է արարչագործության ուշագրավ պատմությամբ: Սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը, ապա լույսը զատեց խավարից՝ դրանց գիշեր և ցերեկ անվանելով: Վեց օրվա ընթացքում Աստված ստեղծեց երկնային մարմիններին, ողջ բուսական ու կենդանական աշխարհը և մարդուն, իսկ յոթերորդ օրը հանգստացավ: Վեցերորդ օրը Նա երկրի հողից մարդ ստեղծեց, որի դեմքին կենդանության շունչ փչեց և նա կենդանի էակ դարձավ: Աստված նրան Ադամ անվանեց: Սակայն երբ Նա տեսավ, որ Ադամը միայնակ է, որոշեց նրա համար իբրև օգնական կին ստեղծել: Ադամի կողոսկրից Աստված կին ստեղծեց, որին Եվա անվանեց, որ նշանակում է «Կյանք»:

Աստված նրանց համար գեղեցիկ պարտեզ տնկեց, որտեղ նրանք պետք է ապրեին: Այնտեղ բազմաթիվ պտղատու ծառեր կային: Տերը թույլ տվեց նրանց ուտել բոլոր ծառերի պտուղներից, բացի մեկից: Դա բարու և չարի գիտության ծառն էր, որ գտնվում էր պարտեզի մեջտեղում: Աստված ասաց. «Եթե բարու և չարի գիտության ծառի պտղից ուտեք, կմեռնեք»:

10. Ո՞ր մեղքը դրդեց Կայենին սպանելու Աբելին

ա. Բարկությունը

բ. Գողությունը

գ. Ստախոսությունը

11. Ո՞վ անիծեց Կայենին եղբորը սպանելու մեղքի համար

ա. Կայենի ծնողները

բ. Հողը

գ. Աստված

Ադամը և Եվան դրախտից արտաքսվելուց հետո մի զավակ ունեցան, որին Կայեն կոչեցին: Այնուհետև մի զավակ էլ ունեցան և նրան Աբել կոչեցին: Կայենը հողագործ էր, իսկ Աբելը՝ հովիվ: Մի օր Կայենը հողի բարիքներից ընծա բերեց Աստծուն, իսկ Աբելը՝ իր առաջնեկ ու պարարտ ոչխարներից մեկը: Աստված բարյացակամորեն ընդունեց Աբելի ընծան, որովհետև նա զոհաբերելու համար ընտրել էր իր ունեցածից լավագույնը, իսկ Կայենի ընծան ուշադրության չարժանացրեց: Կայենը բարկացավ և նրա դեմքը մռայլվեց:

Մի օր նա ասաց Աբելին. «Արի՛ դաշտ գնանք»: Այնտեղ Կայենը հարձակվեց Աբելի վրա և սպանեց նրան:

Այդ ժամանակ լսվեց Աստծու ձայնը, որ հարցրեց նրան. «Որտե՞ղ է քո եղբայր Աբելը»: Իսկ Կայենը պատասխանեց. «Ի՞նչ իմանամ: Մի՞թե ես եղբորս պահակն եմ»:

Բայց Աստված կրկին խոսեց. «Ինչու՞ այդպես արեցիր, Կայե՛ն: Քո եղբոր արյունը երկրից կանչում է ինձ: Եվ այն հողը, որ ընդունեց նրա արյունը, քեզ անիծելու է: Դու այն կմշակես, իսկ նա քեզ պտուղ չի տա: Ինչքան որ ապրես, դողալու և հառաչելու ես»:

Կայենը հեռացավ Տիրոջ առաջից, սակայն Աստված յուրահատուկ ողորմածությամբ նշան դրեց Կայենի վրա, որպեսզի նրան տեսնողները չսպանեն նրան: Կայենը հեռացավ Աստծու ներկայությունից և բնակվեց Նայիդ երկրում՝ Եդեմի դիմաց:

12. Ինչո՞վ զբաղվեց Նոյը ջրհեղեղից անմիջապես հետո

ա. Վրանագործությամբ

բ. Անասնապահությամբ

գ. Այգեգործությամբ

Նոյը 600 տարեկան էր, երբ ավերիչ ջրհեղեղ եղավ երկրի վրա, միայն ութ մարդ փրկվեցին մահից: Ջրհեղեղից հետո Նոյը դուրս եկավ տապանից, որն իջել էր «Արարատ լեռան» վրա և իր որդիների հետ սկսեց հող մշակել: Նորից բույսեր ու ծառեր աճեցրին: Նոյն առաջինը խաղողի այգի տնկեց ու գինի պատրաստեց: Երբ մի անգամ Նոյի կրտսեր որդի Քամը վրանի մեջ հորը հարբած և մերկ պառկած տեսավ, ծիծաղեց նրա վրա և այդ մասին պատմեց ավագ եղբայրներին: Սակայն Սեմն ու Հաբեթն առանց հայացքները հոր կողմը դարձնելու, հագուստով ծածկեցին նրան:

13. Ի՞նչ էր Աբրահամի և Սառայի որդու անունը

ա. Նոյ

բ. Դավտ

գ. Իսահակ

14. Աբրահամը Իսահակի փոխարեն ի՞նչ զոհաբերեց

ա. Խոյ

բ. Արջառ

գ. Աղավնի

Մի օր, երբ Աբրահամը նստել էր իր վրանի առջև, Աստված՝ երեք անծանոթների տեսքով, նրան այցի եկավ: Երբ Աբրահամը նրանց տեսավ, անմիջապես ընդառաջ վազեց, մինչև գետին խոնարհվեց և ճաշի հրավիրեց: Նրանք շնորհակալություն հայտնեցին և նստեցին վրանի առաջ՝ մի հով տեղում: Երբ ճաշն ավարտվեց, հյուրերից մեկն ասաց. «Եկող տարի այս նույն ժամանակ նորից կգամ, և քո կին Սառան որդի կունենա»:

Սառան լսեց, թե ինչ ասաց այդ մարդը, սակայն չկարողացավ հավատալ իր լսածին և թաքուն ծիծաղեց. «Հիմա՛, երբ ծերացել ենք, չենք կարող այլևս երեխաներ ունենալ»: Մարդն ասաց. «Ինչու՞ Սառան ծիծաղեց: Աստծու համար ոչինչ անհնարին չէ՛»:

Մեկ տարի անց Աստված կատարեց իր խոստումը՝ Սառան մի որդի ծնեց: Նրան անվանեցին Իսահակ, որ նշանակում է«ծիծաղ», քանի որ Սառան ծիծաղեց, երբ լսեց, թե մեկ տարի անց որդի են ունենալու:

***

Մի անգամ Աստված Աբրահամին փորձելու համար պատվիրեց զոհաբերել իր որդուն՝ Իսահակին: Աբրահամը լուռ հնազանդվեց Աստծու կամքին: Երբ Աբրահամը Իսահակին տարավ Աստծու ցույց տված վայրը, զոհասեղանին պառկեցրեց իր միակ զավակին և երկարեց ձեռքը, որ վերցնի դանակը և զոհի իր որդուն: Այդ պահին Տիրոջ հրեշտակը երկնքից ձայն տվեց նրան ու ասաց. «Աբրահա՛մ, ձեռք մի՛ տուր պատանուն և նրան մի՛ վնասիր, որովհետև այժմ իմացա, որ դու երկյուղ ունես Աստծու նկատմամբ և ինձ համար չխնայեցիր նույնիսկ քո սիրելի որդուն»:

Աբրահամը բարձրացրեց աչքերն ու տեսավ, որ ծառից մի խոյ է կախված եղջյուրներից: Աբրահամը մոտեցավ, վերցրեց խոյն ու այն ողջակեզ մատուցեց իր որդի Իսահակի փոխարեն:

15. Իսահակն ո՞ւմ կնության առավ

ա. Ռաքելին

բ. Ռեբեկային

գ. Ծավային

16. Ովքե՞ր էին Իսահակի որդիները

ա. Սեմ և Քամ

բ. Բենիամին և Հովսեփ

գ. Եսավ և Հակոբ

Աբրահամը խոր ծերության էր հասել, իսկ Իսահակը մեծացել էր: Աբրահամը որոշեց որդուն ամուսնացնել: Նա իր ծառա Եղիազարին ուղարկեց այն երկիրը, որտեղ ինչ-որ մի ժամանակ Սառայի հետ ապրել էին, որ այնտեղից Իսահակի համար կին ընտրի:

Երբ Եղիազարը հասավ այնտեղ, ուղտերին թողեց քաղաքից դուրս գտնվող մի աղբյուրի մոտ հանգստանալու: Նա աղոթեց Աստծուն օգնել իրեն Իսահակի համար կատարյալ հարսնացու գտնելու: Աղոթքը դեռ չէր ավարտել, և ահա հայտնվում է Ռեբեկան՝ մի շատ գեղեցիկ աղջիկ, որ սափորն ուսին եկել էր աղբյուր ջուր տանելու: Այդժամ Եղիազարն առաջ վազեց և ասաց. «Թո՛ղ ինձ սափորիցդ մի քիչ ջուր խմեմ»: Ռեբեկան պատասխանեց. «Խմի՛ր, ուղտերիդ համար էլ ջուր կհանեմ, որ ծարավը հագեցնեն»:

Եղիազարը նայեց նրան, հետո ոսկե զարդեր նվիրեց ու հայտնեց իր այցի նպատակը: Շուտով Ռեբեկան, տալով իր համաձայնությունը և ստանալով իր ծնողների օրհնությունը՝ Աբրահամի ծառայի հետ մեկնեց, որպեսզի ամուսնանա Իսահակի հետ:

Ռեբեկան և Իսահակը երկու որդիներ ունեցան՝ Եսավ և Հակոբ: Նրանք զույգեր էին, սակայն իրենց ծնունդից սկսած եղբայրները բոլորովին տարբեր էին: Երբ Հակոբը ծնվեց, նա ձեռքով բռնել էր եղբոր գարշապարից: Եսավը շիկահեր էր և թավ մազեր ուներ:

Երբ եղբայրները մեծացան, Եսավը շատ լավ որսորդ դարձավ: Նրան դուր էր գալիս անտառներ ու դաշտեր որսի դուրս գալ: Իսահակը Եսավին յուրովի էր սիրում, որովհետև նա իրեն որսի միս էր բերում: Իսկ Հակոբը հանդարտ մարդ էր, նրան դուր էր գալիս տանը մնալ: Հակոբը հովիվ դարձավ, նա հոգ էր տանում ոչխարներին ու այծերին:

17. Հակոբն ո՞ւմ մոտ տարիներով ծառայեց

ա. Լաբանի

բ. Ղովտի

գ. Հոթորի

18. Ո՞ւմ հետ ամուսնացավ Հակոբը

ա. Լիայի և Ռաքելի

բ. Դինայի

գ. Թամարի

19. Ովքե՞ր էին Հակոբի կրտսեր որդիները

ա. Քամ և Հաբեթ

բ. Մերար և Կահաթ

գ. Հովսեփ և Բենիամին

Երբ Հակոբը առավ եղբոր ավագությունը և խորամանկությամբ ստացավ հոր օրհնությունը, Եսավի բարկությունից խուսափելու համար, իր մոր՝ Ռեբեկայի խորհրդով, հեռացավ Խառան, իր քեռի Լաբանի մոտ: Լաբանը երկու դուստր ուներ՝ Լիան և Ռաքելը:

Հակոբը սիրեց Ռաքելին և ասաց քեռուն. «Տու՛ր ինձ կնության քո դուստր Ռաքելին, և ես քեզ համար յոթ տարի ձրի կաշխատեմ»: Լաբանը համաձայնվեց:

Երբ ժամանակը եկավ, Լաբանը հարսանեկան խնջույք կազմակերպեց: Հարսի դեմքը ծածկված էր երկար ու թանձր քողով, և Հակոբին չէր թույլատրվում տեսնել հարսի երեսը: Հաջորդ առավոտ Հակոբը տեսավ, որ Ռաքելը չէր հարսը, այլ Լիան՝ նրա ավագ քույրը, ով այնքան էլ գեղեցիկ չէր: Նա բարկացած գնաց Լաբանի մոտ և ասաց.

- Յոթ տարի աշխատեցի, որպեսզի Ռաքելին կնության վերցնեմ: Ինչու՞ ինձ խաբեցիր:

- Մեր սովորության համաձայն նախ ավագ քույրն է ամուսնանում: Կարող ես նաև Ռաքելի հետ ամուսնանալ, սակայն պետք է ևս յոթ տարի ինձ համար աշխատես, - պատասխանեց Լաբանը:

Այդպես Հակոբն ամուսնացավ նաև Ռաքելի հետ և ևս յոթ տարի ձրի աշխատեց:

Լիան Հակոբի համար շատ զավակներ ծնեց: Հակոբն իր սիրելի կնոջից՝ Ռաքելից երկու որդիներ ունեցավ՝ Հովսեփին և Բենիամինին, որոնց շատ էր սիրում: Ռաքելը մահացավ Բենիամինին ծնելու ժամանակ:

20. Որտե՞ղ ծնվեց Մովսեսը

ա. Սինայում

բ. Քանաանում

գ. Եգիպտոսում

21. Ծնողները ինչի՞ մեջ դրեցին մանուկ Մովսեսին

ա. Թփերի

բ. Մսուրի

գ. Զամբյուղի

22. Ո՞վ գտավ մանուկ Մովսեսին

ա. Փարավոնի նաժիշտը

բ. Փարավոնի կինը

գ. Փարավոնի դուստրը

Երբ իսրայելացիները գերության մեջ էին Եգիպտոսում, փարավոնը հրաման արձակեց իսրայելացիների նորածին արու զավակներին սպանել, որովհետև իսրայելացիներն այդ երկրում բազմամարդ էին դարձել և զորացել: Այդ ժամանակ Ղևիի ցեղից մի կին հղիացավ և արու զավակ ծնեց: Տեսնելով, որ նա կայտառ է, երեք ամիս թաքցրեց նրան: Երբ այլևս չէին կարողանում թաքցնել, նրա մայրն առավ եղեգյա մի զամբյուղ, ծեփեց այն ձյութով, մանկանը դրեց դրա մեջ և գետափին՝ ծանծաղուտ մի տեղում թողեց: Մանկան քույրը հեռվից հետևում էր՝ տեսնելու, թե ի՛նչ է լինելու նրա հետ: Պատահեց, որ փարավոնի դուստրն իջավ գետում լվացվելու և զամբյուղից եկող լացի ձայնը լսելով՝ բացեց այն ու գիրկն առավ երեխային:

- Սա իսրայելացիների երեխաներից է, - ասաց փարավոնի դուստրը, որը զավակ չուներ:

Մանկան քույրը՝ Մարիամը դուրս եկավ թաքստոցից և ասաց.

- Ուզու՞մ եք իսրայելացի դայակ բերեմ, որ խնամի նրան:

Արքայադուստրը հավանություն տվեց, և Մարիամը գնաց մորը կանչելու: Մայրը խնամեց իր մանկանը, մինչև որ նա մեծացավ: Մովսեսն ապրեց պալատում՝ որպես արքայադստեր որդեգիր:

23. Ո՞վ էր Մովսեսի կինը

ա. Մեղքան

բ. Սեփորան

գ. Մարիամը

24. Ո՞վ էր Հոթորը

ա. Մովսեսի հայրը

բ. Մովսեսի կնոջ հայրը

գ. Մովսեսի եղբայրը

25. Ի՞նչ պաշտոն ուներ Հոթորը

ա. Մոգ էր

բ. Քուրմ էր

գ. Մարգարե էր

26. Ինչպե՞ս առաջին անգամ Աստված հայտնվեց Մովսեսին

ա. Լույսի սյան տեսքով

բ. Ճանթի տեսքով

գ. Անկեզ մորենու միջով

27. Ո՞րն էր Աստծու շնորհիվ Մովսեսի գործած առաջին հրաշքը

ա. Ժայռից ջուր բխեցրեց

բ. Նրա գավազանը օձ դարձավ

գ. Երկնքից անձրև բերեց

Մի օր Մովսեսը գնաց իր հայրենակից իսրայելացիներին տեսնելու, որոնք իբրև ստրուկներ խիստ էին աշխատում: Այդ ժամանակ տեսավ, որ մի եգիպտացի ծեծում է իր հայրենակիցներից մեկին: Նա վրդովվելով՝ սպանեց եգիպտացուն և նրան թաքցրեց ավազի մեջ: Երբ այս հայտնի դարձավ փարավոնին, պատժից խուսափելու համար Մովսեսը փախավ Մադիան, որտեղ ամուսնացավ մադիանացիների քրմի՝ Հոթորի դստեր՝ Սեփորայի հետ և սկսեց արածեցնել աներոջ ոչխարները:

Մի օր նա հոտերը արածացնելու տարավ Քորեբ՝ Աստուծո լեռը: Մովսեսը տեսավ, որ մի մորենի կրակով վառվում է, բայց չի կիզվում: Հանկարծ մորենու միջից Աստված ասաց Մովսեսին.

- Ահա Իսրայելի որդիների աղաղակը հասել է ինձ, և տեսա այն նեղությունը, որով եգիպտացիները նեղեցին նրանց: Արդ, արի՛ առաքեմ քեզ եգիպտացիների արքայի՝ փարավոնի մոտ, որ հանես իմ ժողովրդին՝ Իսրայելի որդիներին, եգիպտացիների երկրից:

Սակայն Մովսեսը վախեցավ, որ դա իրեն չի հաջողվի անել, որ իսրայելացիները չեն հավատա իրեն և որ ինքը Փարավոնի համար աննշան մեկն է: Այդ ժամանակ Աստված պատասխանեց Մովսեսին.

- Ես նա եմ, որ Է: Ասա՛ իսրայելացիներին, որ ինձ ձեզ մոտ է ուղարկել Նա, որ Է: - Հետո Աստված ասաց Մովսեսին. - Գավազանը, որ ձեռքումդ բռնել ես գցի՛ր գետնին:

Մովսեսն այն գետնին գցեց, և գավազանը օձ դարձավ: Մովսեսը վախեցավ և փախավ: Բայց Աստված ասաց նրան.

- Ձեռքդ մեկնի՛ր և բռնի՛ր դրա պոչից:

Մովսեսը բռնեց, և այն դարձյալ նրա ձեռքում գավազան դարձավ: Այդ ժամանակ Աստված ասաց Մովսեսին.

- Իսրայելացիներին ցո՛ւյց տուր գավազանով այս հրաշքը, և այդ կերպ քեզ կհավատան:

28. Փարավոնի մոտ ընդունելությանը ինչի՞ վերածվեց Ահարոնի գավազանը

ա. Ծաղկած ծառի ճյուղի

բ. Վիշապի

գ. Այրող շանթի

29. Քանի՞ պատուհասներ հարվածեցին եգիպտացիներին

ա. 10

բ. 7

գ. 40

Մովսեսն արեց այն, ինչ նրան ասաց Աստված. ընտանիքի հետ գնաց Եգիպտոս և այնտեղ հանդիպեց իր եղբայր Ահարոնի հետ: Նա Ահարոնին պատմեց, որ Աստված իրեն պատվիրել է իսրայելացիներին դուրս հանել Եգիպտոսից: Այնուհետև Մովսեսն ու Ահարոնը գնացին փարավոնի մոտ և ասացին, որ Տերը՝ Իսրայելի Աստվածը պատվիրել է, որպեսզի Փարավոնը թույլ տա իր ժողովրդին գնալու անապատ և զոհ մատուցելու:

Փարավոնը, վախենալով, որ նրանք ետ չեն վերադառնա, մերժեց Աստծու պատվերը, իսկ Մովսեսին և Ահարոնին պալատից վռնդեց: Նա զայրանալով՝ հրամայեց իսրայելացիներին պատժի ենթարկել՝ նրանց ավելի խիստ աշխատեցնելով:

Երբ Մովսեսն ու Ահարոնը երկրորդ անգամ գնացին Փարավոնի մոտ, վերջինս նրանցից պահանջեց հրաշք գործել՝ ապացուցելու համար, որ Աստված է նրանց ուղարկել: Այդ ժամանակ Ահարոնը գավազանը նետեց փարավոնի առջև, և այն վիշապի վերածվեց:

Չնայած այս ամենին, ինչպես որ Աստված ասել էր, փարավոնի սիրտը դեռ տեղից չէր շարժվում և նրանց չէր լսում: Արդ՝ Փարավոնին պատժելու համար Աստված Եգիպտոսին տաս պատուհասներով հարվածեց:

30. Ինչի՞ տեսքով էր Աստված անապատում առաջնորդում իսրայելացիներին

ա. Լույսի շողի

բ. Ամպի և հրե սյան

գ. Կայծակի

31. Անապատում Աստված ինչո՞վ կերակրեց ժողովրդին

ա. Կաթ ու մեղրով

բ. Մանանայով ու լորամարգիներով

գ. Մեղրով ու մորեխներով

Մովսեսին հաջողվեց իսրայելացիներին դուրս բերել Եգիպտոսից, սակայն Աստծու խոստացած երկիրը հասնելու համար նրանք պետք է երկար ճանապարհ անցնեին անապատով: Անապատում քառասուն տարի դեգերումների ընթացքում Աստված առաջնորդում էր իր ժողովրդին, Նա ցերեկը հայտնվում էր ամպի տեսքով, իսկ գիշերը՝ հրե սյան, որպեսզի նրանց լուսավորի, և գիշեր-ցերեկ գնան:

Ժողովրդի մոտ եղած սննդի պաշարը սպառվեց, և նրանք սկսեցին տրտնջալ և դժգոհել Մովսեսին՝ ասելով. «Ավելի լավ կլիներ Տիրոջ հարվածներից մահանայինք եգիպտացիների երկրում, երբ մսով լի կաթսաների մոտ էինք նստում ու կուշտ հաց ուտում, քան բերեիք մեզ այս անապատը, որ ողջ ժողովրդին սովամահ անեք»: Եվ Տերն ասաց Մովսեսին. «Ահա ես ձեզ համար հաց եմ տեղացնելու երկնքից: Ժողովուրդը թող ելնի ու հավաքի այն, ինչքան անհրաժեշտ է յուրաքանչյուր օրվա համար»:

Երեկոյան լորամարգիների երամը եկավ և ծածկեց բնակատեղին: Իսրայելացիները նրանց հեշտությամբ բռնում, եփում և ուտում էին:

Առավոտյան, երբ ցողը վերանում էր բանակատեղիից, անապատի երեսին, սպիտակ, եղյամի նման մի բան եղավ: Երբ Իսրայելի որդիները տեսան այն, իրար ասացին. «Ի՞նչ է սա»: Մովսեսն ասաց նրանց. «Դա այն հացն է, որ Տերը տվեց ձեզ ուտելու: Եվ այս է Տիրոջ պատվերը. “Յուրաքանչյուր ոք դրանցից թող հավաքի այնքան, որքան անհրաժեշտ է՝ ըստ ձեր ընտանիքների շնչերի թվի: Հավաքե՛ք ըստ յուրաքանչյուր վրանում գտնվող մարդկանց թվի”»: Իսրայելացիներն այն Մանանա անվանեցին, որ համեղ էր ինչպես մեղրաբլիթը:

32. Իսրայելացիներն անապատում ի՞նչ պատրաստեցին Աստծու հետ հաղորդակցվելու համար

ա. Ուխտի Տապանակ

բ. Զոհասեղան

գ. Վկայության խորան

Անապատում Աստված Մովսեսին պատվիրեց իր համար հատուկ մի խորան պատրաստել, որն իբրև սրբարան պիտի լիներ: Նա մանրամասն ցուցումներ տվեց, թե ինչպիսին և ինչ նյութերով պիտի լինի խորանը: Այն պատրաստվելու էր այծի մազերից հյուսված վարագույրներով, որոնց վրա կարմիր ներկված խոյի մորթուց ծածկոցներ էր զցվելու: Այն կոչվեց Վկայության խորան, որ պիտի լիներ այն վայրը, ուր Իսրայելացիները կարող էին հաղորդակցվել Աստուծո հետ:

Այնուհետև Մովսեսը պետք է կարծր փայտից մի տապանակ կառուցեր 120 սմ երկարությամբ և 67 սմ լայնությամբ ու բարձրությամբ: Այն պատվելու էր մաքուր ոսկով և մաքուր ոսկուց կափարիչ էր ունենալու: Այդ տապանակի մեջ պիտի դրվեր Մովսեսին տրված Տասը Պատվիրանների քարե տախտակները:

Տերը պահանջեց, որ կարծր փայտից և մաքուր ոսկով պատած փոքրիկ մի սեղան ևս պատրաստեն, որ իրեն ընծայված հացերը դրա վրա դրվեն: Նա պատվիրեց նաև, որ մաքուր ոսկուց մի աշտանակ պատրաստեն:

Սրբարանը վարագույրներով երկու մասի պիտի բաժանվեր: Մուտքի մասը Սրբությունն էր, իսկ ետնամասը՝ Սրբություն Սրբոցը, որտեղ տեղադրվելու էր Ուխտի տապանակը: Սրբարանում պիտի դրվեր Աստծուն ընծայված Առաջավորության 12 հացերով սեղանը:

33. Արդյո՞ք Եգիպտոսից ելքի ժամանակ Սեփորան հետևեց Մովսեսին

ա. Սեփորան իսրայելացիների հետ դուրս ելավ Եգիպտոսից

բ. Սեփորան չհետևեց Մովսեսին և հեռացավ նրանից

գ. Սեփորան իր հոր տանն էր

Մադիամի քուրմ Հոթորը՝ Մովսեսի աները, լսեց այն ամենի մասին, ինչ Տերն արել էր Մովսեսին ու Իսրայելին՝ իր ժողովրդին. քանի որ Տերը Իսրայելին հանել էր Եգիպտոսից:

Հոթորը՝ Մովսեսի աները, վերցրեց Սեփորային՝ Մովսեսի կնոջը, որ ուղարկվել էր իր մոտ, ու նրա երկու որդիներին, որոնցից մեկի անունը Գերսամ էր և նշանակում էր «Պանդուխտ էի օտար երկրում», իսկ երկրորդի անունը՝ Եղիազար, որ նշանակում էր «Իմ հոր Աստվածը իմ օգնականն է, և նա փրկեց ինձ փարավոնի ձեռքից»: Հոթորը՝ Մովսեսի աները, նրա կինը և նրա որդիները եկան Մովսեսի մոտ՝ անապատ, որտեղ նա բնակվում էր Աստծու լեռան վրա: Հայտնեցին Մովսեսին՝ ասելով. «Ահա քո աները՝ Հոթորը, գալիս է քեզ մոտ, և նրա հետ են քո կինը և քո երկու որդիները»: Մովսեսն ընդառաջ ելավ իր աներոջը, երկրպագեց նրան և համբուրեց նրան: Ողջագուրվեցին խաղաղությամբ, և նրանց տարավ իր վրանը: Եվ Մովսեսն իր աներոջը պատմեց այն ամենը, ինչ Իսրայելի համար Տերն արել էր փարավոնի ու եգիպտացիների հետ, ինչպես նաև այն բոլոր դժվարությունները, որ իրենք կրել էին ճանապարհին, և թե Տերն ինչպե՛ս փրկեց իրենց: Հոթորն ուրախացավ այն բոլոր բարեգործությունների համար, որ Տերն արել էր նրանց և փրկել եգիպտացիների ձեռքից ու փարավոնի ձեռքից: Եվ Հոթորն ասաց. «Օրհնյա՛լ է Տերը, որ փրկեց սրանց եգիպտացիների ձեռքից ու փարավոնի ձեռքից, օրհնյա՛լ է Տերը, որ փրկեց ժողովրդին եգիպտացիների ձեռքի տակից: Արդ գիտեմ, որ Տերն ավելի մեծ է, քան բոլոր աստվածները, քանի որ նա ազատեց նրանց բռնացողների ձեռքից»: Հոթորը՝ Մովսեսի աները, ողջակեզ ու զոհ մատուցեց Աստծուն: Եվ Մովսեսը, Ահարոնն ու Իսրայելի բոլոր ծերերը Մովսեսի աներոջ հետ գնացին հաց ուտելու Տիրոջ առջև:

34. Ինչի՞ մասին է Ծննդոց գիրքը

ա. Իսրայելի Ավետյաց երկիր մտնելու

բ. Մովսիսական Օրենքի ստեղծման

գ. Աշխարհի արարումից մինչև Եգիպտոսում Իսրայելի հաստատվելու

Ծննդոցը Աստվածաշնչի առաջին գիրքն է, այն հայտնի է նաև «Գիրք Արարածոց» անվամբ: Բաղկացած է 50 գլուխներից: Ծննդոց գիրքը ներկայացնում է աշխարհի ստեղծումից մինչեւ Եգիպտոսում Իսրայելի հաստատվելու պատմությունը՝ հատուկ շեշտադրելով Աստծո Ուխտի կնքումն Աբրահամի ու նրա սերնդի հետ:

Այս գիրքում մանրամասն նկարագրված է աշխարհի և մարդու արարչագործությունը, Ադամի և Եվայի անկման ու դրախտից արտաքսման, մահվան ու տառապանքի առաջացման, ջրհեղեղի, բաբելոնյան աշտարակաշինության, ազգերի կազմավորման և նրանց աշխարհով մեկ սփռվելու, Աստծու կողմից հրեա ժողովրդի առանձնացման, նրա նախահայրերի՝ Աբրահամի ընտրության, Իսահակի, Հակոբի մասին պատումները:

35. Ինչի՞ մասին է Ղևտացիների գիրքը

ա. Ղևիի սերնդի պատմության

բ. Ղևտացիների Ավետյաց երկրից ժառանգություն ստանալու պատմության

գ. Մովսիսական կրոնի ծիսական օրենքների ժողովածու

Ղևտացիների գիրքը Աստվածաշնչի երրորդ գիրքն է: Բաղկացած է 27 գլուխներից:

Թեև գրքում ղևտացիների մասին քիչ է նշվում, բայց «Ղևտացիներ» անունը տեղին է, քանի որ գիրքը բաղկացած է հիմնականում Ղևիի ցեղից սերած ղևտացի քահանաների համար նախատեսված կանոններից ու օրենքներից, որոնք քահանաները պետք է սովորեցնեին ժողովրդին: Ավելի ուշ հրեաներն այն անվանել են «Քահանաների օրենք» կամ «Ընծաների օրենք»:

Այս գիրքը գրեթե ամբողջությամբ օրենսդրական է, որի գլխավոր գաղափարն է Իսրայելից Աստծու ժողովուրդ կազմելը: Գրքում հանգամանորեն շարադրվել և իր հետագա զարգացումն է գտել Ելքում տրված օրենքը: Նրանում զետեղված են զոհաբերությանը, քահանաներին, սննդին, հիվանդություններին, մաքրությանն ու անմաքրությանը, իսրայելացիների անձնական սրբությանը, ծեսերին և տոներին վերաբերող կանոններ:

36. Ինչի՞ մասին է Թվեր գիրքը

ա. Անապատում իսրայելացիների մարդահամարի

և 40 ամյա դեգերումների

բ. Ավետյաց երկիր մուտքի

գ. Եգիպտոսից ելքի

Աստվածաշնչում Ղևտացիներ գրքին հաջորդում է Թվեր գիրքը, որ բաղկացած է 36 գլուխներից: Գիրքն այսպես է կոչվում երկու մարդահամարների պատճառով, որոնք նկարագրված են գրքի առաջին 3 գլուխներում: Մյուս գլուխներում պատմվում է անապատում Իսրայելի ժողովրդի 40-ամյա դեգերումների մասին, շարադրված է օրենքի բովանդակությունը, որ տրվեց Իսրայելին անապատով անցնելու ժամանակ: Այն պատմում է նաև իսրայելացիների և այլ ժողովուրդների միջև եղած պատերազմների մասին:

37. Աստվածաշնչի ո՞ր գիրքն է պատկանում Դավթի գրչին

ա. Առակաց

բ. Սաղմոսներ

գ. Ժողովող

Սաղմոս նշանակում է բանաստեղծություն, հոգևոր երգ կամ օրհներգություն: 150 հոգևոր-քնարական երգերի այս ժողովածուի զգալի մասը պատկանում է Դավիթ թագավորի՝ Իսրայելի երգչի գրչին: Այդ իսկ պատճառով Սաղմոսարանը կամ Սաղմոսների գիրքը կոչվում է նրա անունով:

Սաղմոսներից շատերը ներթափանցված են սպասվող Մեսիայի գալստյան մարգարեությամբ: Անհնար է պատկերացնել քրիստոնեական պաշտամունքն առանց Սաղմոսարանի, որն Ավետարանից հետո քրիստոնյաների ամենասիրելի գիրքն է:

Սաղմոսները բովանդակում են զանազան հոգևոր խորհուրդներ, որոնք վերաբերում են Արարչին և երկնային զորություններին, արարչագործությանն ու փրկագործությանը, բարեպաշտության և ապաշխարության սկզբունքներին: Նրանք մերթ փառաբանում ու գովերգում են Տիրոջը, մերթ հայցում Նրա ներողամտությունն ու պահպանությունը, մերթ ուսուցանում են ու խրատում, մերթ ներկայացնում Փրկչի գալստյան և Նրա տնօրինությունների մարգարեական պատկերները:

Հին Իսրայելի աստվածպաշտությունը հիմնականում կազմված է եղել սաղմոսներից: Բարեպաշտ իսրայելացիները շատ սաղմոսներ անգիր գիտեին և դրանցով էին կատարում իրենց առանձնական աղոթքները:

Քրիստոնեական աստվածպաշտության մեջ ևս սաղմոսները հիմնարար դեր են կատարում և աղոթքի կարևորագույն օրինակներ են, քանզի նրանց բովանդակությունը, հաճախ այլաբանորեն, համահունչ է հոգևոր կյանքի օրինաչափություններին և շատ դեպքերում մարգարեաբար վերաբերում է քրիստոնյայի փրկագործությանը: Այս պատճառով սաղմոսները Եկեղեցու ժամակարգության հիմնական մասն են կազմում. բացի այն, որ Գիշերային ժամերգության ընթացքում, 8 օրվա մեջ ընթերցվում է ամբողջ Սաղմոսարանը, ժամերգությունների շատ մասեր կազմված են սաղմոսներից և նրանց հատվածներից, և շատ երգերի ու շարականների բովանդակության հիմքը սաղմոսներն են:

38. Ո՞վ է գրել Առակների գիրքը

ա. Դավիթ թագավորը

բ. Սողոմոն թագավորը

գ. Սիրաք իմաստունը

Հին Կտակարանի գրքերի մաս է կազմում նաև Առակների գիրքը, որ բաղկացած է 31 գլուխներից: Այս գրքի հեղինակը Սողոմոն թագավորն է: Առակների գիրքն ընդգրկում է կենցաղային և հոգևոր բովանդակության խրատներ, որոնք սահմանում են մարդու գործնական կյանքի բարոյական չափանիշները:

Սողոմոնի առակները տարբերվում են մյուս ազգերի իմաստուն ասույթներից իրենց հայտնութենական բնույթով և կրոնական ուղղվածությամբ: Իրենց պարզության շնորհիվ այս առակները մատչելի են բոլոր տարիքի մարդկանց և օգնում են հասկանալ կյանքի իմաստը և ապրել աստվածահաճո կյանքով:

39. Ո՞ր երկիրն Աստված խոստացավ տալ իսրայելացիներին

ա. Մովաբը

բ. Քանաանը

գ. Ամաղեկը

40. Ի՞նչ արեց Մովսեսը նախքան Քանաան մտնելը

ա. Վիճակ գցեց

բ. Ժողովրդի հետ խոսեց

գ. Հետախույզներ ուղարկեց

41. Աստված ինչու՞ պատժեց իսրայելացիներին

ա. Աստծու տված խոստումներին չհավատալու համար

բ. Օրենքը խախտելու համար

գ. Քանաանը չհավանելու համար

42. Հետախույզներից ովքե՞ր ճիշտ գնահատեցին Աստծու կողմից Քանաանի ընտրությունը

ա. Ահարոնի որդիները

բ. Հեսուն ու Քաղեբը

գ. Տասներկու ցեղերից ընտրված հետախույզները

Իսրայելացիները շատ երկար ժամանակ անցկացրին անապատում: Մի օր Աստված ասաց Մովսեսին. «Մարդի՛կ ուղարկիր՝ հետախուզելու քանանացիների երկիրը, որ ես իբրև կալվածք տալու եմ Իսրայելի որդիներին: Յուրաքանչյուր ցեղից մի մարդ, նրանց նահապետական տների ամենագլխավորներին ուղարկի՛ր»:

Մովսեսն Իսրայելի 12 ցեղերից մեկական մարդու ընտրեց, ձեռքը բարձրացնելով՝ օրհնեց նրանց և ճանապարհ դրեց: Օրեր անց հետախույզները վերադարձան: Նրանցից երկուսը՝ Քաղեբն ու Հեսուն, գովեցին այն՝ ասելով, որ սքանչելի, բերքառատ և ծաղկավետ երկիր է, որտեղ կաթ ու մեղր է բխում: Ըստ նրանց՝ միակ խնդիրն այն էր, որ Քանաանի բնակիչները հզոր ռազմիկներ էին: Սակայն վստահ էին, որ Աստծու օգնությամբ նրանց դուրս կանեն երկրից: Բայց ոչ բոլորն էին այդ կարծիքին, մյուս հետախույզները կարծում էին, որ քանանական ցեղերը չափազանց վտանգավոր են և նրանց հետ չարժե կռվել:

Աստված դարձյալ ներեց իսրայելացիներին: Բայց այս անգամ նրանք պետք է վճարեին իրենց համառության համար: Չէ՞ որ այնքա՛ն հաճախ էին կորցրել իրենց հավատն ու վստահությունը Աստծու հանդեպ: Աստված ասաց, որ նրանք երբեք չեն տեսնի խոստացված երկիրը:

- Այս մարդիկ պետք է թափառեն անապատում,- ասաց Աստված:- Բոլորն էլ իրենց կյանքի մնացած մասն անապատում պիտի անցկացնեն, բոլորը՝ բացի Քաղեբից ու Հեսուից, որոնք հավատացին ինձ: Մեկ տարվա ընթացքում նրանք կարող էին մուտք գործել խոստացված երկիրը: Քանի որ չվստահեցին ինձ, քառասուն տարի անապատում կմնան, անապատում էլ կմեռնեն: Սա կլինի նրանց պատիժը: Այն երկիրը, ուր կաթ ու մեղր է հոսում, նրանց զավակները կժառանգեն:

Այդ լսելով՝ բոլորը բարձրաձայն լաց եղան: Բայց արդեն ուշ էր: Աստված որոշել էր անելիքը:

43. Իսրայելացիներն առաջինը Քանաանի ո՞ր քաղաքը գրավեցին

ա. Երուսաղեմը

բ. Երիքովը

գ. Կադեսբառնեան

44. Ո՞վ փրկեց Հեսուի ուղարկած երկու հետախույզներին

ա. Օղդա մարգարեուհին

բ. Ռահաբ անունով մի կին

գ. Երիքովցի մի աղքատ

45. Ինչպե՞ս իսրայելացիներն անցան Հորդանան գետի վրայով

ա. Լաստանավերով

բ. Գետի ջրերը հետ քաշվեցին

գ. Իսրայելացիները քայլեցին ջրերի մեջ եղած մեծ քարերի վրայով

որն Աստված տվել էր իր նախահայր Աբրահամին. «Ես բազմացնելու եմ քո սերունդը: Այն երկնքի աստղերից ավելի շատ է լինելու: Քանաանի երկիրը ձերն է լինելու»:

Մովսեսի մահից հետո Հեսուն դարձավ Աստծու ժողովրդի առաջնորդը: Նա Հորդանան գետի ափին բանակատեղի հաստատեց և մտադիր էր գրավել նախ Երիքովը, որ գտնվում էր Հորդանանի մյուս ափին: Երիքովի մասին տեղեկություն ունենալու համար նա իր մտերիմ մարդկանցից երկուսին ուղարկեց այնտեղ հետախուզության՝ իմանալու տեղի բնակչության քանակի, զինվորների, նրանց օգտագործած զինատեսակների և այլնի մասին:

Կեսօրից հետո հետախույզները մտան Երիքով: Քաղաքը շրջապատված էր հսկայական հզոր պարիսպներով: Գիշերը քաղաքի դարպասներն ամուր փակվում էին, և պահապանները հսկում էին պարիսպների վրա: Երբ նրանք անցան մի խումբ զինվորների կողքով, նրանցից մեկը նկատեց երկու իսրայելացիներին և կոչ արեց հետապնդել նրանց: Քաղաքի փողոցներով փախչող իսրայելացիներին նկատեց պատուհանից դուրս նայող մի կին, որը նրանց թաքնվելու համար ցույց տվեց իր տան ներքին դուռը: Երիքովցի կնոջ անունը Ռախաբ էր: Նա հետախույզներին թաքցրեց իր տանիքում, ապա օգնեց պատուհանից պարանով ցած իջնել և քաղաքից դուրս գալ:

Այդ ընթացքում Ռախաբը նրանց ասաց, որ երիքովցիները սարսափում են իսրայելացիների հետ կռվելուց և խնդրեց, որ երբ հարձակվեն իրենց քաղաքի վրա, իրեն խնայեն:

Հեսուն հետախույզներից անհրաժեշտ տեղեկությունները ստանալուց հետո քահանաներին կարգադրեց վերցնել Ուխտի տապանակն ու անցնել Հորդանան գետը: Երբ քահանաները մտան գետը, ջրերը հետ քաշվեցին ու հսկա պարիսպ կազմեցին: Նրանց առջև ցամաք ճանապարհ բացվեց:

Երբ քահանաները հասան գետի մեջտեղը, Հեսուն ժողովրդին կոչ արեց հետևելու նրանց: Այդ օրը բոլոր ընտանիքներն ուղտերով, ավանակներով ու մնացած կենդանիներով անցան Հորդանան գետը:

Գետի մյուս ափին նրանց նոր հայրենիքն էր: Հեսուն մեկ անգամ էլ նայեց այն լեռից, որտեղից զննել էր ամեն ինչ: Նա հիշեց այն խոստումը,

46. Դատավորներից ո՞վ ազատեց իսրայելացիներին մովաբացիներին ծառայելուց

ա. Սամփսոնը

բ. Գեդեոնը

գ. Ավոդը

Իսրայելացիները դարձյալ մոռացան իրենց Աստծուն և պաշտեցին օտար աստվածների: Այդ պատճառով Տերն Իսրայելի դեմ զորացրեց Մովաբի արքա Եգղոմին: Նա հարվածեց Իսրայելին և տիրեց Արմավենիների քաղաքին:

Տասնութ տարի իսրայելացիները ծառայեցին Մովաբի արքա Եգղոմին: Նրանք կրկին աղաղակեցին Տիրոջը և Տերը նրանց համար մի փրկիչ ուղարկեց՝ Գերայի որդին Ավոդին, որը ձախլիկ էր: Իսրայելացիները նրա միջոցով Մովաբի արքային ընծաներ ուղարկեցին: Ավոդն իր համար մեկ կանգուն երկարությամբ երկսայրի սուր պատրաստեց, կապեց աջ ազդրին՝ թիկնոցի տակ և գնաց:

Նա ընծաները մատուցեց Մովաբի արքային, որը շատ գեր մարդ էր: Ընծաները տալուց հետո Ավոդն ասաց. «Ո՛վ արքա, քեզ ծածուկ ասելու խոսք ունեմ»: Այդ ժամանակ Եգղոմն իր պալատականներին ասաց, որ իրենց մենակ թողեն: Ավոդն ասաց. «Ո՛վ արքա, ես քեզ Աստծուց պատգամ ունեմ հաղորդելու»:

Եգղոմն աթոռից բարձրացավ, գնաց նրա մոտ: Երբ նա մոտեցավ Ավոդին, վերջինս ձախ ձեռքը մեկնեց և աջ ազդրից քաշեց սուրն ու սրախողխող արեց Եգղոմին: Ավոդը նրա առաջ փակեց վերնատան դռները և հեռացավ: Ծառաները վերնատան դռները փակ տեսնելով, մտածեցին, թե Եգղոմը սենյակում փակվել է բնական կարիքի համար: Որոշ ժամանակ սպասելուց հետո նրանք բացեցին դռները և իրենց տիրոջը մեռած գտան: Այդ ընթացքում Ավոդը փախավ: Երբ նա Իսրայել հասավ, փող փչեց Եփրեմի նահանգում: Նա ասաց իսրայելացիներին. «Իջե՛ք իմ ետևից, որովհետև մեր Տեր Աստվածը թշնամի մովաբացիներին մեր ձեռքը մատնեց»: Իսրայելացիները Ավոդի հետ իջան բարձունքից և կոտորեցին մովաբացիներին: Ավոդը նրանց դատավորը եղավ մինչև իր մահը:

47. Ո՞վ էր Դեբորան

ա. Իսրայելացիների թշնամին էր

բ. Իսրայելացիների դատավորն էր

գ. Հեթանոսական աստվածուհի էր

48. Ու՞մ ձեռքով սպանվեց քանանացիների զորահրամանատար Սիսարան

ա. Դեբորայի

բ. Բարակի

գ. Հայելի

Անցան տարիներ, և Իսրայելի ժողովուրդը մոռացավ Մովսեսին և Աստծուն տված խոստումները: Մարդիկ սկսեցին ուրիշ աստվածների պաշտել: Եվ Տերը թույլ տվեց, որ նրանց թշնամիները՝ Հաբին թագավորն ու նրա զորապետ Սիսարան, հաղթեն:

Այդ ժամանակներում Տերը Դեբորա անունով մի կնոջ էր ուղարկել, որ դատավոր լինի Իսրայելում: Աստված նրան իմաստություն էր պարգևել: Դեբորան Աստծուն շատ էր սիրում: Նա հաճախ էր իր ժողովրդին հորդորում լսել և հնազանդվել Աստծուն: Բայց շատերն ուղղակի ծիծաղում էին նրա վրա: Մի օր Դեբորան կանչել տվեց իսրայելացի մի զինվորի՝ Բարակին, և պատվիրեց զորք հավաքել և կռվել Սիսարայի դեմ: Բարակը լսեց նրան, սակայն խնդրեց Դեբորային գալ իր հետ մարտի դաշտ: Այդ ժամ Դեբորան ժպտաց՝ ասելով.

- Մի՞թե Աստծու հանդեպ քո հավատը պակաս է իմ հանդեպ ունեցածդ հավատից: Դե՛, քանի որ դու չես վստահում Աստծուն, նա հաղթանակը քո փոխարեն մի կնոջ կտա:

Ճակատամարտի օրը Բարակն իր զորքերն առաջնորդեց Թաբոր լեռը: Դեբորան լեռան գագաթին աղոթեց Աստծուն: Աստված այնպես արեց, որ Սիսարայի զորքերը պարտություն կրեցին: Բարակը հետապնդեց Սիսարայի զինվորներին ու կոտորեց նրանց: Իսրայելի ժողովուրդը մեծ հաղթանակ տարավ: Տեսնելով, որ ճակատամարտը տանուլ է տվել, Սիսարան փախուստի դիմեց ու կանգ առավ Հաբին թագավորի բարեկամներից մեկի տան առաջ այնտեղ ապաստանելու: Նրան մի կին դիմավորեց և ներս ընդունեց, որի անունը Հայել էր:

Սիսարան չգիտեր, որ սրտի խորքում Հայելն ատում էր իրեն ու իր զորքին: Կինը նրան կաթ տվեց ու ծածկեց ծածկոցով: Զորապետը հանգիստ քուն մտավ: Հայելը վրանի մի ցից ու մուրճ վերցրեց, կամացուկ մոտեցավ ու սպանեց նրան:

Այդ ժամանակ Բարակը Սիսարային էր փնտրում: Երբ նա հասավ Հայելի վրանի մոտ, կինն ընդառաջ դուրս եկավ ու պատմեց իր արածը: Բարակը նրան տարավ Դեբորայի ու զորքի մոտ:

49. Ո՞ւմ հաղթեց Գեդեոնը

ա. Մադիանացիներին

բ. Փղշտացիներին

գ. Գաբավոնացիներին

50. Ի՞նչ է նշանակում Գեդեոն անունը

ա. Մեծ ռազմիկ

բ. Մեծ դատավոր

գ. Մեծ զորավար

Շատ ժամանակ չանցած՝ իսրայելացիները դարձյալ մոռացան իրենց խոստումների մասին: Քանի որ նրանք ուրիշ աստվածների էին պաշտում, Աստված չէր հզորացնում նրանց: Այս անգամ մադիանացիների ցեղը տիրեց իսրայելացիներին:

Ժողովրդին օգնելու համար Աստված ընտրեց Գեդեոնին, որի անունը նշանակում է «Մեծ ռազմիկ»: Նա հրեշտակի միջոցով Գեդեոնին պատվիրեց քանդել օտար աստվածներին նվիրված զոհասեղանն ու արձանը:

Թեև Գեդեոնը գիտեր, որ դրա համար կսպանեն իրեն, բայց գնաց այդ քայլին, քանի որ Աստված էր այդպես ասել: Նա տասը մարդու հետ բարձրացավ լեռը, որտեղ օտար աստվածների էին պաշտում, և ջարդուփշուր արեց քարե զոհասեղանն ու արձանը: Ծուտով մադիանացիները պատրաստվեցին նորից հարձակվել Իսրայելի վրա: Գեդեոնը դիմեց Աստծուն և խնդրեց օգնել իրենց հաղթել թշնամուն:

Բոլոր իսրայելացիներն էլ ուզում էին կռվել մադիանացիների դեմ և շատերը միացան Գեդեոնին: Գեդեոնը նրանց առաջնորդեց դեպի գետը, որի մյուս ափին թշնամու բանակն էր: Այդ ժամանակ Տերն ասաց.

- Գեդեո՛ն, քո զինվորները շատ են: Եթե հաղթեք, մարդիկ դրանից կարող են գոռոզանալ: Նրանք կմտածեն, թե այդ ամենն իրենք արեցին: Ես ուզում եմ սովորեցնել նրանց հավատալ ու վստահել ինձ: Ասա՛, որ ով վախկոտ է, թող հետ դառնա: Գեդեոնն այդպես էլ արեց: Հավաքվածներից շատերին հետ ուղարկեց, և մնացին ընդամենը երեք հարյուր զինվոր: Նա զինվորներին բաժանեց երեք խմբի և ուղարկեց թշնամու բանակատեղին շրջապատելու: Հանկարծ Գեդեոնն ազդանշան տվեց: Նրա զինվորները բարձրաձայն գոչեցին, փշրեցին սափորները, որոնք ջահերի համար վահան էին ծառայում, և հնչեցրին շեփորները: Մեծ աղմուկ բարձրացավ: Մադիանացիները կարծեցին, թե հզոր բանակ է հարձակվել իրենց վրա: Նրանք սարսափահար արթնացան քնից ու սկսեցին փախուստի դիմել: Բայց քանի որ աղմուկն ամեն կողմից էր, չգիտեին ուր փախչել: Իսրայելացիները կոտորեցին բոլոր մադիանացիներին: Դա մեծ հաղթանակ էր Իսրայելի համար:

51. Ու՞մ հետ մենամարտեց Սամփսոնը

ա. Փղշտացի հսկայի

բ. Առյուծի

գ. Գողիաթի

52. Ի՞նչ է նշանակում Սամփսոն անունը

ա. Հոչակավոր

բ. Բախտավոր

գ. Դատավոր

53. Սամփսոնն ի՞նչ առաջարկեց փղշտացիներին

ա. Հանելուկ լուծել

բ. Իր հարսանեկան խնջույքին գալ

գ. Հաշտվել

Աստծու ժողովուրդը մոլորվելով կեղծ աստվածների էր պաշտում: Այդ ժամանակ նրա թշնամին փղշտացիների ցեղն էր:

Մի տղա կար Սամփսոն անունով, որ նշանակում է «Հոչակավոր»: Ծնողները նրա մազերը չէին կտրում: Դա նշանն էր այն բանի, որ տղան Աստծուն է պատկանում: Սամփսոնը մեծանում էր և Տիրոջ ուղարկած Սուրբ Հոգու զորությամբ լցվում: Նա սիրահարվեց փղշտացի մի աղջկա և կամեցավ ամուսնանալ նրա հետ: Նա իր ծնողների հետ գնաց աղջկա գյուղը՝ նրա ձեռքը խնդրելու: Ճանապարհին Սամսոնը մտավ մի այգի, և հանկարծ մի հսկա առյուծ հայտնվեց ու նետվեց նրա կողմը: Տիրոջ Հոգին զորացրեց նրան, և նա գետնին տապալելով առյուծին՝ խեղդեց:

Սկսվեցին հարսանեկան խնջույքի յոթ օրերը: Սամսոնն իր հարսնացուի համագյուղացիներից երեսուն երիտասարդի ասաց.

- Ձեզ մի լավ հանելուկ կասեմ, եթե խնջույքի այս յոթ օրվա ընթացքում լուծեք հանելուկը, ես ձեզ կտամ երեսուն շապիկ և երեսուն տոնական զգեստ: Իսկ եթե չկարողանաք լուծել, դուք ինձ կտաք երեսուն շապիկ և երեսուն տոնական զգեստ:

Փղշտացիները համաձայնեցին: Սամսոնն ասաց.

- Հանելուկն այս է. ուտողից կերակուր դուրս եկավ, և հզորից քաղցրություն դուրս եկավ (Դատ. 14.14):

Ոչ ոք չգիտեր պատասխանը: Նրանք Սամսոնի կնոջն ասացին.

- Ամուսնուդ համոզի՛ր, որ հանելուկի պատասխանն ասի, թե չէ հորդ տունը կայրենք: Քեզ ու նրան էլ կսպանենք:

Սամսոնի կինը շատ վախեցավ ու ամուսնուն խնդրեց, որ իրեն բացատրի հանելուկի իմաստը: Սամսոնը սկզբում հրաժարվեց, բայց անսալով կնոջ թախանձանքներին՝ ասաց հանելուկի պատասխանը: Կինն էլ այդ մասին հայտնեց փղշտացի երիտասարդներին:

Յոթերորդ օրը նրանք հարցրին Սամսոնին.

- Ի՞նչն է մեղրից քաղցր, և ի՞նչն է առյուծից հզոր:

54. Ովքե՞ր էին մովաբացի Օրփան և Հռութը

ա. Նոյեմիի հարսներն էին

բ. Նոյեմիի դուստրերն էին

գ. Նոյեմիի քույրերն էին

55. Ո՞վ մնաց Նոյեմիի հետ

ա. Օրփան

բ. Հռութը

գ. Երկուսն էլ հեռացան

Դատավորների ժամանակ երբ Իսրայելում սով եղավ, Հուդայի Բեթլեհեմ քաղաքից Ելիմելեք անունով մի մարդ իր կնոջ՝ Նոյեմիի, և երկու որդիների հետ գնաց Մովաբ բնակվելու: Ելիմելեքը մահացավ, իսկ նրա որդիներ Մաալոնն ու Քելոնը մեծացան և ամուսնացան մովաբացի կանանց հետ: Նրանցից մեկի անունը Օրփա էր, մյուսինը՝ Հռութ: Տաս տարի այնտեղ ապրելուց հետո Նոյեմիի որդիները մահացան: Նոյեմին որոշեց Հուդայի երկիր վերադառնալ, որովհետև սովը դադարել էր: Նոյեմին հարսներին առաջարկեց վերադառնալ իրենց հայրական տները և շարունակել իրենց կյանքը: Հարսները շատ էին սիրում Նոյեմիին և չէին ուզում նրան մենակ թողնել, սակայն Նոյեմին համոզեց նրանց վերադառնալ հայրենի օջախ:

Օրփան ասաց Նոյեմիին.

- Ես կանեմ այնպես, ինչպես դու ես ուզում. կվերադառնամ ծնողներիս մոտ:

Նրանք գրկախառնվեցին ու լաց եղան: Գիտեին, որ այլևս իրար չեն տեսնի: Օրփան հավաքեց իրերն ու հեռացավ:

Բայց Հռութը չգնաց: Նա ասաց Նոյեմիին.

-Ինչ էլ որ լինի, ես չեմ թողնի քեզ ու չեմ հեռանա:

Սրտի խորքում Նոյեմին ուրախ էր, որ Հռութն ուզում է մնալ: Ծերության օրերին իրեն օգնական կարող էր լինել: Բայց ուզում էր, որ նրա համար էլ լավ լինի:

- Դու՛ էլ պետք է գնաս, Հռու՛թ,- ասաց Նոյեմին:

- Դու իմ մայրն ես հիմա: Խնդրում եմ, թո՛ւյլ տուր գալ քեզ հետ, - աղերսեց Հռութը: - Քո ժողովուրդը կլինի իմ ժողովուրդը, և քո Աստվածը կլինի իմ Աստվածը:

Հռութը գիտեր, որ ճշմարիտ Աստված մեկն է: Նրա ամուսինն էր իրեն սովորեցրել Աստծու մասին: Հռութը հավատում էր Աստծուն:

Վերջապես Նոյեմին համաձայնեց, և նրանք գնացին Բեթղեհեմ:

56. Ովքե՞ր էին Փեննանան և Աննան

ա. Եղկանայի կանայք

բ. Եղկանայի քույրերը

գ. Եղկանայի հարազատ և խորթ մայրերը

57. Ինչու՞ է Փեննանան հաճախ տրտմեցնում Աննային

ա. Որովհետև նախանձում էր նրան

բ. Որովհետև Աննան ավելի գեղեցիկ էր

գ. Որովհետև Աննան ավելի օրինապաշտ էր

58. Ու՞մ մայրն էր Աննան

ա. Դավիթ թագավորի

բ. Օփնի և Փենեես եղբայրների

գ. Սամուել մարգարեի

59. Ի՞նչ է նշանակում Սամուել

ա. Աստծուց խնդրված

բ. Աստծու զորություն

գ. Աստծու պարգև

Իսրայելում Եղկանա անունով մի աստվածապաշտ մարդ էր ապրում: Նա երկու կին ուներ: Նրանցից մեկը՝ Փեննանան, երեխաներ ուներ, իսկ մյուսը՝ Աննան, չուներ: Եղկանան Աննային շատ էր սիրում, ավելի, քան մյուս կնոջը: Դա Փեննանայի մոտ նախանձ էր առաջացնում: Առիթի դեպքում նա ծաղրում էր Աննային, հաճախ էր նրան անպիտան անվանում, քանի որ Աննան չէր կարողանում Եղկանային զավակ պարգևել և առիթը բաց չէր թողնում, որ վիրավորի:

Եղկանան այդ ժամանակի սակավաթիվ մարդկանցից էր, որոնք փորձում էին հետևել Աստծուն: Ամեն տարի նա ընտանիքի բոլոր անդամներին ուխտագնացության էր տանում Սելովի տաճար, որտեղ պահվում էր Աստծու Տասը պատվիրանների տապանակը: Աստծուն երկրպագություն մատուցելուց հետո Եղկանան մեծ ճաշկերույթ էր կազմակերպում ընտանիքի համար:

Ուխտագնացությունների ժամանակ Աննան աղոթում էր Աստծուն՝ խնդրելով իրեն զավակ պարգևել: Աստված ողորմաց նրան և որդի պարգևեց, որին Սամվել անվանեցին, որ նշանակում է «Աստծուց խնդրված»:

60. Ո՞վ օծեց Իսրայելի առաջին թագավորին

ա. Հեղի քահանան

բ. Սամուել մարգարեն

գ. Եղիա մարգարեն

61. Ո՞վ էր Իսրայելի առաջին թագավորը

ա. Դավիթը

բ. Սողոմոնը

գ. Սավուղը

Եղկանայի և Աննայի որդին՝ Սամվելը, մեծացավ և մարգարե դարձավ: Նա մարդկանց հայտնում էր, թե Աստված ինչ է ուզում: Բայց եկավ մի ժամանակ, երբ իսրայելացիները սկսեցին Սամվելի միջոցով Աստծուն ասել, թե իրենք ինչ են ուզում: Նրանք թագավոր էին ուզում:

- Ո՛չ, ո՛չ, Աստված է ձեր Թագավորը, - ասում էր Սամվելը:

Բայց մարդիկ նրան չէին լսում:

Այդ ժամանակ Իսրայելի ամենափոքր ցեղում մի գեղեցիկ երիտասարդ կար, որի անունը Սավուղ էր: Մի անգամ հայրը նրան ուղարկեց կորած ավանակները որոնելու: Սավուղը ծառայի հետ երկար օրեր փնտրեց դրանց, բայց չգտավ: Նրանք լսել էին Սամվել մարգարեի մասին և որոշեցին կորած ավանակներին գտնելու համար նրան օգնությանը դիմել: Երկուսով գնացին Սամվելի տուն: Մինչդեռ նախորդ օրը Աստված ասել էր Սամվելին.

- Վաղը մի օտարական կայցելի քեզ: Նա է այն մարդը, որն իմ ժողովրդի թագավորը պիտի դառնա:

Սամվելը հանդիպեց Սավուղին, այնուհետև նրան խնջույքի հրավիրեց: Խնջույքից հետո Սավուղը գիշերեց Սամվելի տանը: Նրանք գիշերեցին տանիքում: Առավոտյան Սամվելը Սավուղին ասաց, որ նրա վերադառնալու ժամանակն է: Երբ հասան քաղաքի սահմանին, Սամվելը վերցրեց յուղի սրվակը և յուղը թափեց Սավուղի գլխին: Նա համբուրեց նրան և ասաց. «Տերը քեզ իշխան օծեց իր՝ Իսրայելի ժողովրդի համար»: Այնուհետև Սամվելը ժողովրդին հավաքեց Մասեփայում և ասաց.

- Տեսե՛ք, թե որքան բարձրահասակ է Սավուղը: Նա՛ է ձեր թագավորը:

- Կեցցե՛ թագավորը, - բացականչեց ժողովուրդը:

62. Ինչու՞ Աստված պատժեց Սավուղին

ա. Որովհետև Սավուղը չկատարեց Տիրոջ պատվիրանը և Սամվելի փոխարեն ողջակեզ մատուցեց

բ. Որովհետև ժողովրդին կեղեքում էր

գ. Որովհետև օտար աստվածների էր պաշտում

Սավուղը մեկ կամ երկու տարի Իսրայելի վրա թագավորելուց հետո պատերազմեց Իսրայելի դեմ դուրս եկած այլազգիների դեմ: Նա Աստծու զորակցությամբ հաղթանակներ ունեցավ և հետապնդեց նրանց՝ հասնելով Գաղգաղա: Սամվել մարգարեի հետ պայմանավորվածության համաձայն՝ Սավուղն այնտեղ պիտի սպասեր Սամվելին, որպեսզի վերջինս գար և ողջակեզ մատուցեր Տիրոջը ի նշան գոհության: Սակայն նա յոթ օր սպասեց, ինչպես որ Սամվելն էր հրամայել, սակայն Սամվելը Գաղգաղա չեկավ, և մարդիկ սկսեցին ցրվել: Սավուղն ասաց. «Մո՛տ եկեք, որ ողջակեզի ու խաղաղության զոհեր մատուցեմ»: Եվ ողջակեզը ինքը մատուցեց: Երբ ողջակեզ մատուցելը վերջացրեց, Սամվելը եկավ: Սավուղն ընդառաջ գնաց՝ նրան դիմավորելու և ողջունելու: Սամվելն ասաց. «Այդ ի՞նչ ես արել»: Սավուղն ասաց. «Երբ տեսա, որ իմ ժողովուրդն սկսեց ինձ լքել, և դու չեկար քո նշանակած օրը, իսկ այլազգիները հավաքվեցին Մաքմասում, մտածեցի, թե այլազգիները հիմա կգան իմ դեմ, Գաղգաղա, իսկ ես Տիրոջ առջև դեռ չէի աղերսել, դրա համար էլ համարձակվեցի և ողջակեզ մատուցեցի»: Սամվելն ասաց Սավուղին. «Զուր ես արել, քանի որ չես պահել իմ պատվիրանը, որ Տերն էր պատվիրել: Տերը քեզ Իսրայելի վրա ցմահ թագավոր պիտի դարձներ, բայց հիմա քո թագավորությունը այլևս չի շարունակվելու: Տերն իր սրտին հաճելի մարդ պիտի փնտրի, որ նրան իշխան դարձնի իր ժողովրդի վրա, քանի որ դու չկատարեցիր այն, ինչ Տերը պատվիրել էր քեզ»:

63. Ո՞վ հաջորդեց Սավուղ թագավորին

ա. Հովնաթանը

բ. Դավիթը

գ. Սողոմոնը

64. Ու՞մ որդին էր Դավիթը

ա. Հեսսեի

բ. Սամուել մարգարեի

գ. Հռութի և Բոոսի

Սկզբում Սավուղը լավ թագավոր էր: Նա ղեկավարում էր Աստծու կամքին համաձայն: Բայց ժամանակի հետ նա ագահ ու եսասեր դարձավ և չէր հնազանդվում Աստծուն: Դրա համար էլ Աստված Սամվել մարգարեին կարգադրեց գնալ ու գտնել հաջորդ թագավորին.

- Մի սրվակով յու՛ղ վերցրու և գնա՛ Բեթղեհեմ: Հարցրու՛, թե որտեղ են Հեսսեի որդիները: Այդ ժամանակ քեզ ցույց կտամ նոր թագավորին:

Բեթղեհեմ հասնելով՝ Սամվելը կանչել տվեց Հեսսեի որդիներին: Երբ Հեսսեի յոթ որդիներն էլ անցան Սամվելի առջևով, նա հարցրեց, թե Հեսսեն ուրիշ որդի ունի՞:

- Այո՛, - ասաց Հեսսեն, - մի փոքրիկ տղա էլ ունեմ, բայց նա ոչխարներն է արածեցնում:

Մարդ ուղարկեցին, որ բերի Հեսսեի կրտսեր որդուն՝ Դավթին: Տղան գեղեցիկ էր և ուժեղ:

- Սա՛ է իմ ընտրածը, - ասաց Աստված:

Սամվելը վերցրեց յուղն ու լցրեց Դավթի գլխին: Դա նշանակում էր, որ նա էր թագավոր ընտրվել:

Դավթին թագավոր օծելուց հետո Սամվելը վերադարձավ տուն: Աստված արդեն ընտրել էր հաջորդ արքային, բայց դեռ ժամանակը չէր ժողովրդին հայտնելու դրա մասին:

65. Դավիթն ու՞մ պարսատիկով սպանեց

ա. Սավուղին

բ. Գողիաթին

գ. Հովնաթանին

Մի քանի տարի Դավիթը հաճախ քնար էր նվագում թագավորի համար: Երբ Սավուղը գնում էր փղշտացիների դեմ կռվելու, Դավիթը տուն էր վերադառնում:

Հեսսեի որդիներից երեքը Սավուղի բանակի զինվորներ էին:

Փղշտացիների հետ կռիվներից մեկի ժամանակ Սավուղն ու նրա զինվորները լուրջ խնդրի առաջ կանգնեցին: Թշնամիների մեջ մի շատ բարձրահասակ զինվոր կար, որի անունը Գողիաթ էր: Նա նման էր հսկայի և ոչ ոք չէր համարձակվում նրա հետ կռվել, իսկ Գողիաթն անվերջ սպառնում էր նրանց:

Մի օր Դավիթը գնաց բանակատեղի եղբայրերին տեսության և ականատես եղավ Գողիաթի սպառնալիքներին: Երբ նա զինվորներից լսեց, որ Սավուղը խոստացել է հարստություն պարգևել և իր աղջկան կնության տալ Գողիաթին հաղթողին, որոշեց մենամարտել նրա հետ: Դավիթը մոտակա հեղեղատից հինգ ողորկ քար ընտրեց ու միայն Աստծուն ապավինելով՝ գնաց կռվելու:

Գողիաթը մոտեցավ Դավթին: Տղան պարսատիկի մեջ քար դրեց, պտտեց, պտտեց իր գլխավերևում ու նետեց: Քարն այնպիսի արագությամբ սլացավ, որ Գողիաթը չհասցրեց նույնիսկ բարձրացնել նիզակը: Արդեն ուշ էր. քարը ծակել էր հսկայի ճակատը: Նա ուժգին թրմփոցով փռվեց գետնին:

Դավիթն անմիջապես վազեց, պատյանից հանեց Գողիաթի թուրն ու կտրեց նրա գլուխը: Փղշտացիները չէին կարողանում հավատալ իրենց աչքերին: Նրանք սարսափահար փախուստի դիմեցին, բայց իսրայելացիները հետապնդեցին ու կոտորեցին նրանց: Այդ օրն իսրայելացիները մեծ հաղթանակ տոնեցին, որովհետև Դավիթն ապավինեց Աստծու զորությանը:

66. Ինչպե՞ս վերջ դրվեց Սավուղի կյանքին

ա. Նա սպանվեց Դավթի ձեռքով

բ. Նա սպանվեց փղշտացիների կողմից

գ. Նա սպանվեց դավադիր իշխանների կողմից

Երբ փղշտացիները պատրաստվում էին հարձակվել Իսրայելի վրա, Դավիթը Սավուղ թագավորից փախուստի մեջ էր և գտնվում էր փղշտացիների թագավոր Անքուսի մոտ, որը նրան բնակվելու տեղ էր տվել: Անքուսը Դավթին ու նրա մարդկանց հետ ուղարկեց: Նա վերադարձավ Սիկեղակ ու տեսավ, որ քաղաքը բոցերի մեջ է: Արդեն մեկ տարի էր, ինչ նա այդտեղ չէր ապրում: Նրա բացակայության ժամանակ ամաղեկացիները հարձակվել էին Սիկեղակի վրա ու բոլոր հարազատներին գերի տարել: Դավիթն իր մարտիկներով հետապնդեց թշնամուն, ամբողջ գիշեր և ցերեկ կատաղի պայքար մղեց, և ի վերջո իր մարտիկների հետ հաղթեցին:

Դավիթը հաղթանակած վերադարձավ Սիկեղակ և տեղեկացավ, որ իսրայելացիների ու փղշտացիների միջև թեժ ճակատամարտ է ընթացել, որի ժամանակ փղշտացիները սպանել են Սավուղին ու նրա երեք որդիներին, որոնց թվում նաև Հովնաթանին:

Դավիթն ու նրա մարդիկ ողբացին Սավուղի և նրա որդիների մահը: Դավիթն առավել ողբաց Հովնաթանի՝ իր սիրելի և մտերիմ ընկերոջ կորուստը:

67. Ի՞նչ խնդրեց Սողոմոնն Աստծուց

ա. Օգնություն

բ. Իմաստություն

գ. Հարստություն

Դավիթ թագավորի մահից հետո թագավորեց նրա որդի Սողոմոնը: Սկզբում Սողոմոնն իրեն անվստահ էր զգում, քանի որ շատ երիտասարդ էր և դժվարանում էր իմանալ ժողովրդի համար լավ և արդար թագավոր լինել:

Տերը Սողոմոնին երևաց գիշերվա քնի մեջ: Տերն ասաց Սողոմոնին. «Որևէ բա՛ն խնդրիր քեզ համար»: Սողոմոնն ասաց. «Դու մեծ ողորմություն արեցիր իմ հայր Դավթին, և նա քո առջև ընթացավ ճշմարտությամբ, արդարությամբ ու սրտի մաքրությամբ, և դու պահեցիր նրա համար այս մեծ ողորմությունը. նրա որդուն նստեցրիր նրա գահին, ինչպես որ այսօր է: Արդ, Տե՛ր իմ Աստված, դու քո ծառային հաստատեցիր իմ հայր Դավթի փոխարեն, իսկ ես դեռ մանուկ եմ և չգիտեմ իմ ելն ու մուտը: Քո ծառան քո ընտրած ժողովրդի մեջ է, մի ժողովուրդ, որը բազմամարդ է, անթիվ ու անհամար: Քո ծառային այնպիսի մի՛տք տուր, որ նա կարողանա արդարությամբ լսել ու դատել քո ժողովրդին, խելամտություն ունենա տարբերելու բարին ու չարը, որովհետև ո՞վ կարող է ղեկավարել քո այս բազմամարդ ժողովրդին»: Տիրոջը հաճելի եղավ Սողոմոնի այս խնդրանքը, և Տերն ասաց նրան. «Քանի որ դու այդ բանը խնդրեցիր ինձնից, ոչ թե կյանքի երկար օրեր խնդրեցիր, հարստություն կամ քո թշնամիների մահը, այլ խնդրեցիր խելամտություն՝ դատ անելու, ուստի քո ասածի համաձայն եմ վարվելու. քեզ տալիս եմ իմաստուն ու հանճարեղ միտք, այնպես որ ո՛չ քեզնից առաջ է քո նմանը եղել, և ո՛չ էլ քեզնից հետո քո նմանը կհայտնվի: Քեզ տալիս եմ նաև այն, ինչ դու չխնդրեցիր՝ հարստություն ու փառք, այնպես որ քո ապրած կյանքի օրերին թագավորներից ոչ ոք քեզ նման չի լինելու: Եվ եթե ընթանաս իմ ճանապարհով, կատարես իմ հրամաններն ու պատվիրանները, ինչպես ընթացել էր քո հայր Դավիթը, ապա քո կյանքի օրերը կերկարեցնեմ»: Սողոմոնը զարթնեց և տեսավ, որ երազ էր: Նա եկավ Երուսաղեմ, կանգնեց Սիոնում գտնվող Տիրոջ Ուխտի տապանակի դեմ հանդիման, զոհասեղանի առջև, ողջակեզներ ու խաղաղության զոհեր մատուցեց և մեծ խրախճանք սարքեց իր և իր բոլոր ծառաների համար:

68. Ինչպե՞ս Սողոմոնն իմացավ, թե ո՞վ է մանկան իրական մայրը

ա. Հրամայեց մանկանը երկու կես անել

բ. Հրամայեց մանկանը ողջակեզ անել

գ. Հրամայեց մանկանը երկու կանանցից էլ խլել

Սողոմոնի արքայի իշխանության ժամանակ երկու կանայք եկան ու կանգնեցին արքայի առջև: Կանանցից մեկն ասաց. «Լսի՛ր ինձ, տե՛ր իմ, ես և այս կինը մի տան մեջ էինք: Ես ծննդաբերեցի այդ տանը: Այնպես պատահեց, որ երրորդ օրն այս կինն էլ ծնեց: Մենք էինք միայն տանը, մեր երկուսից բացի ուրիշ ոչ ոք չկար: Գիշերը սրա որդին մեռավ, որովհետև նա իր երեխայի վրա էր պառկել: Սա գիշերվա կեսին զարթնել է, իմ գրկից վերցրել իմ մանկանը, երբ ես՝ քո աղախինը, քնած եմ եղել, պառկեցրել է իր ծոցում, իսկ իր մեռած որդուն դրել է իմ ծոցը: Առավոտյան վեր կացա, որ կուրծք տամ իմ որդուն, բայց տեսա, որ մեռած է: Ցերեկը մի լավ դիտեցի նրան և տեսա, որ դա իմ ծնած երեխան չէ»: Մյուս կինն ասաց. «Ո՛չ, մեռածը քո որդին է, իմ որդին կենդանին է»: Առաջին կինն ասում էր. «Ո՛չ, կենդանին իմ որդին է, իսկ քո որդին մեռածն է»: Այսպես վիճեցին արքայի առջև: Արքան նրանց ասաց. «Դու ասում ես՝ “Այս կենդանին է իմ որդին, մեռածը՝ նրա որդին է”, իսկ դու էլ ասում ես՝ “Ո՛չ, մեռածը քո որդին է, կենդանին իմ որդին է”»: Արքան ասաց. «Սուրն ի՛նձ բերեք»: Սուրը բերեցին թագավորի մոտ: Արքան ասաց. «Կտրե՛ք, երկու կե՛ս արեք այս կենդանի ծծկեր մանկանը, նրա մի կեսը տվե՛ք սրան ու մյուս կեսը՝ նրան»: Այն կինը, որի որդին կենդանի էր, ցավից գալարվեց իր որդու համար: Նա ասաց արքային. «Լսի՛ր ինձ, տե՛ր, կենդանի մանկանը տվե՛ք նրան, միայն թե մի՛ սպանեք մանկանը»: Մյուս կինն ասաց. «Ո՛չ իմը թող լինի, ո՛չ նրանը, մեջտեղից կիսե՛ք նրան»: Պատասխան տվեց արքան՝ ասելով. «Նրա՛ն տվեք կենդանի մանկանը, ով ասաց՝ “Դրա՛ն տվեք, միայն թե մի՛ սպանեք երեխային”: Նա է դրա մայրը»: Եվ ամբողջ Իսրայելը, լսելով արքայի վճռած դատաստանը, երկնչեց արքայից, քանզի տեսավ, որ նրա մեջ դատաստան վարելու Աստծու իմաստնությունը կար:

69. Ո՞ր մեղքի համար Աստված պատժեց Սողոմոն թագավորին

ա. Մարդասպանության

բ. Օտար աստվածներին հետևելու

գ. Անարդարության

70. Ինչպե՞ս Աստված պիտի պատժեր Սողոմոնին

ա. Պիտի խլեր նրա կյանքը

բ. Պիտի խլեր նրա սերնդից թագավորությունը

գ. Պիտի խորտակեր նրա կառուցած տաճարը

Սողոմոն արքան բազմաթիվ կանայք ուներ: Նրանցից շատերը օտար ազգից էին՝ մովաբացի, ամոնացի, եդովմացի, ասորի, քետացի, ամորհացի: Սողոմոնի կանանցից էր նաև փարավոնի դուստրը: Սակայն արքան անտեսել էր Տիրոջ պատգամը, որն ասում էր նրանց. «Չխառնվե՛ք օտար ազգերին, նրա՛նք էլ թող ձե՛զ չխառնվեն, որպեսզի ձեզ չմոլորեցնեն, դեպի իրենց կուռքերը չդարձնեն»:

Սողոմոնի կանայք և հարճերը ծերության օրերին արքայի սիրտը օտար աստվածների կողմը դարձրին: Նա ծեր տարիքում ամբողջ հոգով չկապվեց իր Տիրոջը՝ Աստծուն և չընթացավ Տիրոջ ճանապարհով, ինչպես որ ընթացել էր իր հայրը:

Սողոմոնը Երուսաղեմի դիմաց, լեռան վրա օտար կուռքերի համար մի մեհյան կառուցեց: Նա մեհյաններ կառուցեց նաև իր բոլոր օտարազգի կանանց աստվածների համար: Այս ամենը բարկացրեց Տիրոջը՝ Իսրայելի Աստծուն: Նա երկու անգամ երևաց ու պատվիրեց նրան, որ օտար աստվածների հետևից չգնա և կատարի այն, ինչ Աստված պատվիրել էր իրեն: Տերն ասաց Սողոմոնին. «Քանի որ այդպես վարվեցիր՝ չպահեցիր իմ հրամաններն ու պատվիրանները, ես կխլեմ թագավորությունը քո ձեռքից և այն կտամ քո ծառային: Բայց, հանուն քո հայր Դավթի, քո կենդանության ժամանակ չեմ անի դա, այլ որդուդ ձեռքից կխլեմ թագավորությունը: Իմացիր նաև, որ ամբողջ թագավորությունը չեմ խլի, միայն այն սիրո համար, որ տածել եմ դեպի քո հայր Դավիթը և իմ ընտրած Երուսաղեմ քաղաքը: Ես Հուդայի և Շմավոնի ցեղախմբերից կազմված մի փոքրիկ թագավորություն կթողնեմ քո որդուն»:

71. Ովքե՞ր էին գործում Հին Կտակարանում

ա. Մարգարեները

բ. Առաքյալները

գ. Ավետարանիչները

72. Ովքե՞ր էին մարգարեները

ա. Գուշակներ

բ. Իմաստուններ

գ. Աստուծո խոսքը ժողովրդին փոխանցողները

Հին կտակարանյան ժամանակաշրջանը կարևորվում է նաև մարգարեների գործունեությամբ, որոնց բացառիկ դեր էր վերապահված: Նրանց խոսքն ու գործը որոշիչ նշանակություն է ունեցել հին հրեաների կյանքում: Մարգարեական գործունեության շրջանը բացում է Մովսես մարգարեն, որին Աստված ընտրեց իսրայելացիներին իր պատգամները փոխանցելու համար:

Մարգարեները ապագան կանխատեսելու աստվածատուր կարողությամբ օժտված հատուկ անհատներ էին, որոնց հիմնական գործառույթը Աստծու կամքն ու պատգամը մարդկանց հաղորդելն էր: Աստված ինքն էր իր համար ընտրում մարգարեներին՝ իր խոսքը ժողովրդին հաղորդելու համար: Այդ կերպ մարդիկ ավելի էին մոտենում Աստծուն:

Քանի որ նրանք կոչված են եղել հայտնելու Աստծու հրահանգները ու որոշումները, այդ իսկ պատճառով մարգարեները գործուն կերպով մասնակցել են երկրի քաղաքական, հասարակական կյանքին: Ինչպես օրինակ Հին Կտակարանի Թագավորների գրքերում Սամվել մարգարեն, երբ օծեց Սավուղ և Դավիթ մարգարեներին կամ Եղիա, Եղիսե, Աքիա և այլ մարգարեները, որոնք գործուն կապ ունեին թագավորների հետ՝ Աստծու խոսքը նրանց հաղորդելու համար:

Մարգարեներին հատուկ է եղել Աստծու հանդեպ հնազանդությունը, հավատարմությունը, անձնվիրությունը, խստակեցությունը: Կանխատեսելու շնորհը նրանց տրվել է ի վերուստ:

Մարգարեներն Աստծու հետ հաղորդակցվել են հայտնությամբ՝ տեսիլքի կամ երազի միջոցով, իսկ ստացված պատգամները նրանք հաղորդել են գրավոր կամ բանավոր խոսքով, նաև՝ զանազան հրաշքներով ու խորհրդավոր նշաններով:

73. Ո՞վ էր Եղիան

ա. Թագավոր

բ. Մարգարե

գ. Դատավոր

74. Ո՞ր թագավորից էր Եղիան թաքնվում

ա. Հովսափատ

բ. Աքաաբ

գ. Ռոբովամ

75. Ի՞նչ հրաշք գործեց Եղիան այրի կնոջ համար

ա. Կյանքը փրկեց

բ. Որդուն վերակենդանացրեց

գ. Կարասները ալյուրով ու յուղով լցրեց

76. Ո՞վ էր Բահաղը

ա. Իսրայելի թագավոր

բ. Մարգարե

գ. Քանաանական աստված

Երբ Իսրայելի թագավոր դարձավ Աքաաբը, նա Տիրոջ առաջ ավելի չար գտնվեց, քան իր նախորդները և օտար աստվածների համար մեհյաններ կառուցեց: Նա ամուսնացավ սիդովնացիների արքայադստեր՝ Հեզաբելի, հետ և սկսեց պաշտել Բահաղին, որը քանանական աստված էր: Նա նույնիսկ Բահաղի համար զոհասեղան կանգնեցրեց Սամարիայում:

Այդ ժամանակ Աստված ընտրեց Եղիա մարգարեին իր ձայնը մարդկանց լսելի դարձնելու համար: Աստված նրան ուղարկեց Աքաաբի մոտ՝ իր խոսքը փոխանցելու և քանի որ արքային ու նրա կնոջը դուր չէին գալիս մարգարեի ասածները, նրա բարկությունից ու վտանգից խուսափելու համար Տերը մարգարեին պատվիրեց փախչել և թաքնվել Հորդանան գետի դիմաց գտնվող Քերիթի հեղեղատի մոտ:

Աստված Եղիային պատվիրեց գնալ Սարեփթա, որտեղ մի այրի կին պիտի կերակրեր նրան: Մի անգամ այրի կնոջ տղան ծանր հիվանդացավ: Հիվանդությունն այնքան ծանր էր, որ տղան մահացավ: Այրին ասաց Եղիային. «Ի՞նչ գործ ունես ինձ հետ, ո՛վ Աստծու մարդ, եկել ես ինձ մոտ, որ մեղքե՞րս հիշեցնես ու որդո՞ւս սպանես»: Եղիան ասաց կնոջը. «Տո՛ւր ինձ քո որդուն»: Նա երեխային վերցրեց նրա գրկից, տարավ վերնատուն, որտեղ ինքն էր բնակվում, և նրան պառկեցրեց իր անկողնի վրա: Եղիան աղաղակելով ասաց. «Ո՛վ Տեր, ահա տեսնում ես այս այրի կնոջը, որի մոտ ես բնակվում եմ: Դու չարչարեցիր նրա որդուն և թողեցիր, որ մահանա»: Նա երեք անգամ փչեց մանկան վրա և աղաղակեց Տիրոջը՝ ասելով. «Տե՛ր իմ Աստված, այս երեխայի շունչն իրե՛ն թող վերադառնա»: Այդպես էլ եղավ. նա աղաղակեց, և Տերը լսեց Եղիայի ձայնը. երեխայի շունչը վերադարձավ նրա մարմնի մեջ, ու նա կենդանացավ: Եղիան առավ մանկանը, վերնատնից տուն իջեցրեց նրան, տվեց իր մորը՝ ասելով. «Տե՛ս, որ կենդանի է քո որդին»: Կինն ասաց Եղիային. «Հիմա համոզվեցի, որ դու Աստծու մարդն ես, և Տիրոջ ճշմարիտ խոսքն է քո բերանում»:

77. Ո՞վ հաջորդեց Եղիա մարգարեին

ա. Աքիա մարգարեն

բ. Եղիսե մարգարեն

գ. Երեմիա մարգարեն

78. Ի՞նչ հիվանդությունից փրկվեց Նեեման ասորին

ա. Կուրությունից

բ. Դիվահարությունից

գ. Բորոտությունից

Հյուսիսային Իսրայելի թագավորության մեջ Եղիա մարգարեի մահից հետո Եղիսե մարգարեն շարունակեց Աստծու պատգամները հաղորդել ժողովրդին:

Այդ ժամանակ իսրայելացիների թշնամի համարվող ասորիների զորքի հրամանատարը Նեեմանն էր, որ տառապում էր բորոտությամբ: Նրա տանը ծառայող մի հրեա աղջիկ Նեեմանի կնոջն ասում է. «Երանի թե իմ տերը գնար Աստծու մարգարեի մոտ, որը Սամարիայում է, նա նրան կբուժեր բորոտությունից»: Ասորիների արքան Նեեմանին թույլ է տալիս գնալ և բժշկվել:

Նեեմանը եկավ երիվարներով ու մարտակառքերով և կանգնեց Եղիսեի տան դռանը: Եղիսեն մարդ ուղարկեց նրա մոտ և ասաց. «Գնա՛ յոթ անգամ լվացվի՛ր Հորդանան գետում, քո մարմինը կբուժվի, և դու կմաքրվես»: Նեեմանը բարկացավ և գնաց՝ ասելով. «Ես էլ կարծում էի, թե գուցե դուրս կգա, կկանգնի ինձ մոտ, Տիրոջ՝ իր Աստծու անունը կտա, իր ձեռքը կդնի հիվանդ տեղի վրա և կբուժի իմ բորոտությունը: Մի՞թե Դամասկոսի Նաբանա և Փարփարա գետերն Իսրայելի բոլոր ջրերից ավելի լավ չեն, ինչո՞ւ չգնամ, չլվացվեմ դրանց մեջ և մաքրվեմ»: Եվ վերադառնալով՝ գնաց զայրացած: Ծառաները մոտեցան նրան ու ասացին. «Հա՛յր, եթե մարգարեն դժվար բան խնդրեր, չպե՞տք է կատարեիր: Նա միայն ասաց՝ “Լվացվի՛ր ու կմաքրվես”»: Նեեմանն իջավ ու յոթ անգամ թաթախվեց Հորդանան գետի մեջ, ինչպես Եղիսեն էր ասել, և նրա մարմինը դարձավ երեխայի մարմնի նման. նա մաքրվեց:

79. Աստված ո՞ւմ հետ համեմատեց իսրայելացի-ներին

ա. Անհավատարիմ կնոջ

բ. Ագահ մարդու

գ. Անկոչ հյուրի

Իսրայելի մարգարեներից Օսեեն ամուսնացել էր Գոմերի հետ: Նրանք երկու տղա և մեկ աղջիկ ունեին: Սակայն Գոմերը չէր ուզում տան գործերով զբաղվել, իր ամուսնուն և երեխաներին հոգ տանել: Մի օր նա որոշեց թողնել տունը, ամուսնուն և զավակներին, քաղաք գնալ և այնտեղ ապրել այնպես, ինչպես կկամենա: Օսեեն շատ էր սիրում կնոջը, այդ պատճառով նա անչափ վշտացավ, երբ Գոմերը հեռացավ տնից: Նա գիշեր ու զօր սպասում էր կնոջ վերադարձին: Այդ ժամանակ Աստված ասաց Օսեեին. «Ինչպես քո կինն անհավատարիմ գտնվեց և լքեց քեզ, այնպես էլ իսրայելացիները անհավատարիմ են ինձ: Նրանք ինձ թողնելով, գնացին կուռքերի հետևից: Նրանք ինձ պաշտելու փոխարեն երկրպագում են կուռքերին և նրանց են զոհեր մատուցում: Երկրում ոչ մի ճշմարտախոս, բարեգործ կամ ինձնից վախեցող մարդ չի մնացել: Մարդիկ երդվում են, ստում են, գողանում են, սպանում են միմյանց: Ինչպես դու քո կնոջն ես սիրում, ես էլ Իսրայելի իմ ժողովրդին եմ սիրում: Սիրտս խռովվում է, բայց բարկությունս նրանց վրա չպիտի թափեմ և երկիրը ավերակի չպիտի վերածեմ: - Ապա Տերը շարունակեց. – Օսեե՛, գնա՛ և կնոջդ գտի՛ր և տուն վերադարձրու»:

Օսեեն գնաց և գտավ իր կնոջը: Նա հարուստ մարդու տանը ստրուկ էր, որովհետև շատ պարտքեր էր ունեցել և վճարել չէր կարողացել: Օսեեն կնոջ համար փրկագին վճարեց և նրան հետ բերեց:

80. Ո՞ր թագավորը Եսայի մարգարեի միջնորդությամբ փրկվեց

ա. Աքազ

բ. Եզեկիա

գ. Մանասե

Իսրայելի թագավոր Եզեկիան հիվանդացավ անբուժելի հիվանդությամբ: Նրա մոտ եկավ Եսայի մարգարեն և ասաց. «Այսպես է ասում Տերը. “Կարգավորի՛ր քո ընտանեկան գործերը, որովհետև մեռնելու ես, չես ապրելու”»: Եզեկիան շրջվեց դեպի պատը և աղոթեց Տիրոջը՝ ասելով. «Ո՛վ Տեր, հիշիր ինձ, որովհետև ես քո առաջ արդարությամբ ու ճշմարիտ սրտով ապրեցի և քեզ համար հաճելի գործեր կատարեցի»: Եզեկիան մեծ ցավով լաց եղավ:

Տերն ասաց Եսայի մարգարեին. «Գնա՛ և ասա՛ Եզեկիային, թե այսպես է ասում Տերը՝ Աստված. “Ես եմ Տերը՝ Աստված, լսեցի քո աղոթքը և տեսա քո արցունքները: Քո կյանքը երկարացնում են տասնհինգ տարով: Ասորեստանի արքայի ձեռքից պիտի փրկեմ քեզ և քո քաղաքը ու պիտի պահապան լինեմ քո քաղաքին: Այն նշանը, թե Աստված կատարելու է իր խոսքը, թող հետևյալը լինի. “Ես տասը աստիճան հետ եմ դարձնելու մայր մտնող արեգակի ստվերը, որ ընկել է քո աստիճաններին”»:

Եվ անմիջապես ստվերը տասը աստիճան ետ գնաց: Եզեկիան կրկին աղոթեց Տիրոջը՝ ասելով. «Ո՛վ փրկիչ իմ Տեր, իմ կյանքի բոլոր օրերին քո աստվածային տաճարի առաջ սաղմոսարաններով կօրհներգեմ քեզ»:

81. Ի՞նչ կառուցեց Եզեկիա թագավորը, որն ապահովեց երուսաղեմցիներին անհրաժեշտ պաշարով քաղաքի շրջապատման դեպքում

ա. Ամուր պարիսպներ

բ. Ջրատար

գ. Ամրոց

Երբ Հուդան ասորեստանցիների սպառնալիքի տակ էր, Եզեկիա թագավորը քաղաքի շրջափակման դեպքում ջրամատակարարումն ապահովելու համար Գեհոնի աղբյուրից ժայռի միջով մի ջրատար փորել տվեց: Ջուրն աղբյուրից պիտի կարողանար հասնել 500մ հեռավորության վրա գտնվող բլրալանջի ստորգետնյա ջրամբարը: Փորվել են օդափոխիչ մի քանի հորանցքներ, որովհետև ջրատարը ոչ մի տեղ մակերես չի բարձրանում: Ողջ ջրատարը կարելի է կտրել անցնել առանց կռանալու:

Այս ջրատարն ուշագրավ նվաճում էր, որի նախագիծը և աշխատողների կողմից ժայռի վրա փորագրված արձանագրությունը հայտնում են, որ հորատողների երկու խումբ է գործել, որոնցից յուրաքանչյուրն աշխատել է մի կողմում:

82. Ինչպե՞ս Աստված մարգարեական շնորհ տվեց Երեմիա մարգարեին

ա. Լույսի շող իջավ Երեմիայի վրա

բ. Տերը ձեռքը երկարեց և դիպցրեց Երեմիայի բերանին

գ. Տերը ոսկե գավաթը դիպցրեց Երեմիայի բերանին

83. Ի՞նչ որոշում ընդունեց Երեմիա մարգարեն Երուսաղեմի բաբելացիներից գրավվելուց հետո

ա. Երեմիան որոշեց ընդունել Նաբուգոդոնոսորի առաջարկը և գնալ Բաբելոն

բ. Երեմիան նախընտրեց մնալ Երուսաղեմում իր ժողովրդի հետ

գ. Երեմիան որոշեց քաշվել անապատ և կյանքի մյուս կեսը միայնության մեջ ապրել

Երեմիան չհամաձայնեց գնալ Բաբելոն:

- Շատ լավ, ժողովրդիդ հետ մնա, - ասաց թագավորի զորավարն ու նրան ուտելիք ու դրամ տալով՝ հեռացավ:

Մարգարեն նախընտրեց Աստծու ժողովրդի հետ մնալ: Ավերակների վերածված Երուսաղեմ քաղաքում միայն ծայրահեղ աղքատներն էին մնացել:

Հոսիայի թագավորության տարիներին Երուսաղեմում մի երիտասարդ մարդ կար Երեմիա անունով: Նա պատրաստվում էր ծառայել Աստծու տաճարում՝ որպես քահանա:

Մի օր Տերն ասաց նրան. «Քո ծնունդից առաջ ես ընտրել էի քեզ որպես մարգարե»: Երեմիան ասաց. «Ես տակավին պատանի եմ, այսպիսի պատասխանատու գործի համար ես նույնիսկ լավ խոսել չգիտեմ: Ինձ վրա մի՛ դիր այդ պատասխանատվությունը»: Տերն ասաց Երեմիային. «Մի՛ ասա, թե պատանի ես: Ում մոտ էլ որ ուղարկեմ քեզ, պիտի գնաս ու ինչ որ պատվիրեմ քեզ, պիտի ասես: Չվախենա՛ս նրանցից, որովհետև ես քեզ հետ եմ և քեզ միշտ կառաջնորդեմ: -Տերը, ձեռքը երկարելով, դիպցրեց այն Երեմիայի բերանին և ասաց. “Ահա իմ խոսքը քո բերանը դրեցի”»:

Երեմիան շրջում էր քաղաքում և ժողովրդին հաղորդում Աստծու խոսքը, համաձայն որի բաբելացիները պիտի իշխեն Հուդայի վրա և որ հրեաները պիտի հպատակվեն Բաբելոնի արքային:

Այնուհետև Հուդայի Սեդեկիա թագավորի թագավորության իններորդ տարում Բաբելոնի Նաբուգոդոնոսոր արքան ամբողջ զորքով եկավ և պաշարեց Երուսաղեմը:

Զինվորները կործանեցին Երուսաղեմի պարիսպները, իսկ ժողովրդին որպես ստրուկ գերեցին Բաբելոն: Մինչ Երուսաղեմն այրվում էր, Նաբուգոդոնոսոր արքան իր մարդկանց ուղարկեց կողոպտելու տաճարի և պալատների գանձերը: Կրակների միջով զինվորները գռփում էին ոսկու և արծաթի յուրաքանչյուր կտոր, որ տեսնում էին: Տաճարից ոչինչ չմնաց: Թագավորն ամեն ինչ տարավ Բաբելոն, նույնիսկ բրոնզե հսկա այուները: Թագավորը միայն աղքատներին ու Երեմիա մարգարեին թողեց Երուսաղեմում: Նաբուգոդոնոսորը կարգադրել էր անվնաս թողնել մարգարեին: Թագավորի զորավարներից մեկը Երեմիային ասաց.

- Ամեն ինչ կատարվեց այնպես, ինչպես դու ասել էիր: Ժողովուրդը չհնազանդվեց Աստծուն, և նա կործանեց այս երկիրը: Դու հիմա ազատ ես. կարող ես մնալ այստեղ կամ մեզ հետ գալ Բաբելոն, որտեղ ապահով կլինես: Կամքը քոնն է:

84. Ի՞նչ էր Նաբուզոդոնոսորը հրամայել հիմնել գերեվարված հրեա պատանիների համար

ա. Հատուկ դպրոց

բ. Առանձին հավաքատեղի

գ. Առանձին սեղանատուն

85. Քանի՞ տարի հրեա պատանիները անցկացրեցին արքունի դպրոցում

ա. 1 տարի

բ. 3 տարի

գ. 7 տարի

86. Ի՞նչ փորձության միջով անցան պատանի Դանիելն ու նրա ընկերները

ա. Տաս օր անապատում ապրեցին

բ. Տաս օր միայն բանջարեղեն կերան ու ջուր խմեցին

գ. Տաս օր ծոմ պահեցին

Նաբուգոդոնոսոր արքան շատ հրեաների գերի տարավ Բաբելոն: Տասնութ տարի առաջ գերի տարված խմբի մեջ կային Հրեաստանի հայտնի ընտանիքների զավակներ: Նրանցից մեկը Դանիել անունով մի պատանի էր:

Թագավորը հրամայել էր, որ գերիների միջից գեղեցկադեմ, ուժեղ և խելացի պատանիներին հատուկ դպրոցում կրթեն: Այստեղ նրանք երեք տարի կուսանեին բաբելոնացի ուսուցիչների մոտ, այնուհետև լավագույն աշակերտը գործի կանցներ թագավորական պալատում:

Դանիելն ու նրա ընկերները՝ Անանիան, Միսայելը, Ազարիան, Բաբելոն գերված ամենախելացի պատանիներն էին: Բաբելոնացիները նրանց սովորեցնում էին իրենց լեզուն, գրականությունն ու պատմությունը: Տղաներին բաբելական անուններով կոչեցին. Դանիելն անվանակոչվեց Բաղդասար, Անանիան՝ Սեդրակ, Միսայելը՝ Միսակ, Ազարիան՝ Աբեդնագով:

Նաբուգոդոնոսորը կարգադրել էր լավագույն կերակուրը մատուցել պատանիներին: Նրանք ամեն օր թարմ բանջարեղեն ու միս պիտի ուտեին և գինի պիտի խմեին:

Սակայն Աստված իր ժողովրդի համար հատուկ կանոններ էր սահմանել այն մասին, թե ինչ կարելի է ուտել և ինչ չի կարելի, ուստի Դանիելն ու նրա ընկերները որոշեցին չխախտել Աստծու օրենքները: Երբ նրանք թագավորի գլխավոր պաշտոնայի հետ համաձայնության եկան և տաս օր փորձություն սահմանեցին՝ միայն բանջարեղեն ուտել և ջուր խմել, կարողացան հասնել նրան, որ իրենց ուսանելու տարիներին հրեաներին վայել ուտելիքներով սնվեն:

87. Նաբուգոդոնոսոր արքան ու՞ր նետեց Դանիել մարգարեի երեք ընկերներին՝ Սեդրակին, Միսակին և Աբեդնագովին

ա. Օձերով լի գբի մեջ

բ. Կրակի հնոցի մեջ

գ. Առյուծների գբի մեջ

Անցան շատ տարիներ: Նաբուգոդոնոսոր թագավորը մոռացավ, որ Դանիելի Աստծու մասին ասել էր, թե միակն է: Նա ոսկուց հսկայական արձան կանգնեցրեց ու դրան իր աստվածը կոչեց: Հետո հրաման արձակեց.

-Երբ սկսեն արքունի երաժշտություն նվագել, ամեն մեկը թող խոնարհվի և աղոթք մատուցի արձանին, այլապես նա կնետվի թեժ կրակի հնոցը:

Շուտով թագավորի մարդիկ նկատեցին, որ Դանիելի երեք ընկերները չեն երկրպագում ոսկյա արձանին: Այդ մասին իմանալով՝ Նաբուգոդոնոսորը հրամայեց Դանիելի ընկերներին պալատ բերել, որոնք համարձակորեն հրաժարվեցին պաշտել ոսկյա արձանին: Նաբուգոդոնոսորը խիստ զայրացավ և իր զինվորներին հրամայեց կապել Դանիելի ընկերների ձեռքերն ու ոտքերը և հնոցի մեջ գցել:

Երբ Դանիելի ընկերներին հնոցն էին նետում, կրակն այնքան թեժ էր, որ լափեց զինվորներին: Իսկ հետո թագավորն ավելի ապշեցուցիչ տեսարանի ականատես եղավ. երեք երիտասարդների կապերն արձակված էին, ու նրանք քայլում էին բոցերի մեջ: Նրանք բոլորովին անվնաս էին մնացել: Բայց առավել զարմանալին այն էր, որ նրանց հետ չորրորդ մարդ կար, որը կրակից ավելի պայծառ էր շողում: Զարմանքից քար կտրած թագավորը երեք երիտասարդներին հրամայեց դուրս գալ բոցերի միջից: Երբ նրանք դուրս եկան, չորրորդ մարդն անհետացել էր: Դանիելի ընկերները փրկված էին: Թագավորը տարուբերեց գլուխը:

- Աներևակայելի՛ է, - ասաց նա: - Իսկապես ձեր Աստվածն ամենամեծն է: Նա պաշտպանում է իրեն ապավինողներին: Այսուհետ թող ոչ ոք ձեր Աստծու մասին վատ բան չասի:

88. Ո՞վ հաջորդեց Նաբուգոդոնոսոր արքային

ա. Դարեհ Ա

բ. Բաղդասարը

գ. Կյուրոսը

Նաբուգոդոնոսորն ապրեց մինչև խոր ծերություն: Բաբելոնի հաջորդ թագավորը նրա որդի Բաղդասարն էր: Թեև արդեն ծերացած, բայր Դանիելն առաջվա պես թագավորի խորհրդականներից էր:

Պատահեց, որ Բաղդասարը մի մեծ խնջույք կազմակերպեց և գինուց արբենալով՝ պատվիրեց սրահ բերել իր հոր՝ Երուսաղեմի տաճարից թալանած ոսկյա և արծաթյա սպասքը: Երբ սպասքը բերեցին, թագավորն ու խնջույքի մասնակից մեծամեծները, հարճերն ու կանայք խմեցին դրանցով: Նրանք խմեցին գինին և օրհնեցին ոսկե, արծաթե, պղնձե, երկաթե, փայտե ու քարե աստվածներին, բայց չօրհնեցին հավիտենական Աստծուն: Դրա համար Աստված պատժեց նրան. հենց այդ գիշեր Բաղդասարը սպանվեց և բաբելոնյան կայսրությունը գրավեցին մարերն ու պարսիկները:

89. Բաբելոնյան գերության առաջին տարում ով-քե՞ր էին Տիրոջ մարգարեները

ա. Եսայի և Երեմիա

բ. Երեմիա և Եզեկիել

գ. Երեմիա և Դանիել

Ք.ա. 626թ. Հոսիա թագավորի օրոք Աստված ընտրեց Երեմիային իր խոսքը Երուսաղեմում փոխանցելու համար: Երեմիան բավական երիտասարդ էր և պատրաստվում էր քահանա դառնալ: Աստված բազում տեսիլքների միջոցով Երեմիային հայտնեց Հուդայի երկրին սպասվելիք չարիքները: Երեմիան մարգարեացավ բաբելացիներից սպասվող վտանգի և Հուդայի բնակիչների նրանց լծի տակ ընկնելու մասին: Չնայած Երեմիայի բոլոր նախազգուշացումներին՝ Երուսաղեմի թագավորներն ու բնակիչները չանսացին Աստծուպատգամին: Ի վերջո Բաբելոնի Նաբուգոդոնոսոր արքան գրավեց և ավերեց Երուսաղեմը: Նա իր զինվորներին հրաման տվեց կրակի մատնել Տիրոջ տաճարը, թագավորական պալատը: Նրանք հրկիզեցին Երուսաղեմի բոլոր տներն ու արժեքավոր շինությունները: Ողջ քաղաքը բոցերի մեջ էր: Զինվորները կործանեցին Երուսաղեմի պարիսպները, իսկ ժողովրդին որպես ստրուկ գերեցին Բաբելոն:

***

Նաբուքոդոնոսոր թագավորի կողմից, Երուսաղեմի առաջին գերեվարումից հետո (Ք.ա. 597թ.), Բաբելոն աքսորված իսրայելացիներից էր Եզեկիել քահանան, որ Երուսաղեմի տաճարի քահանաներից էր: Աքսորից մոտ չորս տարի հետո Աստված նրան կանչում է իր մարգարեն դառնալու: Աքսորավայրից Եզեկիելը նախազգուշացումներ է անում ինչպես Բաբելոն գերի տարված հրեաներին, այնպես էլ Երուսաղեմում մնացածներին: Եզեկիելին հայտնված տեսիքները հրեաների համար նաև ապագայի հույս են տալիս: Այն է՝ Իսրայելի ժողովուրդը հավաքաբար վերանորոգված և հարություն առած պիտի վերադառնա իր նախնյաց երկիրը:

90. Ինչո՞ւ համար Հոբը փորձության ենթարկվեց

ա. Աստծու առաջ մեղանչելու

բ. Աստծու հանդեպ անվերապահ հավատը ստուգելու

գ. Օրենքը խախտելու

91. Ովքե՞ր եկան Հոբին տեսության

ա. Երեք ընկերները

բ. Հրեշտակները

գ. Ծառաները

92. Աստծուց ներում ստանալուց հետո Հոբը քանի՞ տղա և աղջիկ ունեցավ

ա. Յոթը տղա և երեք աղջիկ

բ. Յոթը տղա և յոթն աղջիկ

գ. Երեք տղա և երեք աղջիկ

Շատ հարուստ մի մարդ կար, որի անունը Հոբ էր: Նա ճշմարտախոս էր ու անարատ, արդար էր ու աստվածապաշտ: Նա մեծ կարողության տեր էր՝ ուներ բազմաթիվ անասուններ և շատ սպասավորներ:

Մի օր Աստծու հրեշտակները եկան ու կանգնեցին Տիրոջ առաջ: Սատանան էլ եկավ: Տերն ասաց սատանային. «Որտեղից ես գալիս»: Սատանան պատասխանեց. «Երկրի վրա շրջելով՝ եկա»: Տերը հարցրեց, թե արդյոք սատանան ուշադրություն դարձրե՞լ է Հոբին, ապա ասաց, որ նրա նման ճշմարտախոս, աստվածապաշտ մարդ չկա երկրի վրա»: Սատանան ասաց. «Միթե Հոբը ձրի՞ է պաշտում Քեզ: Չէ՞ որ Դու ես պաշտպանել նրան, օրհնել ես այն ամենը, ինչ կա նրա շուրջը, բազմացրել ես անասունները: Եթե ձեռքդ զցես նրա ունեցվածքին, նա կանիծի Քեզ»:

Տերն ասաց սատանային. «Ահա նրա ամբողջ ունեցվածքը քո ձեռքն եմ տալիս, պայմանով, որ նրա անձին ձեռք չտաս»:

Պատահեց մի օր, որ մահացան Հոբի որդիներն ու դուստրերը, ապա թալանեցին նրա ունեցվածքն ու սպանեցին ծառաներին: Այնուհետև Հոբի մարմինը պատվեց չարորակ վերքերով: Այնուամենայնիվ նա չմեղանչեց Աստծու դեմ և հնազանդորեն ընդունեց բոլոր հարվածները:

Հոբի երեք ընկերները, լսելով նրա դժբախտությունների մասին, եկան նրան տեսության: Ընկերները, հեռվից տեսնելով Հոբին, չճանաչեցին նրան: Ապա մոտեցան, լաց եղան, որովհետև տեսան, թե ինչ սաստիկ հարվածներ էին հասել իրենց ընկերոջը և սկսեցին նրան մեղադրել՝ ասելով, որ Աստված պատժել է Հոբին գործած մեղքերի համար: Այդ կերպ նրանք Հոբին ստիպում են արդարանալ և ներում խնդրել Տիրոջից:

Երբ Աստված տեսավ Հոբի լուռ չարչարանքները և լսեց երեք ընկերների հետ ունեցած Հոբի զրույցը և հաստատակամ աստվածպաշտությունը, ողորմաց նրան: Տերը Հոբին կրկնակի շատ տվեց, քան այն հարստությունը, որ ուներ նա: Հոբը յոթը տղա և երեք աղջիկ ունեցավ: Նա երկար ապրեց ու վախճանվեց զառամյալ տարիքում:

93. Ի՞նչ է Յոթանասնիցը

ա. Հին Կտակարանի հունարեն թարգմանություն

բ. Հին Կտակարանի լատիներեն թարգմանություն

գ. Հին Կտակարանի ասորերեն թարգմանություն

94. Ինչու՞ ստեղծվեց Յոթանասնիցը

ա. Հունախոս հրեաների ընթերցանության համար

բ. Հռոմեական կայսրության իշխանավորներին ՀԿ-ին ծանոթացնելու համար

գ. Հունաստանում ՀԿ-ն տարածելու համար

95. Ինչու՞ է կոչվում Յոթանասնից թարգմանություն

ա. Յոթանասուն թվականին թարգմանված լինելու համար

բ. Յոթանասուն թարգմանիչների կողմից թարգմանված լինելու համար

գ. Յոթանասուն տարվա ընթացքում թարգմանված լինելու համար

Հին Կտակարանի ամենանշանավոր թարգմանություններից մեկը համարվում է հունարեն Յոթանասնից թարգմանությունը՝ SEPTUAGINTA-Սեպտուագինտա: Այս թարգմանությունը ստեղծվել է Ալեքսանդրիայում հունախոս հրեաների ընթերցանության համար, որից օգտվել են նաև առաջին դարի քրիստոնյաները:

Թարգմանության Յոթանասնից անվանումը ծագում է ոմն Արիստեոսի մի նամակից (1-ին դ. ն. Ք.), ըստ որի Եգիպտոսի Պտղոմեոս Ֆիլադելֆոս արքան (284-247 թթ. ն. Ք.) գրադարանավար Դիմիտրիոս Փալարեացու խորհրդով դիմում է Երուսաղեմի Եղիազար քահանայապետին՝ իրեն ուղարկելու հրեական Սուրբ Գրքի եբրայերեն բնագրի մեկ օրինակ, ինչպես նաև մարդիկ՝ այն հունարեն թարգմանելու համար: Քահանայապետն ուղարկում է Սուրբ Գրքի պահանջված օրինակը և 72 թարգմանիչներ, որոնք էլ կատարում են թարգմանությունը:

96. Ի՞նչ է Վուլգաթան

ա. Աստվածաշնչի ասորերեն թարգմանություն

բ. Աստվածաշնչի լատիներեն թարգմանություն

գ. Աստվածաշնչի հունարեն թարգմանություն

97. Ո՞վ է Վուլգաթա թարգմանության հեղինակը

ա. Էրազմ Ռոտերդամցին

բ. Հռոմի Դամասիոս պապը

գ. Հերոնիմոսը

98. Ի՞նչ է նշանակում Վուլգաթա թարգմանությունը

ա. Հասարակաց

բ. Դասական

գ. Մեկնողական

IV-V դդ. գոյություն են ունեցել լատիներեն մի շարք թարգմանություններ, որոնցից դժվար է եղել որոշել բնագրին առավել համապատասխանող տարբերակը: Անհրաժեշտություն էր առաջացել ստեղծելու լատիներեն լեզվով ամբողջական Աստվածաշունչի մի ընդունելի տարբերակ, որի հիման վրա Արևմտյան Եկեղեցին կարող էր հաստատել իր դավանաբանությունը: Իրավիճակը կարգավորելու նպատակով Դամասիոս I պապը (366-384 թթ.) հանձնարարել է լատիներեն թարգմանել ամբողջական Աստվածաշունչը: Այս աշխատանքը ստանձնել է Հռոմի պապի քարտուղար Հերոնիմոսը, ով լավագույնս տիրապետել է հունարեն և եբրայերեն լեզուներին և աչքի ընկել իր փայլուն կրթությամբ: Եբրայերեն ու արամեերեն բնագրերի հիման վրա Հերոնիմոսը 15 տարում լատիներեն է թարգմանել Հին Կտակարանը:

Հերոնիմոսը համարվում է Աստվածաշնչի առաջին թարգմանիչը: Նրա թարգմանությունը հայտնի է Վուլգաթա անվամբ, որ նշանակում է հասարակաց՝ այսինքն՝ «Համընդհանուր ընդունելություն գտած Աստվածաշունչ»:

99. Ինչպե՞ս է կոչվում Աստվածաշնչի ասորերեն թարգմանությունը

ա. Սեպտուագինտա

բ. Պեշիթո

գ. Վուլգաթա

100. Ե՞րբ է կատարվել Աստվածաշնչի ասորերեն թարգմանությունը

ա. 5-րդ դարում

բ. 7-րդ դարում

գ. 4-րդ դարում

Ասորերենը արամեերենի (Հիսուսի ժամանակ ժողովրդի հաղորդակցության լեզուն արամեերենն էր) բարբառ է:

Աստվածաշնչի ասորերեն ամբողջական թարգմանությունը հայտնի է Պեշիթո անվամբ, որ նշանակում է «պարզ»: Այս թարգմանությունն իրականացված է Պաղեստինում տարածված Սուրբ Գրքի եբրայերեն բնագրից:

Թեև հին ասորերենն այլևս չի գործածվում, համենայն դեպս IV դարում կատարված թարգմանությունը Աստվածաշնչի ասորերեն թարգմանությունը Սիրիայի, Իրանի, Հնդկաստանի և այլ երկրների քրիստոնյա նեստորականները մինչ օրս այս թարգմանությունը գործածում են եկեղեցական արարողությունների ժամանակ:

Պեշիթո թարգմանությունից են ծագում Ավետարանների պարսկերեն և արաբերեն թարգմանությունները:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

NEW TESTAMENT

1. Ո՞ւմ մայրն է Եղիսաբեթը

ա. Հիսուս Քրիստոսի

բ. Հովհաննես Մկրտչի

գ. Անդրեաս առաքյալի

2. Ի՞նչ էր Հովհաննես Մկրտչի հոր անունը

ա. Հերովդես

բ. Մաղաքիա

գ. Զաքարիա

3. Ի՞նչ եղավ, երբ Եղիսաբեթը լսեց Մարիամի ողջույնը

ա. Ուշաթափվեց

բ. Զարմացավ

գ. Երեխան որովայնում խաղաց

4. Զաքարիան ինչի՞ վրա գրեց, որ երեխայի անունը Հովհաննես է

ա. Քարի

բ. Պապիրուսի

գ. Տախտակի

Զաքարիան և Եղիսաբեթը ամուսիններ էին: Զաքարիան Երուսաղեմի տաճարում քահանա էր: Նրանք երկուսն էլ արդեն ծեր էին, սակայն երեխաներ չունեին:

Մի օր Զաքարիան գնաց տաճար: Մինչ ժողովուրդը դրսում կանգնած աղոթում էր, նա տաճարի ներսում խնկարկում էր զոհասեղանի առաջ: Երբ նա կանգնած էր զոհասեղանի առաջ, հանկարծ մի հրեշտակ հայտնվեց նրան: Զաքարիան սաստիկ վախեցավ: Իսկ հրեշտակը նրան ասաց. «Մի՛ վախեցիր, Զաքարիա: Աստված լսեց քո աղոթքը: Քո կին Եղիսաբեթը մի որդի կունենա, և դու նրան Հովհաննես կանվանես: Երբ նա մեծանա, կասի մարդկանց. ”Պատրաստվե՛ք, Աստված ձեզ Մեսիային է ուղարկում”»:

Զաքարիան ասաց հրեշտակին. «Ես և իմ կին Եղիսաբեթը ծեր ենք: Մենք այլևս չենք կարող երեխաներ ունենալ»:

Հրեշտակը նրան պատասխանեց. «Ես Գաբրիելն եմ, նա, ով Աստծու առաջ է կանգնում: Աստված ինձ ուղարկել է քեզ հետ խոսելու և այս բարի լուրն ավետելու: Բայց քանի որ դու իմ խոսքերին չես հավատում, այս պահից ի վեր կհամրանաս մինչև այն օրը, երբ երեխան ծնվի»:

Երբ Եղիսաբեթը հղիացավ, մի օր Մարիամը գնաց նրան այցելության, որովհետև ազգականուհիներ էին: Նա գնաց Զաքարիայի տուն և ողջունեց Եղիսաբեթին: Երբ Եղիսաբեթը լսեց նրա ողջույնը, երեխան որովայնում շարժվեց: Մարիամը երեք ամիս մնաց Եղիսաբեթի մոտ, այնուհետև վերադարձավ իր տուն:

Կարճ ժամանակ անց Եղիսաբեթը որդի ունեցավ: Հարևաններն ու ազգականները եկան մանկանը տեսնելու: Նրանք հարցրին Զաքարիային, թե ինչ անուն կցանկանար տալ մանկանը: Զաքարիան մի փոքրիկ տախտակ վերցրեց և վրան գրեց. «Հովհաննես է նրա անունը»: Եվ գրելուց անմիջապես հետո Զաքարիան դարձյալ կարողացավ խոսել:

5. Մարիամն ու՞մ հետ էր նշանված

ա. Հովսեփ ատաղձագործի

բ. Զաքարիայի

գ. Եղիազար քահանայի

6. Ո՞ր հրեշտակը հայտնվեց Մարիամին

ա. Միքայելը

բ. Ռաֆայելը

գ. Գաբրիելը

7. Ի՞նչ ասաց հրեշտակը Մարիամ Աստվածածնին ավետման ժամանակ

ա. Քո որդին հարություն պիտի առնի

բ. Քո որդին Հայր Աստծո աջ կողմում պիտի նստի

գ. Դու որդի կծնես

Նազարեթ քաղաքում Մարիամ անունով մի դեռատի աղջիկ էր ապրում: Նա նշանված էր Հովսեփ անունով մի մարդու հետ:

Մի օր Գաբրիել հրեշտակն Աստծու կողմից հայտնվեց Մարիամին և ասաց. «Ուրախացի՛ր, ո՛վ շնորհյալ, Աստված քեզ հետ է»: Մարիամը երկյուղեց, սակայն հրեշտակը նրան ասաց. «Մի՛ վախեցիր, Մարիա՛մ: Դու որդի կծնես և նրան Հիսուս կանվանես: Նա հայտնի կլինի, և մարդիկ նրան Բարձրյալի Որդի կկոչեն»:

Այդ ժամանակ Մարիամը հարցրեց. «Բայց ինչպե՞ս կարող է դա ինձ հետ պատահել, երբ ես ոչ մի տղամարդու չեմ ճանաչել»: Հրեշտակը պատասխանեց. «Սուրբ Հոգին կիջնի քեզ վրա, և Աստծու զորությունը կգործի այդ հրաշքը: Դրա համար էլ այդ երեխան Աստծու Որդի կկոչվի»:

Այդժամ Մարիամն ասաց. «Ես Տիրոջ աղախինն եմ: Թող կատարվի նրա կամքը, ինչպես որ դու ինձ ասացիր»:

8. Ո՞րն է Քրիստոսի ծննդավայրը

ա. Երուսաղեմը

բ. Բեթղեհեմը

գ. Նազարեթը

9. Որտե՞ղ ծնվեց Հիսուս

ա. Ամրոցում

բ. Իջևանատանը

գ. Գոմում

10. Ովքե՞ր հրեշտակների ավետիսով եկան մանուկ Հիուսին տեսնելու

ա. Քահանաները

բ. Մոգերը

գ. Հովիվները

11. Ո՞վ էր մանուկ Հիսուսի հայրը

ա. Սիմոն Ծերունին

բ. Հովսեփը

գ. Մովսեսը

Օգոստոս կայսրը հրաման արձակեց. «Իմ թագավորության մեջ ապրող բոլոր մարդիկ պետք է արձանագրվեն: Նրանց անունները պիտի գրվեն գրանցամատյաններում հարկատվության համար: Դրա համար ամեն ոք թող վերադառնա իր ծննդավայրը՝ գրանցվելու»:

Հովսեփը նույնպես, որ Դավթի ցեղից էր, պետք է գնար Դավթի քաղաք՝ Բեթղեհեմ՝ արձանագրվելու՝ ճամփորդելով Գալիլիայի Նազարեթ քաղաքից մինչև Բեթղեհեմ: Այսպիսով՝ նա Մարիամի հետ միասին Նազարեթից երկար ճանապարհ անցավ: Բեթղեհեմում իջևանատանը ազատ տեղ չգտան: Փոքր քաղաքը մարդաշատ էր: Ի վերջո նրանք մնալու տեղ գտան մի գոմում:

Այդ գիշեր Մարիամը ծնեց իր երեխային և նրան խանձարուրի մեջ փաթաթելով՝ դրեց մսուրում:

Այդտեղ՝ շրջակայքում ինչ-որ հովիվներ իրենց ոչխարներին էին հսկում: Հանկարծ նրանց շուրջը շլացուցիչ մի լույս փայլեց, և մի հրեշտակ հայտնվեց նրանց: Հովիվները վախեցան, սակայն հրեշտակն ասաց. «Մի՛ վախեցեք: Ձեզ ուրախ լուր եմ բերել: Աստված ձեզ ուղարկեց Փրկչին, որ խոստացել էր, և նա Քրիստոսն է՝ Տերը: Նա այսօր ծնվեց Դավթի քաղաքում: Սա է այն նշանը, որով պիտի ճանաչեք նրան. հիմա երբ Բեթղեհեմ գնաք, մսուրի մեջ դրված մի երեխա կգտնեք»:

Հանկարծ հայտնվեց հրեշտակների մի ամբողջ բազմություն, որոնք փառաբանում էին Աստծուն և երգում. «Փա՛ռք Բարձրյալ Աստծուն, և խաղաղությո՛ւն երկրի վրա: Սե՛ր և փրկությո՛ւն մարդկանց»:

Հովիվները շտապ գնացին Բեթղեհեմ և գտան Մարիամին ու Հովսեփին, ինչպես նաև երեխային՝ մսուրի մեջ դրված: Նրանք պատմեցին հրեշտակի՝ մանկան մասին ասած խոսքերը: Մարիամը բոլոր այդ խոսքերը պահեց իր սրտում և շարունակ խորհում էր դրանց մասին:

Հովիվները վերադարձան՝ իրենց լսածի ու տեսածի համար փառաբանելով ու օրհնելով Աստծուն:

Մարիամն ու Հովսեփը երեխային անվանեցին Հիսուս, ինչպես իրենց ասել էր հրեշտակը:

12. Հերովդեսն ումի՞ց իմացավ Հիսուսի ծնվելու մասին

ա. Մոգերից

բ. Քահանաներից

գ. Իմաստուններից

13. Ինչի՞ օգնությամբ մոգերը գտան մանուկ Հիսուսին

ա. Աստղի

բ. Հրեշտակի

գ. Հովիվների

14. Քանի՞ հոգի էին մոգերը

ա. 3

բ. 5

գ. 7

Երբ Հիսուսը ծնվեց Բեթղեհեմում, արևելքից երեք իմաստուն մոգեր հասան Երուսաղեմ: Նրանք գնացին Հերովդես թագավորի պալատ և հարցրին. «Որտե՞ղ է նորածին արքան: Մենք նրա աստղը փայլելիս տեսանք և եկանք նրան երկրպագելու»:

Երբ Հերովդեսն այս լսեց, շատ վրդովվեց. չէ՞ որ ինքն էր հրեաների արքան: Նա իր մոտ կանչեց Սուրբ Գրքին քաջատեղյակ բոլոր իմաստուններին և նրանց հարցրեց. «Որտե՞ղ պետք է ծնվի Մեսիան: Ո՞ր քաղաքում է ծնվելու թագավորը, որ խոստացել է Աստված»: Իմաստունները նրան պատասխանեցին. «Մարգարեներն ասում են, որ Մեսիան Բեթղեհեմում է ծնվելու»:

Հերովդեսը գաղտնի իր մոտ կանչեց մոգերին: Նա ցանկանում էր իմանալ, թե աստղն առաջին անգամ որտեղ է հայտնվել: Այնուհետև մոգերին ուղարկեց Բեթղեհեմ և հրամայեց նրանց. «Երբ գտնեք մանկանը, իմա՛ց տվեք ինձ, որպեսզի ես էլ գամ և երկրպագեմ նոր արքային»:

Մոգերը հետևեցին աստղին, և այն նրանց դեպի Բեթղեհեմ ուղղորդեց: Եկավ ու կանգ առավ գոմի վրա, որտեղ երեխան էր: Մոգերը ներս մտան, գտան նրան մոր՝ Մարիամի հետ և երկրպագեցին նրան: Այնուհետև նրան ընծաներ մատուցեցին՝ ոսկի, կնդրուկ և զմուռս:

Դրանից հետո մոգերն իրենց հայրենիք վերադարձան մեկ այլ ճանապարհով, որովհետև Աստված երազում հայտնվեց նրանց և հրամայեց այլևս չվերադառնալ Հերովդեսի մոտ:

15. Ի՞նչ որոշեց Հերովդեսը՝ իմանալով Հիսուսի Ծննդյան մասին

ա. Մանկանը գողանալ

բ. Մանկանը պահել պալատում

գ. Մանկանը սպանել

16. Հերովդեսից փրկելու համար Հովսեփն ու՞ր փախցրեց Հիսուսին

ա. Միջագետք

բ. Ասորիք

գ. Եգիպտոս

17. Փախուստից վերադառնալուց հետո Հովսեփը ո՞ր քաղաքում բնակվեց

ա. Նազարեթում

բ. Կափառնաումում

գ. Նեփթաղիմում

Հերովդես թագավորը չէր մոռացել Բեթղեհեմում ծնված թագավորի մասին մոգերի ասածը: Նա չէր ցանկանում իր երկրում մեկ այլ թագավոր ունենալ: Ուստի, երբ տեսավ, որ մոգերը չվերադարձան, որոշեց զինվորներ ուղարկել՝ մանկանը սպանելու:

Այդ ժամանակ Աստված Հովսեփի մոտ մի հրեշտակ ուղարկեց, որը հայտնվեց նրա երազում և ասաց. «Իսկույն վե՛ր կաց, վերցրո՛ւ մանկանն ու նրա մորը և նրանց հետ փախի՛ր Եգիպտոս, որովհետև Հերովդեսը ցանկանում է սպանել մանկանը»:

Այդժամ գիշերվա կեսին Հովսեփը վեր կացավ և մանկան ու Մարիամի հետ փախավ Եգիպտոս, որտեղ նրանք մնացին այնքան ժամանակ, մինչև Հերովդեսը մահացավ:

Մի գիշեր էլ հրեշտակը հայտնվեց Հովսեփին և ասաց. «Վե՛ր կաց, վերցրո՛ւ մանկանն ու նրա մորը և վերադարձի՛ր Երուսաղեմ: Ովքեր ցանկանում էին մանկանը սպանել, արդեն մահացել են»:

Այդպիսով՝ Հովսեփն ու Մարիամը Հիսուսի հետ վերադարձան Երուսաղեմ և հաստատվեցին Գալիլիայի Նազարեթ քաղաքում, որտեղ էլ Հիսուսը մեծացավ:

18. Հիսուսին ե՞րբ ընծայաբերեցին տաճարին

ա. Ծնունդից 40 օր անց

բ. 12 տարեկան հասակում

գ. Ծննդյան 8-րդ օրը

19. Տաճարում ո՞վ գիրկն առավ մանուկ Հիսուսին

ա. Աննան

բ. Սիմեոն ծերունին

գ. Զաքարիան

20. Ո՞վ էր Նոր Կտակարանում հիշվող Աննան

ա. Աստվածամոր մայրը

բ. Մարգարեուհի

գ. Յուղաբեր կանանցից մեկը

Հիսուսի ծնունդից քառասուն օր անց Մարիամն ու Հովսեփը նրան բերեցին Երուսաղեմի տաճար՝ Աստծուն գոհություն հայտնելու: Հիսուսը պետք է ընծայաբերվեր Աստծուն:

Այդ ժամանակ տաճարում Սիմեոն անունով մի ծեր մարդ կար: Աստված նրան խոստացել էր. «Չե՛ս մեռնի այնքան ժամանակ, մինչև չտեսնես Մեսիային, որ խոստացա»:

Երբ Մարիամն ու Հովսեփը Հիսուսին տաճար բերեցին, Սիմեոնն իր գիրկն առավ երեխային և փառաբանեց Աստծուն. «Այժմ, ո՛վ Տեր, կարող եմ խաղաղությամբ մեռնել, որովհետև իրականացրիր քո խոստումը: Ես դա տեսա իմ աչքով. ուղարկեցիր բոլոր մարդկանց Փրկչին»:

Տաճարում էր նաև Աննա անունով մի մարգարեուհի: Նա ծեր էր և միայն Աստծու համար էր ապրում: Երբ նա Հիսուսին տեսավ, նույնպես փառաբանեց Աստծուն և ասաց. «Այս մանուկը պիտի փրկի մարդկանց»:

21. Քանի՞ տարեկան էր Հիսուս, երբ Երուսաղեմի տաճարում զրուցում էր ուսուցիչների հետ

ա. 12

բ. 30

գ. 20

Զատկի տոնին, Հովսեփն ու Մարիամը, ինչպես մյուս հրեաները, գնում էին Երուսաղեմ: Այդ տոնը Իսրայելի ժողովրդին հիշեցնում էր եգիպտական գերությունից նրանց նախնիների ազատագրվելու մասին:

Երբ Հիսուսը տասներկու տարեկան էր, ծնողների հետ առաջին անգամ գնաց Երուսաղեմ՝ մասնակցելու Զատկի ամենամյա տոնակատարությանը: Նազարեթից Երուսաղեմ էին եկել Հովսեփի ու Մարիամի բազում ծանոթներ և բարեկամներ:

Զատիկը տոնելուց հետո բոլորը վերադարձան, սակայն Հիսուսը մնաց Երուսաղեմում: Երբ Հովսեփն ու Մարիամը նրան չտեսան, մտածեցին, թե հաստատ իրենց ազգականների հետ ինչ-որ տեղ է: Երեկոյան սկսեցին ամենուրեք փնտրել նրան: Քանի որ նրան այնտեղ չգտան, վերադարձան Երուսաղեմ՝ այդտեղ փնտրելու:

Նրան գտան տաճարում ուսուցիչների մեջտեղում նստած. ուշադիր լսում էր, թե ինչ են խոսում Աստծու մասին: Նրանց հարցեր էր տալիս, իսկ երբ իրեն էին հարցնում, պատասխանում էր: Բոլորը, ովքեր լսում էին նրան, զարմանում էին նրա իմաստնության ու պատասխանների վրա:

Մայրը նրան տեսնելուն պես մոտ վազեց ու ասաց. «Որդյա՛կ, ինչպե՞ս կարող էիր մեզ հետ այսպես վարվել: Ես ու հայրդ անհանգստացած քեզ ենք փնտրում»: Հիսուսը պատասխանեց. «Ինչո՞ւ էիք ինձ փնտրում, չգիտեի՞ք, որ ես Հորս տանը պետք է լինեմ»: Բայց նրանք չհասկացան, թե նա ինչ էր ուզում դրանով ասել:

22. Մինչև Իսրայելում երևալը, որտեղ էր ապրում Հովհաննես Մկրտիչը

ա. Իր տանը՝ Գալիլեայում

բ. Անապատում

գ. Մեռյալ ծովի եզերքին

23. Ինչպե՞ս է կոչվում Հովհաննես Մկրտիչը Եսայու մարգարեության մեջ

ա. Անապատում կանչողի պատվիրանը

բ. Անապատում կանչողի ձայնը

գ. Անապատում կանչողի կամքը

24. Ինչի՞ մազից էր Հովհաննես Մկրտչի հագուստը

ա. Ուղտի

բ. Այծի

գ. Ձիու

25. Ի՞նչն էր Հովհաննես Մկրտչի կերակուրը

ա. Մորեխ և վայրի մեղր

բ. Մեղր ու կաթ

գ. Հաց և մածուն

Երբ Հովհաննեսը՝ Եղիսաբեթի և Զաքարիայի որդին, մեծացավ, անապատ գնաց: Նրան Աստված էր այնտեղ կանչել: Նա քարոզում էր մարդկանց ու ասում. «Ապաշխարե՛ք և մկրտվե՛ք, որպեսզի Աստված ների ձեր մեղքերը»:

Հովհաննեսը կրում էր ուղտի բրդից հագուստ, իսկ մեջքին կաշվե գոտի ուներ: Նա սնվում էր մորեխներով և վայրի մեղրով:

Բազմաթիվ մարդիկ Երուսաղեմից գնում էին անապատ՝ լսելու, թե ինչ է խոսում Հովհաննեսը Աստծու մասին: Նա նրանց կոչ էր անում՝ ասելով. «Փոխե՛ք ձեր կյանքը: Ձեր գործերո՛վ ցույց տվեք, որ փոխվել եք»: Մարդիկ նրան հարցնում էին. «Արդ ի՞նչ անենք»: Իսկ նա պատասխանում էր. «Ով երկու շապիկ ունի, թող մեկը չունեցողին տա: Ով ուտելու բան ունի, թող մի քաղցածի կերակրի»:

Շատերն էին գալիս Հովհաննեսի մոտ և խոստովանում իրենց մեղքերը: Հովհաննեսը մկրտում էր նրանց Հորդանան գետում՝ ասելով. «Ես ձեզ մկրտում եմ ջրով, բայց ինձնից հետո կգա մեկը, ով ինձնից ավելի հզոր է, և ես արժանի չեմ նույնիսկ նրա կոշիկների կապերն արձակելու: Նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և հրով»:

Հովհաննես Մկրտչով իրականացավ Եսայու մարգարեությունը, որում ասվում էր. «Անապատում կանչողի ձայնն է.

> “Պատրաստե՛ք Տիրոջ ճանապարհը
> և հարթե՛ք մեր Աստծու շավիղները”»:

26. Ո՞վ մկրտեց Հիսուսին

ա. Հովհաննեսը

բ. Հովսեփը

գ. Մարիամը

27. Ո՞ր գետում մկրտվեց Հիսուս

ա. Տիգրիս

բ. Եփրատ

գ. Հորդանան

28. Ի՞նչ անվանեց Հիսուսին Մկրտիչը

ա. Աստծո Աղավնի

բ. Աստծո Գառ

գ. Աստծո Որդի

29. Մկրտության ժամանակ Սուրբ Հոգին ի՞նչ տեսքով իջավ Հիսուսի վրա

ա. Արագիլի

բ. Սավառնող արծվի

գ. Աղավնու

30. «Դա է իմ սիրելի Որդին, որն ունի իմ ամբողջ հաճությունը»,- որտեղի՞ց լսվեց այս խոսքը

ա. Լեռան միջից

բ. Երկնքից

գ. Հորդանան գետից

Հիսուսը Գալիլեայից եկավ Հորդանան՝ Հովհաննեսի կողմից մկրտվելու: Երբ նա տեսավ դեպի իրեն եկող Հիսուսին, ասաց. «Ահա Աստծու Գառը, որ վերացնում է աշխարհի մեղքը: Սա է նա, որի մասին ասում էի, թե իմ հետևից է գալիս. մարդ, որը ինձնից մեծ եղավ, որովհետև ինձնից առաջ էլ կար: Իսկ ես չէի ճանաչում նրան, բայց որպեսզի հայտնի լինի Իսրայելին, դրա համար եկա ջրով մկրտելու»:

Հովհաննեսն իմանալով, որ Հիսուս եկել է իր կողմից մկրտվելու՝ կանխեց նրան և ասաց. «Ես պետք է քեզնից մկրտվեմ, և դո՞ւ ես ինձ մոտ գալիս»: Հիսուսը պատասխանեց նրան՝ ասելով. «Թո՛ւյլ տուր այժմ, որովհետև Աստծու ծրագիրն այս է, որ մենք կատարենք ամբողջ արդարությունը»: Այն ժամանակ Հովհաննեսը թույլ տվեց նրան մկրտվել: Հիսուսը մկրտվելուց հետո իսկույն դուրս ելավ ջրից: Եվ ահա երկինքը բացվեց նրան, և տեսավ Աստծու Հոգին, որ աղավնու տեսքով իջնում էր և գալիս էր իր վրա: Երկնքից մի ձայն լսվեց, որ ասում էր. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որը ստացավ իմ բարեհաճությունը»:

31. Մկրտությունից հետո Հիսուս քանի՞ օր մնաց անապատում

ա. 7

բ. 12

գ. 40

32. Անապատում ովքե՞ր էին ծառայում Հիսուսին

ա. Սատանան

բ. Հրեշտակները

գ. Կենդանիները

Մկրտությունից հետո Աստված Հիսուսին դեպի անապատ առաջնորդեց: Նա այնտեղ քառասուն օր ու գիշեր ծոմ պահելուց հետո քաղց զգաց:

Այդ ժամանակ սատանան փորձեց նրան՝ ասելով. «Եթե դու Աստծու Որդին ես, հրամայի՛ր, որ այս քարերը հաց դառնան»: Հիսուսը պատասխանեց. «Գրված է. “Մարդ ոչ միայն հացով է ապրում, այլև ամեն խոսքով, որ ելնում է Աստծու բերանից”»:

Ապա սատանան Հիսուսին տարավ Երուսաղեմ, կանգնեցրեց նրան տաճարի ամենաբարձր տեղում և ասաց. «Եթե դու Աստծու Որդին ես, քեզ այստեղից ցա՛ծ նետիր, որովհետև գրված է. “Աստված պիտի հրամայի իր հրեշտակներին, և նրանք քեզ իրենց ձեռքերի վրա պիտի վերցնեն, որպեսզի ոտքդ քարին չխփես”»: Սակայն Հիսուսը նրան ասաց. «Գրված է. “Չփորձե՛ս Տիրոջը՝ քո Աստծուն”»:

Սատանան կրկին Հիսուսին իր հետ վերցրեց և մի բարձր լեռ տարավ: Այնտեղից նա Հիսուսին ցույց տվեց աշխարհի բոլոր թագավորությունները և երկրի ողջ փառքը: Նա ասաց. «Այս ամենը քեզ կտամ, եթե առջևս ընկնելով՝ ինձ երկրպագես»: Հիսուսը նրան ասաց. «Հեռացի՛ր, սատանա՛: Գրված է. “Տիրոջը՝ քո Աստծուն կերկրպագես և միայն նրան կծառայես”»:

Այդ ժամանակ սատանան թողեց Հիսուսին, և եկան հրեշտակներն ու ծառայեցին նրան:

33. Քանի՞ հոգի էին առաքյալները

ա. 7

բ. 24

գ. 12

Հիսուսը Նազարեթից շարժվեց դեպի Կափառնաում, որ ձկնորսական մի քաղաք էր Գեննեսարեթ լճի ափին:

Բազմաթիվ մարդիկ հավաքվեցին՝ Աստծու խոսքը լսելու: Հիսուսը կանգնել էր լճի ափին, իսկ մարդիկ խռնվել էին նրա շուրջը:

Լճափին ձկնորսական երկու նավակներ կային կապված: Ձկնորսները ցամաք էին ելել և ուռկաններն էին լվանում: Նրանցից մեկի անունը Սիմոն Պետրոս էր: Հիսուսը նրան խնդրեց. «Թո՛ւյլ տուր ինձ քո նավակը բարձրանալ և այն մի քիչ հեռացրո՛ւ, որպեսզի կարողանամ մարդկանց հետ խոսել: Այդ կերպ նրանք կկարողանան ինձ տեսնել ու լսել»: Հիսուսը նստեց նավակի մեջ ու այնտեղից ուսուցանեց մարդկանց բազմությանը: Երբ նա իր խոսքն ավարտեց, Պետրոսին ասաց. «Ընկերներիդ հետ նավարկի՛ր լճի խորքը, և այնտեղ նետե՛ք ուռկանները»: Պետրոսն ասաց. «Ամբողջ գիշեր չարչարվեցինք և ոչինչ չբռնեցինք: Սակայն քանի որ դու ես ասում, մի անգամ էլ կփորձենք»: Հենց ուռկանը ծովը ձգեցին, այնքան շատ ձուկ որսացին, որ ուռկանները սկսեցին պատռվել: Նրանք լուր տվեցին մեկ այլ նավակի մեջ նստած ձկնորսներին, որպեսզի օգնության հասնեն: Նրանք եկան, ու երկու նավակներն էլ սուզվելու աստիճան ձկներով լցվեցին: Պետրոսն իր տեսածից շատ վախեցավ. նա ծնկի իջավ Հիսուսի առաջ ու ասաց. «Դո՛ւրս արի իմ նավակից, Տե՛ր, որովհետև ես մեղավոր մարդ եմ»: Նա դրանք ասաց երկյուղից դրդված, որովհետև այդքան շատ ձուկ երբևէ չէին որսացել: Մյուս ձկնորսներն էլ էին նույն զգացողությամբ:

Բայց Հիսուսը նրանց ասաց. «Մի՛ վախեցեք. դու և մյուս ձկնորսները պետք է իմ աշակերտները դառնաք, ինձ հետ պիտի գաք: Պիտի օգնեք մարդկանց ավետելու այն լուրը, որ Աստված նրանց սիրում է»:

Այդ ժամանակ ձկնորսները նավակներն ափին ամրացրին, ամեն ինչ թողեցին և Հիսուսին հետևեցին: Հիսուսն ուրիշների էլ իր մոտ կանչեց: Վերջապես նրա աշակերտների թիվը դարձավ տասներկու, և նրանք միշտ Հիսուսի հետ էին:

34. Քանի՞ տարեկան էր Հիսուս, երբ սկսեց իր գործունեությունը

ա. 30

բ. 25

գ. 33

35. Քանի՞ տարեկան էր Հիսուս, երբ խաչվեց

ա. 20

բ. 30

գ. 33

36. Հիսուսին հետևող կանանցից ովքե՞ր էին կանգնած խաչի մոտ խաչելության ժամանակ

ա. Աստվածամայրն ու Սողոմեն

բ. Աստվածամայրը, Մարթան և Հովհաննան

գ. Աստվածամայրը, Կղեոպասի կին Մարիամը և Մարիամ Մագդաղենացին

37. Ի՞նչ ասաց Հիսուս հոգին ավանդելուց առաջ

ա. «Ամեն ինչ հիմա է սկսում»

բ. «Ամեն ինչ անցյալ է»

գ. «Ամեն ինչ կատարված է»

Երբ Հիսուս սկսեց երկրի վրա քարոզել Աստծու Խոսքը, երեսուն տարեկան էր: Նրա երկրային գործունեությունը տևեց շուրջ երեք տարի, որից հետո հրեաները նրան խաչը հանեցին:

Հիսուսի խաչի մոտ կանգնած էին նրա մայրն ու մորաքույրը՝ Կղեոպասի կին Մարիամը, և Մարիամ Մագդաղենացին: Երբ Հիսուսը տեսավ մորն ու նրա մոտ կանգնած սիրելի աշակերտին, մորն ասաց. «Ո՛վ կին, ահա քո որդին»: Ապա աշակերտին ասաց. «Ահա քո մայրը»: Եվ այդ պահից սկսած՝ աշակերտը նրան իր մոտ վերցրեց:

Այնուհետև Հիսուսը, իմանալով, թե ահա ամեն ինչ կատարված է, որպեսզի իրականանա գրվածը, ասաց. «Ծարավ եմ»: Այնտեղ քացախով լի մի աման կար. լեղախառն քացախով մի սպունգ թրջեցին, դրեցին եղեգի ծայրին ու մոտեցրին նրա բերանին: Երբ Հիսուսը լեղախառն քացախը բերանն առավ, ասաց. «Ամեն ինչ կատարված է»: Եվ գլուխը կախելով՝ հոգին ավանդեց:

38. Որտե՞ղ Հիսուս կատարեց առաջին հրաշքը

ա. Կանայում

բ. Բեթսայիդայում

գ. Բեթփագեում

39. Ո՞րն է Հիսուսի առաջին հրաշքը

ա. Ջուրը գինու փոխելը

բ. Հացը բազմացնելը

գ. Ծովի վրայով քայլելը

40. Կանայի հարսանիքում Կանան ո՞վ է/ ի՞նչ է

ա. Փեսան է

բ. Հարսն է

գ. Բնակավայր է

Գալիլեայում Կանա անունով մի բնակավայր կար, որտեղ հարսանիք էր: Հարսանիքին հրավիրված էին Հիսուսը և նրա աշակերտները, ինչպես նաև Մարիամը՝ Հիսուսի մայրը: Շատ ուրախ խնջույք էր, և մարդիկ բավականաչափ կերան ու գինի խմեցին: Բայց պատահեց այնպես, որ տակառների միջի գինին սպառվեց: Այդ ժամանակ Մարիամը Հիսուսին ասաց. «Նրանք այլևս գինի չունեն»: Հիսուսը նրան պատասխանեց. «Դու ինձ հետ ի՞նչ գործ ունես, ո՛վ կին. իմ ժամանակը դեռ չի հասել»:

Ապա Մարիամը սպասավորներին ասաց. «Ինչ որ ձեզ ասի, ամենը արե՛ք»:

Հիսուսը դուրս ելավ: Այնտեղ կային գինու քարե վեց մեծ տակառներ: Հիսուսը սպասավորներին ասաց. «Տակառները ջրո՛վ լցրեք»: Նրանք տակառները բերնեբերան լցրին: Դրանից հետո Հիսուսն ասաց. «Դրանից մի քիչ լցրե՛ք և տվե՛ք սեղանապետին»: Սեղանապետը չգիտեր, որ քարե տակառների մեջ ջուր էին լցրել. միայն սպասավորները գիտեին: Նա այն համտեսեց ու փեսային ասաց. «Բոլորը նախ ընտիր գինին են մատուցում, հետո՝ վատը: Իսկ դու ընտիր գինին մինչև հիմա պահել ես»:

Սա առաջին հրաշքն էր, որ Հիսուսը գործեց: Այս կերպ նա ցույց տվեց իր փառքը, և նրա աշակերտները հավատացին նրան:

41. Քրիստոս եկավ օրենքն ի՞նչ անելու

ա. Լրացնելու

բ. Պակասեցնելու

գ. Ջնջելու

ՀԱՅԿ

Հիսուսի ժողովրդին քարոզելու ժամանակ փարիսեցիներն ու օրենսգետները նրան հաճախ հանդիմանում էին մովսիսական օրենքին հակառակ ընթանալու և ավանդույթները խախտելու համար: Այդ պատճառով նրանք շրջում էին Հիսուսի հետևից և փորձում ծուղակը գցել նրան: Մի անգամ Հիսուսը նկատելով նրանց չար մտադրությունը, անդրադարձավ նաև օրենքին՝ ասելով. «Մի՛ կարծեք, թե Օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա, չեկա ջնջելու, այլ լրացնելու: Ճշմարիտ եմ ասում ձեզ, մինչև երկինքն ու երկիրն անցնեն, Օրենքից ու մարգարեներից մի հովտ անգամ, որ մի փոքրիկ գրանշան է, չի անցնի, մինչև որ ամեն ինչ չիրականանա»:

42. Ո՞ր աղոթքը սովորեցրեց Հիսուս

ա. Առավոտյան

բ. Հիվանդության

գ. Տերունական

Պատահեց, որ Հիսուսը մի տեղ աղոթքի էր կանգնած. և երբ վերջացրեց, նրա աշակերտներից մեկն ասաց նրան. «Տե՛ր, մեզ աղոթե՛լ սովորեցրու, ինչպես Հովհաննեսը սովորեցրեց իր աշակերտներին»: Նա ասաց նրանց. «Երբ աղոթքի կանգնեք, ասե՛ք.

Հա՛յր մեր, սուրբ թող լինի քո անունը.
քո արքայությունը թող գա:
Մեր հանապազօրյա հացը տո՛ւր մեզ ամեն օր:
Եվ ների՛ր մեզ մեր մեղքերը,
ինչպես մենք էլ ներում ենք ամեն մարդու,
որ հանցանք է գործում մեր դեմ,
և մի՛ տար մեզ փորձության»:

Այս աղոթքը հայտնի է «Տերունական աղոթք» անվամբ, քանի որ այն մարդկանց ուսուցանեց Տերը:

43. Ո՞վ մատնեց Հիսուսին

ա. Հուդան

բ. Պետրոսը

գ. Թովմասը

Ձերբակալությունից առաջ Հիսուսը ժամանակի մեծ մասն աշակերտների հետ էր անցկացնում՝ փորձելով բացատրել այն ամենը, ինչ կատարվելու էր իր հետ: Եկել էր ժամանակը, երբ մարգարեների կողմից վաղուց իր մասին ասված բոլոր խոսքերն իրականություն պիտի դառնային:

Միայն Հիսուսը չէր, որ պատրաստվում էր իր մահվանը: Քահանայապետներն ու կրոնի ուսուցիչները միմիայն նրա մահվան մասին էին մտածում: «Մենք պետք է ձերբակալենք Հիսուսին, սակայն դա պետք է աննկատ անենք», - ասում էին նրանք միմյանց:

Նրանք իրար զգուշացնում էին. «Մենք չպետք է Զատկի տոնին ձերբակալենք Հիսուսին, որովհետև շատերն են հավատում, որ նա է Քրիստոսը: Եթե նրանք իմանան Հիսուսի ձերբակալության մասին, խռովություն կծագի»:

Զատկի տոնին երկու օր էր մնացել: Մինչ կրոնի ուսուցիչները ծրագրում էին Հիսուսի ձերբակալությունը, Հուդա Իսկարիովտացին գնաց նրանց մոտ, ինչը խիստ զարմացրեց նրանց:

- Հուդան Հիսուսի տասներկու աշակերտներից մեկն է, - ասաց առաջնորդներից մեկը:

- Նա նաև աշակերտների գանձապահն է, - ասաց մեկ ուրիշը:

- Որքա՞ն կվճարեք ինձ, եթե Հիսուսին հանձնեմ ձեզ, - հարցրեց Հուդան:

Քահանայապետներին դուր եկան Հուդայի խոսքերը, և նրանք գոհ ձեռքերն իրար շփելով՝ պատասխանեցին.

- Երեսուն արծաթ:

Այդ էր Հիսուսի մատնության գինը:

Այդ օրվանից Հուդան հարմար պահ էր փնտրում Հիսուսին մատնելու համար: Նա երկար չսպասեց:

44. Ո՞վ էր 13-րդ առաքյալը

ա. Փիլիպոսը

բ. Պողոսը

գ. Հովհաննեսը

45. 13-րդ առաքյալը մինչև քրիստոնյա դառնալը ո՞վ էր

ա. Հեթանոս

բ. Եկեղեցու հալածիչ

գ. Հրեա իշխանավոր

Հիսուսի համբարձումից հետո սկսեցին հալածել նրա հետևորդներին: Այդ հալածանքների ժամանակ առաջին նահատակը եղավ Ստեփանոսը, որ հունախոս հրեա էր և մեկն էր առաքյալների կողմից ընտրված այն յոթ սարկավագներից: Ստեփանոսի քարկոծությանը ներկա էր նաև Սավուղ անունով մեկը: Սավուղը կամ Սողոսը իրավունք ստանալով հալածել Հիսուսի հետևորդներին՝ ճամփորդեց Պաղեստինից մինչև Դամասկոս: Դամասկոսի մոտակայքում Սավուղի շուրջը հանկարծ մի լույս փայլատակեց: Նա գետին ընկավ և լսեց մի ձայն, որն իրեն ասում էր.

- Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչո՞ւ ես հալածում ինձ:

- Ո՞վ ես, Տե՛ր, – հարցրեց ինքը:

Ձայնը պատասխանեց.

- Ես Հիսուսն եմ, ում դու հալածում ես: Ոտքի՛ կանգնիր և Դամասկո՛ս մտիր, ու քեզ այնտեղ կասեմ, թե ինչ պետք է անես:

Երբ նա ոտքի կանգնեց, փորձեց շուրջը նայել, բայց ոչինչ չտեսավ:

Նրան ուղեկցողները, զարմանքից քարացած, լսում էին Հիսուսի ձայնը, սակայն ոչ ոքի չէին տեսնում: Դամասկոսում երեք օր հետո նրան գտավ Տիրոջ կողմից ուղարկված Անանիան և բժշկեց նրա կուրացած աչքերը: Այնուհետև Սավուղը մկրտվեց և Դամասկոսում Հիսուսի առաքյալներին միացավ:

Դարձի գալով՝ նա իր ողջ կյանքը նվիրեց Հիսուսին քարոզելուն և քրիստոնեական համայնքների զորացմանը: Հետագայում Սավուղը հայտնի դարձավ Պողոս անունով և դարձավ Հիսուսի 13-րդ առաքյալը:

Պողոսը հայտնի է նաև հեթանոսների առաքյալ անունով, որովհետև ավետարանել է հեթանոսների շրջանում:

46. Ի՞նչ մասնագիտություն ունեին Պետրոս և Անդրեաս առաքյալները

ա. Հյուսն

բ. Հողագործ

գ. Ձկնորս

47. Ու՞մ բանտարկվելուց հետո Հիսուս եկավ Գալիլեա

ա. Հովհաննեսի

բ. Թովմասի

գ. Հուդայի

Հովհաննեսի բանտարկվելուց հետո Հիսուսը Գալիլեա եկավ. նա քարոզում էր Աստծու Ավետարանը և ասում. «Լրացել է ժամանակը, և մոտեցել է Աստծու արքայությունը. ապաշխարե՛ք և հավատացե՛ք Ավետարանին»: Երբ նա անցնում էր Գալիլեայի լճի եզերքով, տեսավ Սիմոնին և նրա եղբորը՝ Անդրեասին, որոնք ուռկանները ջուրն էին գցում, որովհետև ձկնորս էին: Հիսուսը նրանց ասաց. «Եկե՛ք իմ հետևից, և ես ձեզ մարդկանց ձկնորսներ կդարձնեմ»: Իսկույն թողնելով ուռկանները՝ գնացին նրա հետևից: Այդտեղից մի փոքր առաջ գնալով՝ տեսավ Զեբեդեոսի որդի Հակոբոսին և նրա եղբորը՝ Հովհաննեսին նավակի մեջ, երբ ուռկաններն էին կարգի բերում, և կանչեց նրանց: Նրանք էլ, իրենց հորը՝ Զեբեդեոսին, վարձու աշխատողների հետ թողնելով նավակի մեջ, իսկույն գնացին նրա հետևից:

48. Դիվահարից ելնելով, ո՞ր կենդանիների մեջ մտան դևերը

ա. Ձիերի

բ. Խոզերի

գ. Այծերի

ՀԱՍ

Երբ լճի այն կողմը՝ գերգեսացիների երկիրն անցան, Հիսուսի դեմ ելան երկու դիվահար, որոնք դուրս էին եկել գերեզմաններից: Նրանք այնքան կատաղի էին, որ ոչ ոք չէր կարողանում անցնել այդ ճանապարհով: Եվ ահա սրանք աղաղակեցին և ասացին. «Ի՞նչ կա մեր և քո միջև, Հիսո՛ւս, Որդի՛ Աստծո, եկար, որ մեզ ժամանակից շուտ տանջե՞ս»: Նրանցից ավելի հեռու խոզերի մի երամակ էր արածում: Դևերն աղաչում էին նրան և ասում. «Եթե մեզ այստեղից հանում ես, թո՛ւյլ տուր՝ խոզերի երամակը գնանք»: Ասաց նրանց՝ գնացե՛ք: Դևերը դուրս եկան գնացին խոզերի երամակը: Եվ ամբողջ երամակը դարավանդից դեպի լիճը թափվեց, և խոզերը ջրում սատկեցին: Խոզարածները փախան և քաղաք գնալով՝ պատմեցին ամեն ինչ, նաև դիվահարներին պատահածը: Եվ ահա ամբողջ քաղաքը Հիսուսին ընդառաջ ելավ: Երբ նրան տեսան, աղաչեցին, որ հեռանա իրենց սահմաններից:

49. Ու՞մ է ցույց տալիս Հիսուս, երբ ասում է. «Եթե չփոխվեք և ... նման չլինեք, երկնքի արքայություն չեք մտնի»

ա. Երեխաներին

բ. Սրբերին

գ. Հրեշտակներին

Հիսուսի քարոզության ժամանակ նրան հետևող ժողովրդի մեջ կային նաև մանուկներ: Մի օր երբ աշակերտները մոտեցան Հիսուսին և հարցրին, թե իրենցից ո՞վ է մեծ երկնքի արքայության մեջ, Հիսուսն իր մոտ կանչեց մի մանկան, նրան կանգնեցրեց նրանց մեջտեղում և ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չփոխվեք և մանուկների նման չլինեք, երկնքի արքայություն չեք մտնի: Արդ, ով իր անձը խոնարհեցնի, ինչպես այս մանուկն է, նա՛ է մեծ երկնքի արքայության մեջ: Եվ ով իմ անունով մի այսպիսի մանկան ընդունի, ի՛նձ ընդունած կլինի: Ով ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին գայթակղեցնի, նրա համար ավելի լավ է, եթե նրա պարանոցից գրաստի երկանաքար կախվի, և նա սուզվի ծովի խորքը: Վա՛յ աշխարհին՝ գայթակղությունների պատճառով: Հարկ է, որ գայթակղությունները գան, բայց վա՛յ այն մարդուն, որի միջոցով գայթակղություն կգա: Եթե ձեռքդ կամ ոտքդ գայթակղեցնում է քեզ, կտրի՛ր այն և դե՛ն նետիր քեզնից. քեզ համար ավելի լավ է մեկ ձեռքով կամ կաղ մտնել կյանք, քան թե երկու ձեռք ու երկու ոտք ունենալ և հավիտենական կրակի մեջ ընկնել: Եվ եթե աչքդ գայթակղեցնում է քեզ, հանի՛ր այն և դե՛ն նետիր քեզնից. քեզ համար ավելի լավ է մեկ աչքով հավիտենական կյանք մտնել, քան թե երկու աչք ունենալ և գեհենի կրակն ընկնել:

Զգո՛ւյշ եղեք, չարհամարհեք այս փոքրիկներից որևէ մեկին. ասում եմ ձեզ, որ նրանց հրեշտակները երկնքում մշտապես տեսնում են իմ երկնավոր Հոր երեսը. որովհետև Մարդու Որդին եկավ կորածին փրկելու»:

50. Քրիստոս առաքյալներին պատվիրեց, որ մարդկանց մկրտեն ու՞մ անունով

ա. Հոր և Որդու

բ. Հոր և Սուրբ Հոգու

գ. Հոր, Որդու և Սուրբ Հոգու

Հիսուսի համբարձվելուց առաջ տասնմեկ աշակերտները գնացին Գալիլեա, այն լեռը, որտեղ Հիսուսը ժամադրվել էր իրենց հետ: Երբ Հիսուսին տեսան, երկրպագեցին նրան: Հիսուսը մոտեցավ, խոսեց նրանց հետ և ասաց. «Ինձ տրվեց ամեն իշխանություն երկնքում ու երկրի վրա: Ինչպես որ Հայրն ուղարկեց ինձ, ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացե՛ք այսուհետև, աշակե՛րտ դարձրեք բոլոր հեթանոսներին, մկրտե՛ք նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Սովորեցրե՛ք նրանց պահել այն ամենը, ինչ պատվիրեցի ձեզ: Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերին, մինչև աշխարհի վախճանը»:

51. Ինչի՞ց էր պատրաստված Հիսուսի պսակը

ա. Տերևից

բ. Ծաղկից

գ. Փշից

52. Ո՞վ պատրաստեց Հիսուսի պսակը

ա. Զինվորները

բ. Պիղատոսը

գ. Կայիափան

53. Ի՞նչ հագցրեցին Հիսուսին

ա. Քուրձ

բ. Կարմիր քղամիդ

գ. Քահանայական զգեստ

Վաղ առավոտյան Հիսուսին տարան հռոմեական կառավարիչ Պոնտացի Պիղատոսի մոտ: Պիղատոսը հարցրեց նրան. «Դո՞ւ ես հրեաների թագավորը»: Հիսուսը պատասխանեց նրան. «Դո՛ւ ես ասում»: Այդ ժամանակ քահանայապետները սկսեցին նրա դեմ շատ ամբաստանություններ անել: Պիղատոսը դարձյալ հարցրեց նրան. «Չե՞ս լսում, թե դրանք որքա՛ն բաներ են վկայում քո դեմ»: Սակայն Հիսուսն այլևս ոչինչ չպատասխանեց, այնպես որ Պիղատոսը շատ զարմացավ:

Սովորույթի համաձայն՝ ամեն տարի Զատկի տոնի առիթով Պիղատոսը մի կալանավոր էր ազատ արձակում, որի համար, որ ժողովուրդը խնդրում էր: Այդ ժամանակ Բարաբբա անունով մեկը կար՝ սպանության համար բանտարկված:

Ամբոխն սկսեց բարձր ձայնով աղաղակել և պահանջել, որ Պիղատոսն իրենց համար Բարաբբային արձակի: Պիղատոսն ասաց նրանց. «Ուզո՞ւմ եք, որ հրեաների արքային արձակեմ ձեզ համար»: Սակայն քահանայապետները ոտքի հանեցին ամբոխին, որպեսզի Բարաբբային արձակեր իրենց համար:

Պիղատոսը դարձյալ դիմեց նրանց և ասաց. «Իսկ ի՞նչ եք ուզում, որ անեմ հրեաների արքային»: Եվ նրանք դարձյալ աղաղակեցին. «Խա՛չը հանիր դրան»: Պիղատոսը նրանց հարցրեց. «Ի՞նչ չար բան է արել նա»: Սակայն նրանք ավելի ու ավելի էին աղաղակում և ասում. «Խա՛չը հանիր դրան»:

Այդ ժամանակ Պիղատոսը, տեսնելով, որ անօգուտ է, ջուր վերցրեց, ժողովրդի առաջ լվաց ձեռքերը և ասաց. «Այս արդարի արյունից ես անպարտ եմ. դո՛ւք գիտեք: Մեղքը ձեր վիզը»: Եվ ամբոխին գոհացնելու համար ազատ արձակեց Բարաբբային, իսկ Հիսուսին մտրակով ծեծել տալուց հետո հանձնեց, որպեսզի խաչը հանվի:

Կառավարչի զինվորները Հիսուսին տարան պալատ, նրա վրա կարմիր քղամիդ զցեցին, ապա փշերից պսակ պատրաստելով՝ դրեցին նրա գլխին, մի եղեգ էլ տվեցին աջ ձեռքը: Նրա առաջ ծնկի գալով՝ ծաղրում էին և ասում. «Ողջո՛ւյն, հրեաների՛ թագավոր»:

54. Հիսուս ինչի՞ վրա նստած մտավ Երուսաղեմ

ա. Ուղտի

բ. Ձիու

գ. Ավանակի

55. Հիսուսի Երուսաղեմ մտնելու ժամանակ ժողովուրդը ի՞նչ բացականչեց. «Խաղաղություն Երկնքում և Փառք ....» –որտե՞ղ/ու՞մ

ա. Երկրի վրա

բ. Բարձրյալին

գ. Դրախտում

56. Հիսուսի Երուսաղեմ մտնելու ժամանակ ժողովուրդը ի՞նչ էր փռում նրա ճանապարհին

ա. Ծաղիկներ

բ. Դափնու ճյուղեր

գ. Իրենց հագուստներն ու դալար ճյուղեր

Հիսուսն աշակերտների հետ դեպի Երուսաղեմ էր գնում: Երբ մոտենում էին քաղաքին, աշակերտներից երկուսին ուղարկեց և ասաց. «Գնացե՛ք այդ գյուղը, որ ձեր դիմացն է: Այնտեղ մի կապված ավանակ կգտնեք, որի վրա որևէ մեկը դեռ չի նստել. արձակե՛ք այն և բերե՛ք: Եվ եթե մեկը ձեզ հարցնի՝ "Ինչո՞ւ եք արձակում այդ ավանակը", ասացե՛ք. "Տիրոջը պետք է", և նա իսկույն այստեղ կուղարկի այն»:

Երկու աշակերտները գնացին գյուղ, գտան ավանակին, ինչպես որ նրանց ասել էր Հիսուսը: Նրան արձակելիս այնտեղ կանգնածներից ոմանք հարցրին. «Այդ ի՞նչ եք անում, ինչո՞ւ եք արձակում ավանակը»: Աշակերտները պատասխանեցին. «Տիրոջը պետք է»: Եվ նրանք թույլ տվեցին նրանց:

Ավանակը բերեցին Հիսուսի մոտ, դրա վրա գցեցին իրենց հագուստները, և Հիսուսը նստեց ավանակի վրա: Շատերն իրենց հագուստները փռում էին ճանապարհի վրա, որտեղով Հիսուսն էր անցնում, իսկ մյուսներն էլ դալար ճյուղեր էին դնում ճանապարհի վրա: Բոլորը, ովքեր Հիսուսի առաջից կամ հետևից էին գնում, բարձրաձայն աղաղակում էին.

«Օվսաննա՛ Բարձրյալին,
օրհնյա՛լ լինես դու, որ գալիս ես Տիրոջ անունով:
Օրհնյա՛լ լինի մեր հոր՝
Դավթի թագավորությունը, որ գալիս է:
Խաղաղությո՛ւն երկնքում և
փա՛ռք Բարձրյալին»:

Այսպես Հիսուսը մտավ Երուսաղեմ:

57. Հիսուսն ու՞մ աղջկան հարություն տվեց

ա. Զակքեոսի

բ. Հայրոսի

գ. Հարյուրապետի

58. Քանի տարեկան էր Հիսուսի կողմից հարություն առած աղջիկը

ա. 5

բ. 12

գ. 7

59. Երբ Հիսուս հարություն տվեց մահացած աղջկան, աշակերտներից ովքե՞ր էին Հիսուսի հետ

ա. Հովհաննեսն ու Հակոբոսը

բ. Թադեոսն ու Բարդուղիմեոսը

գ. Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը

Հիսուսի մոտ եկավ Հայրոս անունով մի մարդ, որ ժողովրդապետ էր: Նա Հիսուսի ոտքերն ընկավ և սաստիկ աղաչում էր. «Աղջիկս մահամերձ է: Արի՛, ձեռքդ նրա վրա՛ դիր, որպեսզի նա բժշկվի ու ապրի»: Հիսուսը գնաց նրա հետ:

Մինչ նրանք ճանապարհին էին, Հայրոսի տնից մարդիկ եկան և ասացին. «Աղջիկդ մահացավ, հարկ չէ, որ Հիսուսին նեղություն տաս»: Սակայն Հիսուսն ասաց Հայրոսին. «Մի՛ վախեցիր, դու միայն հավատա՛»: Նա ոչ ոքի թույլ չտվեց իրեն հետևել, բացի Պետրոսից, Հակոբոսից ու Հովհաննեսից: Հիսուսը տուն մտավ և մեծ իրարանցում տեսավ. մարդիկ սաստիկ լալիս էին ու ողբ անում: Նա նրանց մեջ մտավ ու ասաց. «Ինչո՞ւ եք աղմկում ու լալիս: Աղջիկը մեռած չէ, այլ ննջում է»: Ներկաները ծաղրում էին նրան: Սակայն նա բոլորին դուրս հանեց տնից, իր հետ վերցրեց ծնողներին ու իր աշակերտներին և մտավ այնտեղ, որտեղ աղջիկն էր պառկած: Հիսուսը բռնեց նրա ձեռքից և ասաց. «Վե՛ր կաց»: Աղջիկն անմիջապես վեր կացավ և քայլեց: Նա տասներկու տարեկան էր: Բոլորը շատ զարմացան: Հիսուսը պատվիրեց, որ նրան ուտելու բան տան:

60. Ո՞րն էր փարիսեցիների հիմնական սկզբունքը

ա. Ապաշխարություն

բ. Զղջում

գ. Օրենքին հետևելը

Նոր կտակարանյան ժամանակաշրջանում հրեական հասարակության մեջ գոյություն ունեին կրոնաքաղաքական տարբեր խմբավորումներ, որոնք հրեականության ու Սուրբ Գրքի վերաբերյալ ունեին առանձնահատուկ տեսակետներ: Այդպիսով՝ հայտնի էին փարիսեցիները, սադուկեցիները, նախանձահույզները և այլն:

«Փարիսեցիներ» բառը, հավանաբար, նշանակում է «մեկուսացածներ» և ցույց է տալիս այն մարդկանց խմբավորումը, որոնց վրա, ի տարբերություն սադուկեցիների, օտարամուտ հելլենիստական ու ռացիոնալիստական զաղափարները նկատելի ներգործություն չունեցան: Փարիսեցիները խստիվ հետևում էին Օրենքի պահպանմանը:

Փարիսեցիների խմբավորումն, ըստ երևույթին, կազմավորվել էր Մակաբայեցիների դարաշրջանից ոչ շատ առաջ: Նրանք բարեպաշտ և ուղղահավատ մարդիկ էին, ամբողջ հոգով ձգտում էին Օրենքը կատարել որպես Աստծո կամք: Նրանք ընդունում էին բարի և չար ոգիների գոյությունը, մահվանից հետո կյանքը և մարմով հարությունը: Հիսուսն այդ առումով նրանց ուսմունքի մեջ ոչ մի դատապարտելի բան չգտավ, սակայն Նա միաժամանակ նախազգուշացնում էր կուրորեն չկրկնօրինակել նրանց, քանի որ Փարիսեցիները ապավինում էին իրենց սեփական առաքինությանը, այլ ոչ Տիրոջը:

Նրանք սահմանափակվում էին Օրենքի արտաքին կատարմամբ, միևնույն ժամանակ ձգտելով Օրենքն ամրապնդել նրա կատարումը կարգավորող նոր կանոններով և ցուցումներով: Իսկ իրականում նրանք ավելի ու ավելի էին հեռանում Աստծո ճշմարիտ կամքից: Դրա հետևանքը եղավ չհիմնավորված, ուստի և առանձնապես շատ վտանգավոր երեսպաշտությունը և ցուցամոլությունը:

61. Ո՞ր մեղքը չի ներվում

ա. Մահացու մեղքը

բ. Սուրբ Հոգու դեմ հայհոյելը

գ. Ընկերոջը հայհոյելը

Դպիրները, որ Երուսաղեմից էին իջել, ասում էին, թե Հիսուսի մեջ Բեեղզեբուղ կա, և դևերի իշխանի ձեռքով է հանում դևերին: Հիսուսն իր մոտ կանչեց նրանց և սկսեց առակներով խոսել նրանց հետ. «Ինչպե՞ս կարող է սատանան սատանային դուրս հանել: Արդ, եթե մի թագավորություն ինքն իր մեջ մասնատվի, այդ թագավորությունը չի կարող կանգուն մնալ: Եթե մի տուն ինքն իր մեջ բաժանվի, այդ տունը չի կարող կանգուն մնալ: Եթե սատանան ինքն իր դեմ է դուրս եկել և բաժանվել, չի կարող կանգուն մնալ, այլ նրա վախճանը հասել է: Ոչ ոք չի կարող ուժեղ մարդու տունը մտնելով՝ նրա ունեցվածքը կողոպտել, եթե նախ չկապի այդ ուժեղ մարդուն, և դրանից հետո միայն կկողոպտի նրա տունը: Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մարդկանց որդիներին, որքան էլ հայհոյեն, ամեն մեղք և հայհոյանք կներվի, բայց ով հայհոյի Սուրբ Հոգուն, հավիտյանս թողություն չի ունենա, այլ հավիտենական մեղքով հանցավոր կմնա»: Հիսուսն այս ասաց, որովհետև ասում էին՝ «Նրա մեջ պիղծ ոգի կա»:

62. Քրիստոսի մայրն ու եղբայրները նրանք են, ովքեր կատարում են ի՞նչը

ա. Աստծու կամքը

բ. Օրենքը

գ. Ուրիշների կամքը

Եկան Հիսուսի եղբայրներն ու մայրը և դրսում կանգնած՝ մարդ ուղարկեցին նրան կանչելու: Այնտեղ ժողովուրդը նստել էր նրա շուրջը: Երբ հայտնեցին նրան՝ «Ահա քո մայրն ու քո եղբայրները դրսում կանգնած են և քեզ են ուզում», նրանց պատասխանեց և ասաց. «Ո՞վ է իմ մայրը, կամ ովքե՞ր են իմ եղբայրները»: Ապա նայելով իր շուրջը, իր աշակերտներին, որոնք նստած էին, ասաց. «Ահավասիկ իմ մայրը և իմ եղբայրները. որովհետև ով կատարում է Աստծու կամքը, նա՛ է իմ եղբայրը, քույրը և մայրը»:

63. Ի՞նչ պետք է անի նա, ով երկու զգեստ ունի

ա. Մեկը տա վատն ունեցողին

բ. Մեկը տա չունեցողին

գ. Մեկը տա քիչ ունեցողին

Հովհաննես Մկրտիչն իր քարոզության մեջ դիմելով ժողովրդին՝ նրանց նախապատրաստում էր Մեսիայի՝ Փրկչի գալստյանն ու կոչ անում ապաշխարության: Երբ մարդիկ նրան հարցրին, թե ի՞նչ պիտի անեն ապաշխարելու համար, նա ասաց. «Ով երկու զգեստ ունի, մեկը թող չունեցողին տա, և ով ուտելիք ունի, նույն ձևով թող անի»: Մաքսավորներն էլ եկան մկրտվելու և հարցրին նրան. «Վարդապե՛տ, մենք ի՞նչ անենք»: Նա ասաց նրանց. «Ձեզ հասանելիքից ավելին մի՛ վերցրեք»: Զինվորները ևս հարցնում էին նրան. «Իսկ մենք ի՞նչ անենք»: Նա ասաց նրանց. «Ոչ ոքի մի՛ նեղեք, ոչ ոքի մի՛ զրպարտեք, ձեր ռոճիկը թող ձեզ բավարար լինի»:

Ժողովուրդն սպասման մեջ էր, և բոլորն իրենց սրտում Հովհաննեսի մասին հարց էին տալիս «Մի՞թե սա է Քրիստոսը»:

64. Ո՞վ բանտարկեց Հովհաննես Մկրտչին

ա. Փարավոնը

բ. Հերովդեսը

գ. Պիղատոսը

65. Ե՞րբ գլխատվեց Հովհաննես Մկրտիչը

ա. Երուսաղեմի կործանման ժամանակ

բ. Հերովդես արքայի ծննդյան խնջույքին

գ. Ստեփանոս Նախավկայի քարկոծման ժամանակ

66. Ի՞նչ մտածեց Հերովդես արքան՝ լսելով Հիսուսի գործերի մասին

ա. Հովհաննեսը հարություն է առել

բ. Հիսուս Աստծու Որդին է

գ. Հրաշք է

67. Ի՞նչ խոստացավ տալ Հերովդեսը Հերովդիայի դստերը

ա. Մեկ կարաս ոսկի

բ. Ամբողջ թագավորությունը

գ. Թագավորության կեսը

68. Ո՞վ Հերովդեսից ուզեց Հովհաննես Մկրտչի գլուխը

ա. Հերովդիան

բ. Հերովդիայի դուստրը

գ. Պիղատոսը

69. Ո՞ւմ խորհրդով Հերովդիայի դուստրը Հերովդեսից ուզեց Հովհաննես Մկրտչի գլուխը

ա. Իր մոր

բ. Պիղատոսի

գ. Փարիսեցիների

Հերովդես արքան լսեց Հիսուսի հրաշագործությունների մասին, որովհետև Հիսուսի հրաշքը ամենուր տարածվել էր և տարբեր կարծիքներ էին հնչում նրա մասին: Հերովդես արքան ասում էր. «Նա Հովհաննես Մկրտիչն է, որի գլուխը ես կտրել տվեցի: Նա է, որ այժմ մեռելներից հարություն է առել»:

Իսկապես, ինքը՝ Հերովդեսն էր ձերբակալել Հովհաննեսին, որին բանտարկել էր իր եղբոր կնոջ՝ Հերովդիայի պատճառով: Հերովդեսն ամուսնացել էր Հերովդիայի հետ: Հովհաննեսն ասել էր արքային. «Քո եղբոր կնոջը քեզ կին առնելը սխալ է»:

Այդ լսելով՝ Հերովդիան ոխ էր պահել ու ուզում էր գլխատել տալ Հովհաննեսին, որին Հերովդեսը հարգում և գնահատում էր և սպասում էր հարմար առիթի, որ իրագործի իր ծրագիրը: Եվ առիթը եկավ:

Հերովդեսն իր ծննդյան տարեդարձի օրը խնջույքի էր հրավիրել նախարարներին, հազարապետներին և Գալիլիայի ճանաչված մարդկանց:

Խնջույքի ժամանակ Հերովդիայի աղջիկը ներս եկավ և սկսեց պարել: Հերովդեսն ու ներկաները հավանեցին աղջկա պարը: Թագավորն ասաց նրան. «Ինչ որ խնդրես, կտամ քեզ, նույնիսկ թագավորությանս կեսը»:

Աղջիկը դուրս եկավ, որպեսզի հարցնի, թե ի՞նչ ուզի: Մայրն ասաց. «Հովհաննես Մկրտչի գլուխը»:

Աղջիկը շտապելով ներս մտավ և ասաց. «Ուզում եմ, որ անմիջապես սկուտեղով ինձ տաս Հովհաննես Մկրտչի գլուխը»:

Թագավորը շատ տխրեց, բայց իր խոստումը պետք է կատարեր:

Նա դահիճ ուղարկեց և բանտում գլխատել տվեց Հովհաննես Մկրտչին:

Նրա գլուխը սկուտեղով մատուցեցին աղջկան: Աղջիկն էլ այն տվեց մորը:

Հովհաննեսի աշակերտները իմացան այդ մասին: Նրանք եկան, վերցրին մարմինն ու թաղեցին:

70. Ո՞վ էր Բարդուղիմեոսը

ա. Մարգարե

բ. Առաքյալ

գ. Ավետարանիչ

ՀԱՅԿ

Հիսուս ընտրեց տասներկու աշակերտների, որոնց թվում էր նաև Բարդուղիմեոսը: Առաքյալները Հիսուսի համբարձումից հետո ստանալով Սուրբ Հոգու շնորհը՝ ստանձնեցին Բարի Լուրը ավետելու աստվածահաճո գործը: Նրանք ցրվեցին աշխարհի չորս կողմերով՝ ավետարանելու:

Ավանդության համաձայն Բարդուղիմեոս առաքյալն իր քարոզչական գործունեության առաջին մասն իրականացրել է Պարթևական աշխարհում: Ապա ավետարանել է Հայաստանում՝ մոտավորապես 60-66 թվականներին՝ սկսելով քարոզչությունը Սյունյաց նահանգի Որդվատ գյուղից, որտեղից անցել է Գողթն գավառ (համաձայն աղբյուրների՝ Հայոց Սանատրուկ թագավորի գահակալության 29-րդ տարում այստեղ եպիսկոպոս է ձեռնադրել իր պարսիկ հետևորդներից մեկին՝ Կումսիին), ապա Արտաշատ: Այստեղ Բարդուղիմեոսը հանդիպել է Թադեոս առաքյալին: Արտաշատից առաքյալը մեկնում է Հեր և Զարևանդ գավառները, ապա Անձևացյաց գավառի Աղբակ քաղաք, որտեղ նրա գործուն՝ Սուրբ Հոգով լեցուն քարոզխոսությամբ՝ քրիտոնեություն է ընդունում նաև թագավորի քույրը՝ իշխանուհի Ոգուհին: Հեթանոս Սանատրուկ արքան Բարդուղիմեոսին պատժելու համար նրա մոտ է ուղարկում Տերենտիոս հազարապետին, որը նույնպես դարձի է գալիս և մկրտվում: Սանատրուկ թագավորի հրամանով Բարդուղիմեոսը, Ոգուհին և Տերենտիոսը ներկայացվում են ատյան, որտեղ հարցաքննվելուց հետո՝ 66 թ., բրածեծ անելով նահատակվում է Բարդուղիմեոսը, իսկ սրախողխող արվելով՝ մյուսները:

Այլ եկեղեցիների ավանդության համաձայն Բարդուղիմեոսը նահատակվել է մաշկազերծ արվելով, ինչի համար էլ պատկերագրության մեջ հաճախ պատկերվում է մորթը ձեռքին: Որպես նահատակության վայր նշվում է Աղբակ քաղաքը:

71. Որտե՞ղ եղավ Հիսուսի համբարձումը

ա. Վերնատանը

բ. Բեթանիայում

գ. Գալիլեայում

Հարությունից հետո Հիսուսը բազմիցս հայտնվեց աշակերտներին: Մի օր նրանք հարցրին նրան. «Տե՛ր, այս ժամանակո՞ւմ ես հաստատելու Իսրայելի թագավորությունը»: Նա նրանց պատասխանեց. «Դա միայն Հայրը գիտի: Բայց ձեզ վրա Սուրբ Հոգու իջնելով՝ զորություն կստանաք և աշխարհի բոլոր ծագերում կավետարանեք, այսինքն՝ իմ մասին կվկայեք»:

Ապա նրանց տարավ հանեց մինչև Բեթանիա և բարձրացնելով իր ձեռքերը՝ օրհնեց նրանց: Մինչ նա օրհնում էր նրանց, սկսեց հեռանալ նրանցից և դեպի երկինք բարձրանալ:

Հանկարծ երկու հրեշտակներ երևացին և ասացին նրանց. «Ինչո՞ւ եք կանգնել, երկնքին նայում: Այս Հիսուսը, որ ձեզանից երկինք բարձրացավ, նույն կերպ էլ պիտի գա, ինչպես որ տեսաք նրան երկինք գնալիս»:

Աշակերտները մեծ ուրախությամբ Երուսաղեմ վերադարձան: Նրանք սպասում էին Սուրբ Հոգուն, ինչպես որ Հիսուսն էր իրենց խոստացել: Նրանք միշտ միասին էին մնում և աղոթում: Նրանց հետ էին նաև որոշ կանայք, ինչպես նաև Հիսուսի մայր Մարիամը:

72. Հիսուս վերջին անգամ որտե՞ղ աղոթեց

ա. Վերնատանը

բ. Գեթսեմանիի այգում

գ. Տաճարում

73. Երբ Հիսուս աղոթքի ելավ, աշակերտներից ու՞մ վերցրեց իր հետ

ա. Պետրոսին ու Անդրեասին

բ. Պետրոսին, Անդրեասին և Հովհաննեսին

գ. Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին

74. Երբ Հիսուս աղոթքի ելավ, աշակերտներն ի՞նչ արեցին

ա. Արթուն հսկեցին

բ. Քնեցին

գ. Թողեցին հեռացան

Հիսուս աշակերտների հետ եկավ այն այգին, որ Գեթսեմանի էր կոչվում: Նա աշակերտներին ասաց. «Նստե՛ք այստեղ, մինչև աղոթեմ»: Եվ նա իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին ու Հովհաննեսին: Սկսեց տխրել ու տագնապել: Այն ժամանակ նրանց ասաց. «Հոգիս մեռնելու աստիճան տրտմած է. մնացե՛ք այստեղ և արթո՛ւն կացեք»: Ապա փոքրինչ առաջ գնալով՝ երեսնիվայր գետնին ընկավ և աղոթում էր, որ եթե հնարավոր է, այդ ժամն իրենից հեռանա: Ասում էր. «Աբբա՛, Հա՛յր, քեզ համար ամեն ինչ հնարավոր է. այս բաժակը հեռացրո՛ւ ինձնից, բայց ոչ թե ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես դու ես կամենում»: Ապա Հիսուսը եկավ ու նրանց քնած գտավ: Պետրոսին ասաց. «Սիմո՛ն, ննջո՞ւմ ես, չկարողացա՞ր մեկ ժամ արթուն մնալ: Արթո՛ւն կացեք և աղոթե՛ք, որպեսզի փորձության մեջ չընկնեք: Հոգին հոժար է, բայց մարմինը՝ տկար»: Նորից գնաց, աղոթք արեց և նույն խոսքերն ասաց: Կրկին վերադարձավ և նրանց քնի մեջ գտավ, որովհետև նրանց աչքերը ծանրացել էին, և չէին իմանում, թե ի՛նչ պատասխան տան նրան: Երրորդ անգամ եկավ և նրանց ասաց. «Այսուհետև քնե՛ք և հանգստացե՛ք, քանի որ վախճանը հասել է: Եկավ ժամը, և ահա Մարդու Որդին մատնվում է մեղավորների ձեռքը: Վե՛ր կացեք գնանք, որովհետև ահա մոտեցավ նա, ով ինձ մատնելու է»:

75. Նշված առաքյալներից ո՞վ չկար պայծառակերպության ժամանակ

ա. Պետրոսը

բ. Հովհաննեսը

գ. Թովմասը

76. Պայծառակերպության ժամանակ ո՞վ ցանկացավ տաղավարներ շինել

ա. Պետրոսը

բ. Հովհաննեսը

գ. Փիլիպոսը

77. Քրիստոսի կյանքի ո՞ր դեպքի հետ է կապված Վարդավառի տոնը

ա. Մկրտության

բ. Առաջին հրաշքի

գ. Պայծառակերպության

Մի օր Հիսուսն իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին ու նրա եղբորը՝ Հովհաննեսին, նրանց առանձին հանեց մի բարձր լեռ և նրանց առջև պայծառակերպվեց: Նրա դեմքն արեգակի պես լուսավորվեց, իսկ զգեստները լույսի պես սպիտակ դարձան: Եվ ահա նրանց երևացին Մովսեսն ու Եղիան, որոնք խոսում էին Հիսուսի հետ: Պետրոսը դիմեց Հիսուսին և ասաց. «Տե՛ր, լավ է, որ մենք այստեղ մնանք: Եթե ուզենաս, երեք տաղավարներ կպատրաստենք. մեկը՝ քեզ, մեկը՝ Մովսեսի, մեկն էլ՝ Եղիայի համար»: Մինչ նա խոսում էր, ահա լուսավոր մի ամպ հովանի եղավ նրանց վրա: Ամպից մի ձայն ելավ և ասաց. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որը ստացավ իմ բարեհաճությունը, դրա՛ն լսեք»: Երբ աշակերտները լսեցին, երեսն ի վայր ընկան և սաստիկ վախեցան: Հիսուսը մոտեցավ, բռնեց նրանց և ասաց. «Ոտքի՛ ելեք և մի՛ վախեցեք»: Բարձրացրին աչքերը և Հիսուսից բացի ոչ ոքի չտեսան:

Հեթանոսական ժամանակաշրջանում հայերը տոնում էին բազում հեթանոսական տոներ: Քրիստոնեության ընդունումից դեռևս երկար տարիներ Հայ եկեղեցին պայքարում էր հեթանոսական ավանդույթների և հավատալիքների դեմ: Քանի որ ժողովուրդը դժվարությամբ էր հեռանում նախկին ավանդույթներից, եկեղեցին որոշ տոներ փոխարինեց քրիստոնեական տոներով: Դրա վառ օրինակ է նաև Վարդավառի հեթանոսական տոնը Հիսուսի Պայծառակերպության տոնով փոխարինելը: Հնում Վարդավառի տոնը նվիրված է եղել հայկական դիցարանի Աստղիկ դիցուհուն, որը ջրի, սիրո, պտղաբերության և գեղեցկության աստվածուհին էր:

78. Հինգ հազարի կերակրման ժամանակ քանի՞ հաց և քանի՞ ձուկ կար նախապես

ա. Հինգ հաց և երկու ձուկ

բ. Յոթ նկանակ

գ. Ոչինչ չկար

Հիսուսը աշակերտների հետ հեռացավ Բեթսայիդա քաղաքի մոտ ամայի մի վայր: Սակայն ժողովուրդը իմացավ և գնաց նրա հետևից. ընդունելով նրանց՝ խոսում էր նրանց հետ Աստծու արքայության մասին, իսկ որոնք բժշկվելու կարիք ունեին, բժշկում էր:

Օրն սկսեց տարաժամել: Տասներկուսը մոտեցան և ասացին նրան. «Արձակի՛ր այս ժողովրդին, որպեսզի գնան շրջակա գյուղերը և ագարակները, հանգստանան և կերակուր գտնեն, որովհետև այստեղ ամայի վայրում ենք»: Նրանց ասաց. «Դո՛ւք նրանց ուտելու բան տվեք»: Նրանք ասացին. «Մենք հինգ նկանակից և երկու ձկից ավելին չունենք, եթե չգնանք և այս ժողովրդի համար բավարար ուտելիք չգնենք»: Որովհետև շուրջ հինգ հազար մարդ կար: Նա աշակերտներին ասաց. «Նստեցրե՛ք դրանց խումբ-խումբ, հիսուն-հիսուն»: Այդպես արեցին ու ամենքին նստեցրին: Վերցնելով հինգ նկանակը և երկու ձուկը՝ նայեց դեպի երկինք, օրհնեց, կտրեց և աշակերտներին տվեց, որպեսզի ժողովրդի առաջ դնեն: Ամենքը կերան և հագեցան, տասներկու սակառ էլ կտորտանք հավաքեցին:

79. Ի՞նչ էր անում Հիսուս նավաբեկության ժամանակ

ա. Ծովեզերքին կանգնած հետևում էր

բ. Նավակի մեջ ննջում էր

գ. Նավակի մեջ նստած քարոզում էր

80. Հիսուս ի՞նչ անվանեց աշակերտներին ծովի ալեկոծության ժամանակ

ա. Վախկոտներ

բ. Անմիտներ

գ. Թերահավատներ

Մի օր Հիսուսը նավակ նստեց իր աշակերտների հետ և նրանց ասաց. «Եկե՛ք ծովակի մյուս կողմն անցնենք»: Եվ գնացին: Ահա ծովում այնքան ուժեղ ալեկոծություն բարձրացավ, որ նավակը գրեթե ծածկվեց ալիքներով: Իսկ նա ննջում էր: Աշակերտները մոտեցան, արթնացրին նրան և ասացին. «Տե՛ր, փրկի՛ր մեզ, որովհետև կորչում ենք»: Հիսուսը նրանց ասաց. «Ինչո՞ւ եք վախենում, թերահավատնե՛ր»: Այն ժամանակ վեր կացավ, սաստեց հողմերին ու լճին, և մեծ խաղաղություն տիրեց: Մարդիկ զարմացան և ասում էին. «Ինչպիսի՛ մեկն է սա, որ թե՛ հողմերը և թե՛ լիճն են հնազանդվում նրան»:

81. Քանի՞ հոգի խաչվեց Քրիստոսի հետ միասին

ա. 2

բ. 3

գ. Քրիստոս խաչվեց մենակ

82. Ի՞նչ էր գրված Հիսուսի խաչափայտին

ա. Հիսուս Քրիստոս Աստծու Որդի

բ. Հիսուս Նազովրեցի հրեաների թագավոր

գ. Հիսուս Նազովրեցի Աստծուն հայհոյող

83. Ի՞նչ արեցին զինվորները Հիսուսի զգեստները

ա. Այրեցին

բ. Պատառոտեցին

գ. Զգեստների վրա վիճակ գցեցին

Զինվորները Հիսուսին տարան խաչը հանելու. նրան քաղաքից դուրս հանեցին և բերեցին Գողգոթա կոչվող վայրը: Գողգոթա նշանակում է «Գանգ»:

Առավոտյան ժամը ինն էր, երբ նրան խաչեցին: Զինվորները նրա հագուստը բաժանեցին՝ դրանց վրա վիճակ գցելով՝ տեսնելու, թե ով ի՛նչ պիտի վերցնի: Նրա հանցապարտության մասին գրություն կար՝ գրված այսպես. «Հիսուս Նազովրեցի հրեաների թագավոր»: Նրա հետ խաչը հանեցին երկու ավազակների, մեկին՝ նրա աջ կողմում, իսկ մյուսին՝ ձախ:

Ովքեր անցնում էին, հայհոյում էին նրան և շարժելով իրենց գլուխները՝ ասում էին. «Վա՛հ, դու, որ քանդում էիր տաճարը և երեք օրում կառուցում, ազատի՛ր ինքդ քեզ և ցա՛ծ իջիր այդ խաչից»: Նույնպես և քահանայապետները դպիրների հետ իրար մեջ ծաղրում էին և ասում. «Ուրիշներին ազատեց, ինքն իրեն չի կարողանում ազատել: Ասում է, թե Քրիստոսն է, Իսրայելի թագավորը. թող այժմ խաչից իջնի, որպեսզի տեսնենք և հավատանք նրան»: Նրա հետ խաչվածներն էլ նախատում էին նրան:

Կեսօրվա ժամը տասներկուսին խավարը պատեց ամբողջ երկիրը, մինչև ժամը երեքը: Ժամը երեքին Հիսուսը բարձրաձայն աղաղակեց և ասաց. «Էլի՛, Էլի՛, լա՞մա սաբաքթանի», որ թարգմանվում է «Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ լքեցիր ինձ»:

Այնտեղ ներկա գտնվողներից ոմանք, լսելով այդ, ասում էին «Լսե՛ք, Եղիային է կանչում»: Այդժամ մեկը, առաջ վազելով, սպունգը քացախի մեջ թաթախեց և եղեգին անցկացնելով՝ տվեց Հիսուսին, որ խմի: Ասում էր. «Թողեք տեսնենք՝ Եղիան կգա՞ նրան խաչից իջեցնելու»: Հիսուսը բարձր ձայն արձակեց և հոգին ավանդեց:

Հռոմեական հարյուրապետը, որ կանգնած էր այնտեղ, տեսնելով, թե Հիսուսն ինչպե՛ս աղաղակեց և հոգին ավանդեց, ասաց. «Այս մարդն իսկապես Աստծու Որդի էր»:

84. Առաքյալներից ո՞վ առաջարկեց ընտրել 12-րդ առաքյալին ուրացող Հուդայի փոխարեն

ա. Հովհաննեսը

բ. Սիմոն Կանանացին

գ. Պետրոսը

85. Ուրացող Հուդա առաքյալի փոխարեն ո՞վ ընտրվեց իբրև 12-րդ առաքյալ

ա. Պողոս առաքյալ

բ. Մատաթիա

գ. Բառնաբաս առաքյալ

Հուդա մատնիչի ինքնասպանությունից հետո առաքյալները թվով տասնմեկն էին: Հիսուսի կողմից ընտրված տասներկու առաքյալների թվի կարգը պահպանելու համար առաքյալներից Պետրոսն առաջարկեց իրենց հետ հավաքված մարդկանցից ընտրել մեկին, որ նրանց հետ է եղել այն ամբողջ ժամանակ, երբ Տեր Հիսուսը նրանց հետ էր՝ սկսած Հովհաննեսի մկրտությունից մինչև այն օրը, երբ նրանցից համբարձվեց, նա պետք է մյուսների հետ միասին նրա հարության վկան լինի:

Ներկայացրեցին երկու հոգու՝ Հովսեփին, որ Բարսաբա էր կոչվում և Հուստոս անվանվեց, ու Մատաթիային: Եվ աղոթելով ասացին. «Դու, Տե՛ր, որ գիտես բոլորի սրտերը, հայտնի՛ր, թե այս երկուսից ո՛ւմ ես ընտրել այս ծառայությանը և առաքելությանը մասնակից լինելու, որից Հուդան ընկավ և իր տեղը գնաց»: Նրանց մեջ վիճակ գցեցին. վիճակը Մատաթիային ընկավ, և նա զումարվեց տասնմեկ առաքյալներին:

86. Քանի՞ հոգի էին առաջին սարկավագները

ա. 3

բ. 7

գ. 72

87. Ո՞վ էր Ստեփանոս Նախավկան

ա. Մարգարե

բ. Առաքյալ

գ. Սարկավագ

ցին Ստեփանոսի վրա և քաղաքից դուրս հանելով՝ քարկոծեցին: Ստեփանոսը ծնկի իջած աղոթում էր ու ասում. «Տե՛ր Հիսուս, ընդունի՛ր իմ հոգին: Տե՛ր, սա նրանց իրրև մեղք մի՛ համարիր»: Եվ այս ասելուց հետո հոգին ավանդեց:

Հիսուսի համբարձումից հետո, երբ աշակերտները բազմացան, հունախոս հրեաները տրտնջացին եբրայախոս հրեաների դեմ, որովհետև իրենց այրիներն ամենօրյա նպաստի բաշխման ժամանակ անտեսվում էին: Տասներկու առաքյալները զբաղված լինելով Աստծու խոսքի տարածման և աղոթքի ամենօրյա աշխատանքով՝ չէին կարողանում վերահսկել այրիների և աղքատների հոգածության աշխատանքներին: Դրա համար նրանք աշակերտների միջից ընտրեցին բարեհամբավ, Սուրբ Հոգով և իմաստությամբ լի յոթ մարդու, որոնք նշանակվեցին այդ ծառայությունների համար: Արդ՝ ընտրվեցին Ստեփանոսը, Փիլիպպոսը, Պրոքորոսը, Նիկանորասը, Տիմոնը, Պարմենասը, Նիկողայոսը, որ անտիոքցի նորադարձ էր: Նրանց կանգնեցրին առաքյալների առաջ, որոնք աղոթելով՝ նրանց վրա ձեռք դրեցին:

Եկեղեցական ավանդության մեջ աշակերտներից այս յոթը համարվում են առաջին սարկավագները: Նրանցից Ստեփանոսը դարձավ հանուն Քրիստոսի առաջին նահատակը, որովհետև երբ նա մարդկանց հետ խոսում էր Հիսուսի մասին, ժողովարանից ոմանք բարկանում էին և ցանկանում էին ձերբակալել նրան՝ ամբաստանելով, թե Ստեփանոսը հայհոյում է Աստծուն և Մովսեսին: Այդպիսով՝ նրան ձերբակալեցին և ատյան քարշ տվեցին: Այնտեղ հանդես եկան սուտ վկայություն տվողներ՝ ասելով. «Այս մարդը խոսում է Հիսուսի մասին և խեղաթյուրում է Մովսեսի Օրենքը՝ այդ կերպ հայհոյելով Աստծուն»:

Այդ ժամանակ քահանայապետը հարցրեց Ստեփանոսին. «Իսկապես դա այդպե՞ս է»: Ստեփանոսը պատասխանեց. «Աստված մեր նախահայրերին ուղարկեց մարգարեներին, բայց ժողովուրդը չլսեց նրանց: Աստված նրանց պատվիրաններ տվեց, բայց նրանք չպահեցին դրանք: Հիմա նա ուղարկեց Հիսուսին՝ իր Որդուն, բայց դուք նրան չընդունեցիք և սպանեցիք»: Ստեփանոսը, Սուրբ Հոգով լցված, հայացքը երկնքին ուղղեց և ասաց. «Ահա տեսնում եմ երկինքը բացված և Մարդու Որդուն՝ Աստծու աջ կողմում կանգնած»:

Այդ ժամանակ քահանաները կատաղեցին. նրանք աղմուկ բարձրացրին և փակեցին իրենց ականջները: Բոլորը միասին նետվե-

88. Ի՞նչ արեց Հիսուս զատկական ընթրիքի ժամանակ

ա. Լվաց աշակերտների ոտքերը

բ. Աշակերտների հետ առակներով խոսեց իր մահվան մասին

գ. Խոսեց Աստծու արքայության մասին

89. Վերջին ընթրիքի ժամանակ աշակերտներից ո՞վ էր փարվել Հիսուսի կրծքին

ա. Հովհաննեսը

բ. Պետրոսը

գ. Հուդան

90. Ո՞վ էր Հիսուսի սիրելի աշակերտը

ա. Պետրոսը

բ. Մարկոսը

գ. Հովհաննեսը

Զատկական ընթրիքի ժամանակ սատանան արդեն Իսկարիովտացի Հուդայի սրտի մեջ դրել էր, որ մատնի նրան: Հիսուսը հասկացավ, որ Հայրն ամեն բան իր ձեռքն էր հանձնել, և որ ինքն Աստծուց էր ելել ու Աստծու մոտ էր գնում: Նա վեր կացավ ընթրիքի սեղանից, մի կողմ դրեց զգեստները և մի սրբիչ վերցնելով՝ մեջքին կապեց: Եվ ապա ջուր վերցնելով՝ լցրեց կոնքի մեջ ու սկսեց իր աշակերտների ոտքերը լվանալ և սրբել մեջքին կապած սրբիչով: Մոտեցավ Սիմոն Պետրոսին, և սա ասաց նրան. «Տե՛ր, դո՞ւ ես իմ ոտքերը լվանում»: Հիսուսը պատասխանեց նրան. «Ինչ որ ես անում եմ, դու հիմա չես հասկանում, բայց հետո կհասկանաս»: Պետրոսը նրան ասաց. «Իմ ոտքերը հավիտյան չես լվանա»: Հիսուսը նրան պատասխանեց. «Եթե քեզ չլվանամ, ինձ հետ մաս չունես»: Սիմոն Պետրոսն ասաց նրան. «Տե՛ր, ոչ միայն ոտքերս, այլև ձեռքերս ու գլուխս էլ լվա՛»: Հիսուսը նրան ասաց. «Լվացվածին ուրիշ բան պետք չէ, պետք է միայն ոտքերը լվանալ, քանի որ ամբողջությամբ մաքուր է. և դուք մաքուր եք, բայց ոչ բոլորդ»: Որովհետև գիտեր նրան, ով իրեն մատնելու էր, դրա համար ասաց. «Ոչ բոլորդ եք մաքուր»: Երբ նրանց ոտքերը լվաց, վերցրեց իր զգեստները և դարձյալ սեղան նստեց ու ասաց նրանց. «Գիտե՞ք, թե այդ ի՛նչ արեցի ձեզ: Դուք ինձ Վարդապետ ու Տեր եք կոչում և լավ եք անում, քանի որ իսկապես ե՛մ: Արդ, եթե ես՝ Տերս ու Վարդապետս, լվացի ձեր ոտքերը, դուք էլ պարտավոր եք միմյանց ոտքերը լվանալ: Որովհետև մի օրինակ տվեցի ձեզ, որպեսզի ինչպես ես ձեզ արեցի, դուք էլ նույն ձևով անեք:

Վերջին ընթրիքի ժամանակ, երբ Հիսուս խոսում էր իր մատնության մասին, նրա աշակերտներից Հովհաննեսը, որ համարվում էր Հիսուսի սիրելի աշակերտը, փարվել էր Նրա կրծքին: Հովհաննեսի Հիսուսի սիրելի աշակերտը լինելու մասին վկայվում է նաև Հովհաննու Ավետարանում, երբ խաչի վրա Տերը նրան հոգածությանն է հանձնում իր մորը՝ ասելով. «Ո՛վ կին, ահա քո որդին», իսկ աշակերտին. «Ահա քո մայրը»:

91. Ովքե՞ր էին մաքսավորները Նոր Կտակարանում

ա. Հրեա պաշտոնյաներ

բ. Հռոմեական պաշտոնյաներ

գ. Հունական պաշտոնյաներ

92. Հիսուսի աշակերտներից ո՞վ էր մաքսավոր եղել

ա. Մատթեոսը

բ. Սիմոն Կանանացին

գ. Թովմասը

Նոր Կտակարանում հռոմեական կայսրության գերիշխանության տակ գտնվող գավառներում հարկերի ու մաքսերի հավաքը հանձնված էր տարբեր շրջանների հարկահավաքներին, որոնք այն իրականացնում էին իրենց պաշտոնյաների՝ մաքսավորների միջոցով: Հարկահավաքության գլխավոր աղբյուր էին այն մաքսատները, որոնք գտնվում էին սահմանին մոտ տեղակայված քաղաքներում ու գյուղերում: Ուստի Կափառնաումն ու Երիքովը այն քաղաքներն էին, որտեղ Հիսուս կարող էր հանդիպել մաքսավորների, քանի որ Կափառնաումը Դամասկոս գնացող ճանապարհին միակ սահմանային մաքսակետն էր, իսկ Երիքովը՝ Դեկապոլիսի շրջանի հարավային քաղաքներ գնացող:

Որպես կանոն, մաքսավորը պետք է լիներ հարկատու շրջանի տեղաբնիկներից մեկը, որ քաջածանոթ էր տեղի ժողովրդին ու նրանց բարքերին: Նա հավաքած պետական եկամուտը հանձնում էին հարկահաններին, որոնք մաս էին կազմում կայսերական ազնվական դասին և հանդիսանում պետական ուժը: Մաքսավորը հրեաների կողմից համարվում էր մեղավոր և հարստահարող: Ավելին՝ նա աշխատանքի բերումով հեթանոսների հետ պարբերաբար շփման և նույնիսկ շաբաթ օրերին հարկահավաքությամբ զբաղվելու համար ուղղադավան հրեաների կողմից համարվում էր մովսիսական օրենքի խախտող և հեթանոս: Մաքսավորին չէր թուլատրվում տաճար կամ ժողովարան մտնել, հասարակական աղոթքին մասնակից լինել, դատավորություն անել կամ ատյանի առաջ վկայություն տալ:

Հիսուսի ժամանակ հրեաների մեջ բազում մաքսավորներ կային: Հիսուսի աշակերտներից Մատթեոսը մաքսավոր էր:

Հրեաները ամբաստանում էին Հիսուսին և նրա աշակերտներին մաքսավորների հետ շփվելու և նրանց հետ սեղան նստելու համար, սակայն Հիսուսը, որ եկել էր մեղավորներին ապաշխարության կոչելու, գնաց Մատթեոսի մոտ: Հիսուսը նույնիսկ տաճարում աղոթող և ապաշխարության պատրաստ մաքսավորին զերադասում է փարիսեցու կեղծ բարեպաշտությունից:

93. Պետրոսը քանի՞ անգամ ուրացավ Հիսուսին

ա. 3

բ. 7

գ. 1

94. Ի՞նչ արեց Պետրոսը, երբ զղջաց

ա. Արտասվեց

բ. Աղոթեց

գ. Ապաշխարեց

Հիսուսին տարան քահանայապետի մոտ. այնտեղ հավաքվել էր ողջ հրեական ատյանը՝ քահանայապետները, դպիրներն ու ծերերը:

Պետրոսը, հեռվից Հիսուսին հետևելով, մտավ ներս՝ քահանայապետի գավիթը: Նա նստել էր սպասավորների հետ ու տաքանում էր կրակի առջև:

Այդ ժամանակ մի աղախին ճանաչեց նրան և ասաց. «Դու էլ էիր Հիսուս Նազովրեցու հետ»: Պետրոսն ուրացավ և ասաց. «Ո՛չ ճանաչում եմ, ո՛չ էլ գիտեմ՝ ինչ ես ասում»: Այդ պահին աքաղաղը կանչեց:

Աղախինը կրկին տեսավ նրան և սկսեց այնտեղ գտնվողներին ասել. «Սա էլ է նրանցից»: Բայց Պետրոսը երկրորդ անգամ ևս ամեն բան ուրացավ: Քիչ անց շուրջը գտնվողները դարձյալ ասացին Պետրոսին. «Իրոք դու նրանցից ես, քանի որ գալիլիացի ես»:

Պետրոսն սկսեց նզովել, երդվել և ասել. «Չեմ ճանաչում այն մարդուն, որի մասին դուք խոսում եք»: Եվ հենց նույն ժամին աքաղաղը երկրորդ անգամ կանչեց: Պետրոսը հիշեց այն խոսքը, որ Հիսուսն ասել էր իրեն. «Աքաղաղը դեռ չկանչած՝ դու երեք անգամ ինձ ուրացած կլինես»:

Եվ սկսեց արտասվել:

95. Այրի կինը քանի՞ լումա գցեց գանձանակի մեջ

ա. 5

բ. 7

գ. 2

ՀԱՍԸ

Հիսուսը, կանգնած տաճարի գանձանակի դիմաց, դիտում էր, թե ինչպե՛ս էր ժողովուրդը դրամ գցում գանձանակի մեջ: Շատ հարուստներ մեծ գումարներ գցեցին: Մի այրի կին եկավ և երկու լումա գցեց, այսինքն՝ մի նաքարակիտ: Հիսուսը, իր մոտ կանչելով իր աշակերտներին, ասաց նրանց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այն թշվառ այրին ավելի շատ գցեց, քան բոլոր նրանք, որ գանձանակի մեջ դրամ գցեցին, որովհետև բոլորն իրենց ավելորդից գցեցին, մինչդեռ նա իր չքավոր վիճակով գցեց այն ամենը, ինչ ուներ՝ իր ամբողջ ապրուստը»:

96. Ո՞վ էր Ղազարոսը

ա. Այրի կնոջ որդին էր

բ. Մարիամի և Մարթայի եղբայրն էր

գ. Հարյուրապետի ծառան էր

97. Ղազարոսը մահանալուց քանի՞ օր հետո հարություն առավ

ա. 4

բ. 3

գ. 7

համար, որպեսզի հավատան, որ դու ուղարկեցիր ինձ»: Ապա ձայն տվեց. «Ղազարո՛ս, դո՛ւրս արի»: Եվ մեռելը ելավ՝ կապված ոտքերով, ձեռքերը երիզներով պինդ ամրացված և երեսը վարշամակով պատած՝ համաձայն այդ ժամանակի սովորույթի: Հիսուսն ասաց. «Արձակե՛ք դրան և թողե՛ք, որ գնա»: Այնտեղ գտնվող մարդկանցից շատերը, տեսնելով Հիսուսի արարքը, հավատացին նրան:

Մարթան, Մարիամը և նրանց եղբայր Ղազարոսը ապրում էին Բեթանիայում:

Մի օր Ղազարոսը հիվանդացավ: Նրա քույրերը լուր ուղարկեցին Հիսուսին՝ ասելով. «Տե՛ր, քո սիրելի բարեկամը հիվանդ է»: Երբ Հիսուսը լսեց, ասաց. «Այդ հիվանդությունը մահացու չէ, այլ Աստծու փառքի համար է, որպեսզի դրանով Աստծու Որդին փառավորվի»: Երկու օր անց Հիսուսը եկավ Բեթանիա, որտեղ ապրում էին Մարիամը, Մարթան ու Ղազարոսը: Այդ օրերին Ղազարոսն արդեն մահացել էր, և արդեն չորս օր էր, ինչ թաղել էին նրան:

Բարեկամներից շատերն էին եկել Մարթային ու Մարիամին մխիթարելու: Լսելով Հիսուսի գալու մասին՝ Մարթան գնաց նրա մոտ՝ զանգատվելու. «Տե՛ր, եթե դու այստեղ եղած լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի: Բայց հիմա էլ գիտեմ, որ ինչ էլ Աստծուց խնդրես, Աստված քեզ կտա»:

Հիսուսը նրան ասաց. «Քո եղբայրը հարություն կառնի»: Մարթան նրան ասաց. «Գիտեմ, որ հարության ժամանակ՝ վերջին օրը, հարություն կառնի»:

Այդժամ Հիսուսն ասաց. «Ես եմ հարությունն ու կյանքը. ով հավատում է ինձ, թեպետ և մեռնի, կապրի: Ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի: Հավատո՞ւմ ես այս ամենին»: Մարթան ասաց նրան. «Այո՛, Տե՛ր, հավատում եմ, որ դու ես Փրկիչը, որ Աստված խոստացավ մեզ: Դո՛ւ ես Աստծու Որդին»:

Մարթան վերադարձավ տուն և Մարիամին ասաց Հիսուսի գալստյան մասին: Մարիամը վեր կացավ ու վազեց Հիսուսի մոտ, նրա հետևից վազեցին նաև բոլոր բարեկամները: Մարիամը Հիսուսի ոտքերն ընկավ և ասաց. «Տե՛ր, եթե այստեղ եղած լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի»: Երբ Հիսուսը Մարիամին և մյուսներին լաց լինելիս տեսավ, շատ տխրեց: Նա հարցրեց. «Որտե՞ղ եք թաղել Ղազարոսին»: Նրանք ցույց տվեցին գերեզմանը. մի քարայր էր՝ մուտքին մի քար դրված: Հիսուսն արտասվեց և ասաց. «Այդ քարը մի կո՛ղմ դրեք»: Հիսուսն աչքերը վեր բարձրացրեց ու ասաց. «Հա՛յր, գոհությո՛ւն քեզ, որ ինձ լսեցիր: Գիտեմ, որ ամեն ժամ լսում ես ինձ, բայց այս անում եմ շուրջս կանգնած այս ժողովրդի

98. Ո՞վ օծեց Հիսուսին

ա. Մարթան

բ. Մարիամ Մագդաղենացին

գ. Ղազարոսի ու Մարթայի քույր Մարիամը

99. Ինչո՞վ օծեցին Հիսուսին

ա. Հալվեի յուղով

բ. Նարդոսի յուղով

գ. Ձիթապտղի յուղով

100. Ի՞նչ էր խորհրդանշում Հիսուսի օծումը

ա. Հիսուսի հրեաների թագավոր դառնալը

բ. Հիսուսի թաղումը

գ. Հիսուսի հարությունը

Հիսուսը Զատկից վեց օր առաջ եկավ Բեթանիա, որտեղ ապրում էր Ղազարոսը, և որին մեռելներից հարություն էր տվել: Այնտեղ Հիսուսին ընթրիք տվեցին. սպասարկում էր Մարթան, իսկ Ղազարոսը նրա հետ սեղան նստածներից մեկն էր: Իսկ Մարիամը, մի լիտր ազնիվ նարդոսի թանկարժեք յուղ վերցնելով, օծեց Հիսուսի ոտքերը և իր մազերով սրբում էր նրա ոտքերը: Տունը լցվեց յուղի բուրմունքով: Աշակերտներից մեկը՝ Հուդա Իսկարիովտացին, որ մատնելու էր նրան, ասաց. «Ինչո՞ւ այդ յուղը չվաճառվեց երեք հարյուր արծաթ դահեկանի և չտրվեց աղքատներին»: Այս ասաց ոչ թե նրա համար, որ աղքատների համար էր հոգում, այլ որովհետև գող էր և գանձարկղն ինքն էր պահում, և ինչ, որ այնտեղ դրվում էր, ինքն էր վերցնում: Հիսուսն ասաց. «Աղքատներին միշտ ձեզ հետ ունեք և երբ ուզենաք, կարող եք բարիք անել նրանց: Բայց ինձ միշտ ձեզ հետ չեք ունենա: Այս կինն ինչ որ կարող էր, արեց. նախօրոք օծեց իմ մարմինը՝ ի նշան թաղման պատրաստության»:

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՄ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅԸ

Տպագրվում է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանում
2000 օր.: